


6/3-8

5 58



2018

ԲԺՆԱՐԱՆ

4 U 2 U t 3

ԱՐՏԵՄ (Յարութիւն) ԵՍԱՅԵԱՆ

Հրատարակութիւն

СССР

1911

613.8

6-58

1911

[illegible]

08 APR 2013

2646

101



58332-64

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ոչ որի համար գաղտնիք չէ, որ քաղաքա-
կրթութեան և լուսաւորութեան հետ համահաւա-
սար կերպով առաջ են գնում և աւելի մեծ չա-
փերով տարածվում վեներական հիւանդութիւն-
ները: Դժուար թէ գտնվի մի մարդ, նոյնիսկ գա-
ւառական խուլ անկիւններում ապրող, որը լսած
չը լինի վեներական հիւանդութիւնների անուն-
ները և գաղափար չունենայ նրանց մասին: Բա-
ցարձակ և առանց կեղծ ջէնտլմէնութեան պէտք
է ասենք, որ ներկայումս մարդկութեան մեծ տո-
կոսը վարակված է վեներական որևէ հիւանդու-
թեամբ: Ամեն մի պատահող կամ պացիէնտ խո-
սում և խորհուրդ է հարցնում սիֆիլիսի, շանկրի,
բուբոնի և տրիպէրի մասին: Ներկայ հասարակա-
կան կեանքի գայթակղեցնող և ապականիչ բազ-
մաթիւ պայմանները, խորտակելով ընտանեկան
առողջ և բարոյական կեանքի երջանիկ հիմունք-
ները, յանուն էստէտիկայի և սանձարձակ ազա-
տամտութեան՝ մարդկանց դեռ մանուկ հասակից
գայթակղեցնում և նետում են սեռական ցոփ
կեանքի ճիրանները: Պոռնկութեան և վեներա-
կան ախտերի դառնախօս ստատիստիկան հաս-
տատում է մեր ասածը. անհերքելի փաստ է, որ
մարդկութիւնը աստիճանաբար այլասեռվում է:

Ամուսնական մաքուր կեանքի և ընտանիքի քայ-
քայման պատճառով, մարդիկ դեռ ֆիզիքապէս չը
հասունացած, պատանի հասակից սկսում են հա-
սարակական տները յաճախել և կամ փողոցնե-
րում գիշերները անառակ կանանց որսալ: Բաւա-
կան չէ, որ չամուսնացած մարդիկն են դառնում
հասարակական տների մշտական անդամներ և
փողոցներում վխտացող բազմաթիւ կանանց որ-
սորդներ, այլև թամուսնացած, կնոջ և զաւակների
տէր մարդիկ էլ են յաճախում անառականոցները
և այլ անբարոյական տեղեր, և դիւրութեամբ
վարակվելով կեղտոտ ախտերով, վարակում են
իրանց կանանց. այսպիսով տուժում են ոչ միայն
անհատները, այլև քայքայվում է ընտանեկան
սուրբ կեանքը, պղծվում է ամուսնական առաջա-
տը և սերունդը այլասեւում:



I


ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

Ամորձիքներ (ձուաներ), սերմնաբեր խո-
ղովակներ, սերմնապարկեր, շագանակաձև
գեղձ, առնանդամ:

Ամորձիքները (testiculi) երկու բաւա-
կան խոշոր ձուաձև և տափակ գեղձեր են:
Նրանք պարփակված են մի ընդհանուր մը-
սապարկում և առնանդամի տակից երկու
ոտքերի արանքներում կախված են: Այս
ամորձիքը մի քիչ փոքր է ձախից և սրանից
բարձրն է գտնվում:

Ամորձիքը մի փափուկ մարմին է, որ
բաղկացած է բազմաթիւ կոնաձև մանր
մասնիկներից. իւրաքանչիւր մասնիկ ունի
իր արտահանիչ խողովակը. մանրագոյն խո-
ղովակները միախառնվելով աստիճանաբար
կազմում են աւելի խոշոր խողովակներ, ո-
րոնք իրանց հերթին միանալով կազմում են
այսպէս կոչված մակամորձիքը: Մակամոր-
ձիքի վերին հաստ մասը կոչվում է մակա-

մորձիքի գլուխ, իսկ յետևի աւելի բարակ մասը—պոչ, որից և սկիզբն է առնում սերմը արտահանող մեծ խողովակը: Վերջինս



1. Անդամի գլուխ: 2.2.2. Մորոչաւոր մարմիններ: 3. Անդամի կաշին: 4.4.4. Միզանցք: 5. Միզապարկ: 6. Սերմնացալո խողովակ: 7. Սերմնապարկ: 8.8.8. Փոր: 9. Սերմնատար խողովակ: 10. Կուպէրեան գեղձ: 11. Մակամորձիքի գլուխ: 12. Ամորձիք (ձու): 13. Մակամորձիքի պոչը: 14. Շագանակաձև գեղձ: 15. Միզաբեր խողովակ: Նկար 1

դուրս գալով ամորձիքապարկից բարձրանում է դէպի ածուկը (пахъ) և միախառ-

նվելով նեարդերի, արեան և աւշային անոթների հետ, կազմում է այսպէս կոչված սերմնապարանը (сѣмянной канатикъ): Ապա բաժանվելով ջրերից ու անոթներից զնում է դէպի միզապարկի յետին և ստորին կողմը և այստեղ հանդիպելով իր զոյգի հետ մըտնում է սերմնապարկի մէջ:

Սերմնապարկերը (vesiculae seminalis) պարկաձև մարմիններ են, որոնք գտնվում են միզապարկի և ուղիղ աղիքի միջնավայրում, միզանցքի աջ ու ձախ կողմերում: Սերմնաբեր խողովակը իր բերած սերմը ամբարում է սերմնապարկի մէջ: Սերմնապարկերից բացվում են սերմնացալո խողովակներ, որոնք սերմը ցայտեցնում են դէպի միզանցքը:

Շագանակաձև գեղձը (glandula prostata) թաղված է մսի շերտի մէջ և գրանվում է միզանցքի սկզբում, օղաձև ընդգրկելով միզապարկի պարանոցը: Նա իր ձևով շատ նման է շագանակի, ուստի և կոչվում է շագանակաձև գեղձ: Նա բաղկացած է 30—35 ողկուղաձև մասերից, որոնցից բացվում են արտահանիչ խողովակներ միզանցքում՝ սերմնախողովակներին կից: Այս գեղձն էլ արտադրում է սպիտականման հե-

ղուկ, որը խառնվում է սերմի հետ: Շագանակաձև գեղձին կից գտնվում են երկու փոքրիկ գեղձիկներ—*Կուպերեան գեղձիկները*, որոնք նոյնպէս արտադրում են հեղուկ:

Առնանդամը կամ *վարոցը* (penis) կազմում է միգասեռական անցքի արտաքին մասը: Նա երկարաձև, կլորակ և մսապատ խողովակ է, որի միջով անցնում են մէզը և սերմը: Բնութիւնը հիանալի ճարպիկութեամբ համերաշխօրէն միացրել է առնանդամի մէջ երկու տարբեր ֆունկցիաներ: Առնանդամի երկարութիւնը հանգիստ միջոցին լինում է 2—4 դիւյմ. հաստութիւնը 6—15 դիւծ: Իսկ կանգնած ըոպէին նա դառնում է $1\frac{1}{2}$ կամ կրկնակի: (Աւելի երկար կամ սաստիկ փոքր առնանդամը մարմնի արատ է): Առնանդամը արտաքին կողմից պարուրված է վերնամաշկով, որի տակ գտնվում է մկանային խաւը, ապա հետևում է նեարդային շերտը. իսկ ամբողջ միջին մասը բաղկացած է բազմաթիւ խոռոչաւոր մասերից, որոնց պատերը բաւական առաձրգական են: Խոռոչաւոր մարմինների մէջ գտնվում են սաստիկ մեծ քանակութեամբ արեան մանր անօթներ, որոնք ընդունակ են վայրկենաբար լայնանալ ու լցվել արեան


մեծ քանակութեամբ: Ահա արեան այս լրցումն և առաջացնում է առնանդամի կանգնումը: Որքան շատ լայնանան արեան անօթները և լցվեն մակընթաց արիւնով, այնքան աւելի ուժեղ կըլինի առնանդամի կանգնումը—*էրէկցիան*, և ընդհակառակն: Առնանդամի սկզբի մասը կոչվում է *արմատ*, որը ծածկված է լինում մազերով, միջին մասը—*ըուն*, իսկ վերջաւորութիւնը՝ *գլուխ*: Բունը և գլուխը զուրկ են լինում մազերից: Գլուխը բաղկացած է խոռոչաւոր մարմիններից, ինչպէս բունը, այլ սպինգաձև մասերից, որոնք նոյնպէս լայնանում և լցվում են արիւնով, սակայն աւելի պակաս աստիճանի, քան խոռոչաւոր մարմինները: Փորի կաշին իջնելով ծածկում է առնանդամը, և հասնելով նրա գլխին, չէ ձուլվում, այլ շարժուն կերպով բացում և ծածկում է գլուխը: այս մասը կոչվում է *թլպատ* (praeputium): Թլպատը առնանդամի ստորին մասում ձուլվում է գլխի հետ և կազմում է *թլպատակապ* (frenulum):

I I.

Տ Ր Ի Պ Ե Ր

(ՍՈՒՍՈՒՆԱԿ)

Վեներական ախտերից ամենատարածվածն է տրիպերը (սուսուկնակ): Թե տղամարդկանց և թե կանանց մեծ մասը վարակված է կամ թե եղել է վարակված տրիպերով: Այս հիւանդութիւնը ինքնաձին չէ, այլ անցնող, վարակող: Հիւանդութիւններից շատերը վարակիչ են շնորհիւ փոքրիկ, հասարակ աչքերին անտեսանելի կենդանիների, որոնք կոչվում են միկրօֆներ կամ բացիլներ: Սրանք տեսանելի են դառնում միմիայն մանրադիտակի



Նկար 2.

1) Տրիպերի թաղախը և նրա մէջ գտնվող միկրօպները—գոնիօկները:

(МИКРОСКОПЪ)
տակ: Իւրաքանչիւր հիւանդութեան բացիլ ունի իր անունը:

Տրիպերի վարակող բացիլը կոչվում է գոնիօկ: Երբ տղամարդը սեռական մերձաւորութիւն է ունենում տրիպերով վարակվան կնոջ հետ, գոնիօկները շփման միջոցին թափանցում են միզանցքը և այդպիսով հիւանդութիւնը պատվաստում: Եթէ տղամարդն է հիւանդ տրիպերով, նա կարող է վարակել առողջ կնոջը. ուրեմն տրիպերի վարակումը լինում է փոխադարձաբար:

Տրիպերն այնքան տարածված և սովորական ախտ է դարձել, որ յաճախ մարդիկ նրան լուրջ նշանակութիւն չեն տալիս և պառակտական դեղերով կամ թէ «բարեսիրտ» ընկերների ձեռքէձեռք անցնող բէցէպտներով են բուժականում, որով աւելի հնացնում են ցաւը և դարձնում խրօնիքական: Մինչդեռ տրիպերը չը բժշկվելու դէպքում լուրջ հիւանդութիւն է և կարող է առաջացնել այլևայլ բարդութիւններ ծանր հետևանքներով:

1

ՏՐԻՊԼԵՐԻ ՎԱՐԱԿՄԱՆ ՆՁԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԵՏԵ-
ԻԱՆՔՆԵՐԸ

Երբ գօնօկօղները մտնում են առնան-
դամի միզանցքը, նրանք բոյն են դնում
այնտեղ և բազմանում են: Ապա նրանք վը-
նասում և բորբոքում են միզանցքի թաղան-
թը: Ուրիշ խօսքով տրիպլերը ոչ այլ ինչ է,
եթէ ոչ միզանցքի թաղանթի բորբոքումը:
Տրիպլերը իսկոյն չէ բացվում, այլ վարակ-
ման ժամից անցնում է որոշ ժամանակա-
միջոց մինչև հիւանդութեան երևալը: Այս
միջոցը տևում է սովորաբար 2—7 օր և կոչ-
վում է սկզբնական գաղտնի շրջան (инку-
бационный период): Գօնօկօղների սիրած
տեղը մեծ մասամբ միզանցքում անդամա-
զլիքից փոքր ինչ հեռու է, թլպատակապի
ուղղութեամբ: Համարեա միշտ տրիպլերի
այրոցը և ցաւերը կենդրոնանում են այդտե-
ղում: Թոյնի ներս ընկնելուց միքանի օր
յետոյ միզանցքում զգացվում է մի տեսակ

զգայնութիւն և խտտանք, որ յաճախ նման
է հեշտանքի զգացմունքին: Ոմանք զգում
են մի տեսակ ծանրութիւն յետանցքի մէջ,
աճուկներում. շատերն էլ գանգատվում են
ճնշված և վատ տրամադրութեան վրայ: Հե-
տըզհետէ խտտանքը փոխվում է ցաւի. այ-
նուհետեւ՝ վարակված մարդը միզելիս զգում
է այրոց և ցաւ, որոնք գնալով աւելի են
նաստկանում: Սրանք շուտով հասնում են
այն աստիճանի, որ հիւանդը տանջվում է
միզելիս. նա խուսափում է միզելուց և աշ-
խատում է մէզը երկար պահել: Միզելու
ժամանակ ցաւի և այրոցի աւելի սաստկա-
նալը բացատրվում է նրանով, որ մէզի անց-
նելիս նրա մէջ գտնվող զանազան աղերը և
լուծվածքները զրգռում են տրիպլերի խոցը
և ուժեղացնում բորբոքումը: Շուտով ուռ-
ջում են միզանցքի վերջաւորութիւնը և ան-
դամի շրթունքները, որոնք կարմրում են և
զգայուն դառնում: Ապա միզանցքից երե-
վում է կաթիլ-կաթիլ՝ բաց-դեղնականաչա-
գոյն թարախ, որը օրէցօր թանձրանում է,
կանաչ գոյն ստանում և առատօրէն հոսում:
Հոսանքը շարունակաբար լինում է թէ ցե-
րեկ և թէ գիշեր: Այդ թարախը վարակիչ
է, որովհետեւ նրա մէջ գտնվում են տրի-

պէրի բացիւները-գօնօկօկները: Յաճախ թա-
րախի հետ երևում է և արիւն: Տրիպէրի այս
շրջանը, առատ թարախահոսութեամբ, այրո-
ցով և ցաւերով, կոչվում է սուր կամ սրըն-
թաց շրջան: Այս ժամանակ տրիպէրի վէր-
քի շնորհիւ յաճախ անդամը փոքր ինչ ծռ-
վում է գլխի մօտից. այս բանը աւելի նկա-



Նկար 3

Տրիպէրով հիւանդ առնանդամ, որը
փոքրիկն է և թարախը հոսում է
նրա միջից:

տելի է լի-
նում ան-
դամի գլը-
գոված
միջոցին,
այսինքն
կանգնու-
մի ընդ-
ին: Գի-
շերները
անկող-
նում, եր-
բեմն էլ
ցերեկը, անդամը շարունակ կանգնում է և
շատ անհանգստացնում հիւանդին, նոյնիսկ
այն աստիճան, որ քունը կտրվում է և հի-
ւանդը անց է կացնում անքուն գիշերներ:
Այս հանգամանքը կարող է վատ ազդել թու-
լակազմ հիւանդի վրայ, մաշելով նրան: Երբեմն

էլ տեղի է ունենում և կրկնվող երազախաբ,
որը նոյնպէս անհանգիստ է անում հիւանդին:
Ընդհանրապէս սուր տրիպէրի բորբոքված նը-
շաններն ու ցաւերը տևում են 10—20 օր: Այ-
նուհետև այրոցը և ցաւերը նուազում են, մի-
գելիս միայն զգալի է լինում թեթև ծակոց.
անդամի ցաւոտ կանգնումը տեղի է ունենում
ուշ-ուշ և թարախն էլ պակասում է, դառնում է
դեղնա-սպիտակագոյն, և վերջի վերջոյ ստա-
նում է լորձոնքի կերպարանք: Այս հան-
համանքը նշան է տրիպէրի բարեյաջող վախ-
ճանի: Եթէ հիւանդը բժշկվում է բանիմաց
և բարեխիղճ բժշկի մօտ, ճշտութեամբ կա-
տարելով նրա տված ցուցմունքները, այն
ժամանակ տրիպէրը բժշկվում է 5—8 շա-
բաթում, ուրիշ խօսքով 1—2 ամսի ընթաց-
քում: Իսկ երբ հիւանդը գործ է ածում տը-
նային հէքիմների, մօլլանների ու դալլաքների
ֆլասակար դեղերը և չի պահում ուտելի-
քի-խմելիքի որոշ ըէժիմ, դիէտա, այն ժա-
մանակ տրիպէրը չէ բժշկվում և դառնում
է խրօնիքական, այսինքն երկարատև: Առ-
հասարակ, երբ տրիպէրը անուշադիր մնա-
լով, իր գոյութիւնը պահում է 2 ամիս, նա
անպայման խրօնիքական բնաւորութիւն է
ստանում: Այսպիսի դէպքերում նրա բունը

կարող է լինել թէ միզանցքի սկզբում և թէ վերջում:

Հնացած կամ խրոնիքական տրիպերի ժամանակ բացակայում են սուր տրիպերի խիստ արտայայտութիւնները: Թարախը հոսում է շատ քիչ քանակութեամբ, օրական մի քանի կաթիլ, և այն էլ մեծ մասամբ քրնից յետոյ առաւօտեան է երևում միզանցքի ծայրին: Սակայն օդի, գարեջրի, երազախաբի ու սեռական կրկնվող մերձաւորութիւնների ազդեցութեան ներքոյ թարախը կարող է շատանալ, և ընդհակառակն, չափաւոր կենցաղավարութեան ու ժուժկալութեան միջոցին կարող է գրեթէ անհետանալ: Բայց և այնպէս հիւանդը միզանցքի մէջ միշտ զգում է մի տեսակ աննօրմալ զգացմունք, ծանրութիւն յետանցքում և շատ ուշ միզելիս՝ այրոց: Դժբաղդ կը լինի այն մարդը, որ ժամանակին հիմնաւորապէս չի բժշկիլ սուր տրիպերը և նրան կը դարձնէ խրոնիքական. և աւելի թշուառ է նա, ով ունի խրոնիքական տրիպեր, ու նրան մի չնչին ցաւ համարելով, չի դիմիլ հմուտ բժշկի օգնութեանը: Պէտք է գիտենալ, որ թէ սուր եւ թէ խրոնիքական տրիպերը անալայման ըուժելի է, եթէ միայն հիւանդը

ամբողջովին նուիրվի բժշկութեան և ճշտիւ կատարէ բժշկի խորհուրդները: Իսկ եթէ բժշկվելիս նա շարունակէ հարբեցողութիւն, անբարոյականութիւն և աննօրմալ կեանք, դրանով բժշկի շինածը ինքը կը քանդէ, և տրիպերը ամուր կը մնայ իր տեղում:

Ահա թէ ինչ է ասում պրօֆ. Պէտերսօնը խրոնիքական տրիպերի մասին. «Թոյնը, ապրելով օրգանիզմի մէջ, չէ կարող չըբայքայել նրան: Նա այս կատարում է դանդաղ, աստիճանաբար, աննկատելի կերպով, բայց և այնպէս նա անում է այդ բանը: Եւ իրօք. հիւանդը ժամանակի ընթացքում դառնում է թմրած, խղճալի: Նրա մէջ երևան են գալիս մեղամաղձոտութիւն և անբացատրելի թախիծ: Նրա եռանդը հանգչում է. նա վերջիվերջոյ դառնում է ֆիզիքական ու մտաւոր երկարատեւ աշխատանքի անընդունակ: Զղայնութեան մի շարք երևոյթներ զարգանում են խրոնիքական տրիպերի հոդի վրայ: Այս հիւանդութիւնը, որ հասարակութիւնը սովորել է համարել «աննշան», մինչև անգամ «չնչին», կրկնում ենք, ներ-

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧЕВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



գործում է դրականապէս: Նրա վերջնական
հետեանքը լինում է ամբողջ կազմվածքի ա-
ւելի կամ պակաս քայքայումն»:



III

ՏՐԻՊԵՐԻՑ ԱՌԱՋԱՅԱԺ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ՏՐԻՊԵՐԻ ԱՌԱՋԱՂԱՅՈՒԹԻՒՆԸ

Միզանցքի սկզբի մասից թարախի հետ
գծնօկօկները կարող են գնալ դէպի միզանց-
քի խորքերը և այնտեղ էլ բանալ տրիպէրի
վէրք: Այսպիսով հիւանդութիւնը կրկնա-
պատկվում է և գործը աւելի լուրջ կերպա-
րանք ստանում: Թարախահոսութիւնը, այ-
րոցը, ծակոցներն ու ցաւերը կրկնակի սաստ-
կանում են և բաւական ընկճում հիւանդին:
Այն ժամանակ կարող է առաջ գալ տաքու-
թիւն. անհանգիստ դրութիւն և դիւրագգա-
ցութիւն:

2. ՇԱԳԱՆԱԿԱԶԵԻ ԳԵՂՁԻ ԲՈՐԲՈՒՄՆ

Գծնօկօկները դիւրութեամբ կարող են
անցնել դէպի գեղձերը և նրանց բորբոքել:
Ամենից յաճախ բորբոքվում է շագանակա-
ձև գեղձը, որ գտնվում է յետանցքի և մի-

զանցքի միջավայրում: Հետզհետէ նա ուռ-
չում է, ցաւում և հիւանդին նեղութիւն
պատճառում: Արտաթորելիս յետանցքի մէջ
զգացվում է ճնշող ծանրութիւն և ցաւ, որ
տարածվում է դէպի աճուկները և միզանց-
քը: Երբ շագանակաձև գեղձը շատ է ուռ-
չում, մեծանում և միզանցքը նեղացնում,
այն ժամանակ դժուարանում է միզելը. մէ-
զը հոսում է բարակ հոսանքով և երբեմն էլ
կաթիլ-կաթիլ: Գեղձի խիստ բորբոքումից
նրա մէջ կարող է գոյանալ թարախ, որը
բացվում է մեծ մասամբ դէպի միզանցքը,
իսկ հազուադէպ նաև դէպի յետանցքը: Ան-
հրաժեշտ է գիտենալ, որ շագանակաձև գեղ-
ձի մէջ տրիպէրի թարախը կարող է մնալ
շատ երկար ժամանակ և այդպիսով օժան-
դակել խրոնիքական տրիպէրի գոյութեանը:
Ուստի տրիպէրի բժշկութեան միջոցին բը-
ժիշկը շագանակաձև գեղձին մասսաժ է ա-
նում յետանցքից, որով թէ իջնում է նը-
րա բորբոքումը և թէ ճնշումով դուրս վը-
նատում նրա մէջ թագնված թարախը:

3. ԱՄՈՐԶԻՔՆԵՐԻ (ՁՈՒԱՆԵՐ) ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի յաճախակի բարդութիւններից
մէկն էլ ձուանների բորբոքումն է: Սա գըլ-
խաւորապէս առաջանում է հիւանդի հակա-
բժշկական կենցաղից և աւելորդ շարժողու-
թիւններից: Օրինակ, երբ տրիպէր ունեցած
ժամանակ հիւանդը գործ է ածում օդի, գի-
նի, զարեջուր, երբ նա ոտքով շատ է ման-
գալիս, ձի է հեծնում, կամ սուսանակի մի-
ջոցին շարունակում է յաճախել կանանց
մօտ, համարեա անխուսափելի կերպով ստա-
նում է ամորձիքների բորբոքում: Բացի վե-
րոյիշեալ պատճառներից, երբ հիւանդը ին-
քնիրան սրսկումներ է կատարում, բայց չը
գիտէ այդ գործողութեան անհրաժեշտ պայ-
մաններն ու ձևերը, առաջացնում է ձուա-
ների բորբոքումն: Սովորաբար բորբոքվում
է մէկ ձուն և շատ քիչ դէպքերում երկու-
սը միասին: Իրօք ձուն չէ հիւանդանում
սկզբից: Ելլ նախ բորբոքվում է մակամոր-
ձիքը, որ ուռչում է, ցաւում, հաստանում
և որի ցաւերը անցնում են ձուին, որը յե-
տոյ միայն ուռչում է և ցաւում. այս բա-
նը շատերը չը գիտեն, ուստի և կարծում
են, թէ բորբոքվել է ձուն:

Ամորձիքի, աւելի ճիշտը, մակամորձիքի, բորբոքման միջոցին նկատվում են զըր-
գոված դրութիւն, տաքութիւն, ճնշված տը-
րամադրութիւն և ջղային երևոյթներ: Բոր-
բոքված ձուն հետզհետէ ուռչում է, մեծա-
նում և ցաւում: Յետանցքում և շէքերի
մէջտեղում զգացվում է ծանրութիւն, ծա-
գում է շուտ-շուտ միզելու ցանկութիւն:
Երբեմն էլ գիշերը տեղի է ունենում ցա-
ւոտ երազախաբ: Վերջ ի վերջոյ ուռոյցքը
և ցաւը հասնում են այն աստիճանի, որ հի-
ւանդը սաստիկ տանջվում է, զրկվում քնից
ու կերակրից. իւրաքանչիւր թեթեւ շարժու-
մըն անգամ սաստիկ ցաւ է պատճառում.
ոտքը ոտից չի կարողանում փոխել և ստիպ-
ված է լինում անկողին մտնել: Ուռոյցքը
կարող է հասնել բռունցքի մեծութեան, որի
ժամանակ կարմրում, ուռչում է նաև ա-
մորձիքապարկը: Կատաղի ցաւերն ու տան-
ջանքները սովորաբար տևում են միբանի
օր, որից յետոյ կամ իրանքիրանց և կամ
դեղերի ազդեցութեամբ նուազում են ու
հանգիստ տալիս հիւանդին: Երբեմն նրանք
վերանորոգվում են զանազան պատճառնե-
րից, օրինակ՝ ուժեղ շարժումներից, պա-
րելուց, մրսելուց, ձուաների կապ չըկրե-

լուց, սեռական յարաբերութիւններից և այլն:
Պէտք է ասենք, որ ձուն բորբոքվելուց և
բժշկվելուց յետոյ յաճախ կարող է անըն-
դունակ դառնալ սերմնակենդաններ արտա-
դրելու. իսկ եթէ երկու ձուերն էլ բորբոք-
վեն, մարդ կը դառնալ ամուլ. այնուհետե
նա չի կարող զաւակներ արտադրել. նը-
րա սերմը չի կարող բեղմնաւորել: Բացի
այդ յաճախ բորբոքումից յետոյ մակամոր-
ձիքը մնում է կարծրացած, սերմնատար խո-
ղովակները սղմված և կծկված:

Ձուաներն ուռչելու դէպքում իսկոյն
մտնել անկողին, քիչ շարժվիլ, Վերցնել
СВИНЦОВАЯ ВОДА, մէջը թաթախել մի շերտ
բամբակ և դնել ուռած ձուի վրայ, թռչե-
լով 2—3 ժամը մի անգամ: Ցաւերը հան-
դարտվելուց յետոյ վերցնել Мазь Иодиста-
го Кали և զգուշութեամբ քսել ձուին:
Տաքութեան ժամանակ ընդունել 8-գրան
խինին, օրը 2 անգամ:

4. ՄԻԶԱՊԱՐԿԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Վարակիչ թարախը մտնելով միզա-
պարկը, զրգուում է պարկի թաղանթը և

բորբոքում: Հիւանդը ցաւեր է զգում մի-
զանցքի խորքերում, անհանգիստ է լի-
նում և շուտ-շուտ կարիք զգում միզելու.
սակայն իւրաքանչիւր անգամ հոսում է շատ
քիչ մէզ, նոյնիսկ միքանի կաթիլ: Բորբոք-
ված միզապարկի մէջը միշտ լինում է պըղ-
տոր. և եթէ այդ մէջը բաժակում լցված
մնայ երկար ժամանակ, նրա յատակում կը
նստեն բաւականաչափ տականք և թարա-
խոտ մասնիկներ:

5. ԽՈՇՈՐ ԹԱՐԱԽԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԻՋԱՆՑ- ՔՈՒՄ

Սուսունակի թոյնը բացի բորբոքում
առաջացնելուց միզանցքի մէջ ռիւ է տե-
ղում կարող է բանալ խոր վերք, որը հետզ-
հետէ մեծանում է, ուռչում և լցվում թա-
րախով: Վերջ իվերջոյ ուռոյցը պատուվում
է և թարախը դուրս հոսում: Թարախը բաց-
վում է կամ միզանցքում և կամ թէ շէքե-
րի արանքում, անդամի արմատի տակ. այս-
պիսով գոյանում է մի ուրիշ անցք միզա-
խողովակից դէպի շէքերը, որտեղից հոսում
է թարախ, արիւն և մէզ: Բարեբաղդաբար

այս երևոյթը տրիպէրի հազուադէպ բար-
դութիւնն է, որը սակայն ծանր է և երկա-
րատե: Եթէ հիւանդը կանոնաւոր կերպով
չը բժշկվի, այն ժամանակ վերքի շնորհիւ
կարող է առաջանալ արեան թարախոտ վա-
րակումն ու մահ:

6. ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՄԻՋԱՆՑՔԻՑ

Երբ տրիպէրի խոցը խորունկ է լինում,
այն ժամանակ թարախի հետ երևում է նաև
արիւն, որը հոսում է քիչ քանակութեամբ,
կաթիլ կաթիլ: Եթէ հիւանդը իրան հանգիստ
չէ պահում և շարունակ շարժողութիւննե-
րի մէջ է, այն ժամանակ արիւնհոսութիւ-
նը կարող է աւելանալ: Արիւնը երբեմն ե-
րևում է նաև միզապարկի. խիստ բորբոք-
ված միջոցին:

7. ԱԶՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ ՍՈՒՍՈՒՆԱԿԻՑ

Եթէ տրիպէրով հիւանդը մի անմաքուր
մարդ է, նա հեշտութեամբ կարող է վա-
րակել իր աչքերը տրիպէրի թարախով, նա-
մանաւանդ, որ աչքերը սաստիկ տրամադըր-
ված են վարակվելու սուսունակի թոյնով:
Երբ թարախոտ ձեռքերով շփում են աչքե-

ըր, թարախը քսվում է աչքերին և բորբոքում նրանց. թաղանթը: Նրանց արանքից հոսում է թարախ, որը սկզբում արիւնանման և ջրալի է լինում, իսկ յետոյ դառնում է թանձր, կանաչագոյն և նմանվում է սուսուռնակի թարախին: Աչքերի տակ առաջանում են ցաւեր, որոնք տարածվում են դէպի ճակատը և ծոծրակը: Հիւանդը ընկնում է անհանգիստ դրութեան մէջ, կորցնում է ըունը, երբեմն տաքութիւն տալիս: Եթէ անուշադիր թողնել հիւանդութիւնը, կարելի է զրկվել տեսողութիւնից. ուստի աչքերի բորբոքման դէպքում իսկոյն պէտք է դիմել ակնաբոյժի: Քանի որ ներկայումս տրիպէրը սաստիկ տարածված է և կանանց մէջ, ուստի այժմ քաղաքակիրթ տեղերում երեխայի ծնվելու ժամանակ իսկոյն մի տեսակ դեղ են կաթեցնում աչքերի մէջ. սա այն նպատակով է, որ եթէ մօր բունոցը տրիպէրով կամ այլ հոսանքով վարակված լինի, երեխան անցնելիս թարախը կարող է քսվել նրա աչքերին ու վարակել. ուստի նախազգուշութեան նպատակով էլ կաթեցվում է յիշեալ դեղը:

8. ԵՐԻԿԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի թոյնը երբեմն միզանցքից, միզապարկով ու միզաբեր խողովակներով բարձրանում է դէպի երիկամուկները և նրանց հիւանդացնում: Երիկամուկների բորբոքումը, ինչ պատճառից էլ որ ծագած լինի, լուրջ հիւանդութիւն է. բացի այդ մէկ անգամ արդէն հիւանդացած երկամուկները տրամադրվում են թեթեւ պատճառներից նորէն բորբոքվել: Նրանց մէջ կարող է գոյանալ խոշոր ու մանր թարախակալութիւններ, որոնք բժշկվում են օպէրացիայի միջոցով և երբեմն կործանում հիւանդի կեանքը:

9. ՅՕԴԵՐԻ ՍՈՒՍՈՒՆԱԿԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

Տրիպէրի ժամանակ երբեմն բորբոքվում են նաև մտրմնի այլ և այլ յօդերը: Գօնօկօկները արեան կամ աւշային անօթների միջոցով ճանապարհորդում են և ընկնելով որևէ յօդի մէջ, բորբոքում են նրան: Գօնօկօկի սիրած տեղն է ծնկների ծալուածքը, ուստի աւելի յաճախ բորբոքվում են ծնկայօ-

դերը, իսկ հազուադէպ՝ ոտքերի, արմունկների, ուսերի և այլ յօդերը: Նկատված է, որ յօդերի սուսուռնակային բորբոքումը աւելի պատահում է տղամարդկանց մէջ, քան թէ կանանց: Մեծ մասամբ վնասվում է միայն մէկ յօդը: Տրիպէրի սկզբում կամ վերջում, առանց որևէ նախանշանների յանկարծ յօդի մէջ զգացվում է ցաւ և ուռոյցը: Յօդի շարժողութիւնը հետզհետէ դժուարանում է և ցաւեր առաջացնում: Ուռոյցը արագ զարգանում է և բաւական մեծանում: Բորբոքման սկզբին ուռոյցքի կաշին իր բնական գոյնը չէ փոխում. սակայն երբ ուռոյցքը մեծանում է, հասունանում, այն ժամանակ առաջ են գալիս սուր բորբոքման նշանները, այսինքն կաշին կարմրում է, ուռած յօդի ջերմութիւնը բարձրանում, արեան անօթները լցվում են: Պատահում է, որ այս շրջանում միզանցքի թարախահոսութիւնը պակասում է: Տրիպէրային հասունացած յօդացաւը նմանվում է սուր բէվմատիզմի յօդացաւին: Այս երկու դէպքերը միմիանցից որոշելը դժուար չէ. երբ մարդունի տրիպէր, որի ժամանակ յանկարծ առանց ցաւի և ջերմի որևէ յօդը ուռչում է, դա անպայման տրիպէրային բորբոքումն է:

Բացի այդ տրիպէրային յօդացաւը մնում է երկար միջոց և դժուար է բժշկվում. մինչդեռ բէվմատիզմի յօդացաւը շատ շուտ անցնում է սօլիցիլեան նատրի ու թթւութի գործածելուց:

10. ՄԻԶԱՆՑՔԻ ՆԵՂՈՒԹԻԻՆ (ՍՏՐԻԿՏՈՒՐԱ)

Տրիպէրի տանջող հետևանքներից մէկն է միզանցքի նեղութիւնը: Միզանցքի պատերը սուսուռնակի թոյնի ներգործութիւնից կոպտանում են, հաստանում, կծկվում և այդպիսով անցքը նեղացնում: Սուր տրիպէրի միջոցին առաջացած ստրիկտուրան մեծ մասամբ ժամանակաւոր է լինում և անցնում է տրիպէրը բժշկվելուն պէս. սակայն խրօնիքական տրիպէրից առաջացած միզանցքի նեղութիւնը երկարատե է լինում և չէ անցնում առանց մասնաւոր բժշկութեան: Նեղանալ կարող է միզանցքի թէ առաջին և թէ յետին մասը: Այն ժամանակ մէզը չէ կարողանում ազատ կերպով և իր բնական բանակութեամբ դուրս հոսել, այլ նա անցքի սղմված լինելու պատճառով հոսում է նեղ հոսանքով, երբեմն էլ կաթիլ-

կաթիլ, և ճնշելով միզանցքի պատերին առաջացնում է ցաւեր: Պատահում է, թէ և հագուադէպ, որ մէզը բոլորովին կապվում է: Սրանից կարող է ծագել միզապարկի բորբոքումն, մէզի ղողռոց պարկի մէջ, ծակոցներ, ծանրութիւն փորի ստորին մասերում և այլն: Մէզը երկար ժամանակ մնալով միզապարկում, իր կեղտերով և քնասակար լուծուածքներով մինչև անգամ կարող է առաջացնել արեան վարակումն և մահ: Վերոյիշեալ ասածներից երևում է, որ միզանցքի նեղութիւնը բաւական ծանր երևոյթ է:

11. ԾԱԿՈՑՆԵՐ, ԱՅՐՈՑՆԵՐ ԵՒ ԱՆՀԱՃՈՅ ԶԳԱՅՄՈՒՆՔՆԵՐ ՄԻԶԱՆՅՔՈՒՄ


Լաւ չը բժշկված տրիպէրից յետոյ երկար ժամանակ, տարիներ սւ տասնեակ տարիներ, միզանցքի մէջ երբեմն երբեմն զգացվում են ծակոցներ, ցաւեր և այլ աննորմալ երևոյթներ, որոնք մեծ մասամբ կենդրոնանում են տրիպէրի խոցի տեղում: Յիշեալ ծակոցները աւելի զգալի են լինում սեռական յարաբերութիւններից, երազախաբից, հարբեցողութիւնից յետոյ, գարեջուր խմելու և այլն: Երբեմն այս ցաւերն այնքան են

սաստկանում, որ տարածվում են դէպի միզապարկը, յետանցքը, և հիւանդին թւում է, թէ սուր տրիպէրը նորոգվել է: Սակայն շուտով նրանք մեղմանում են և անցնում առանց բժշկութեան: Մի խօսքով տրիպէրով վարակված մարդը, նամանաւանդ մի քանի անգամ հիւանդացած և բժշկված քէպքերում, երկար ժամանակ կրում է տրիպէրի թողած յիշատակները:

12. ԱՆԴԱՄԻ ԳԼՆԻ ԵՒ ԹԼՊԱՏԻ ԲՈՐԲՈՒՄՆ

Հիւանդի անմաքրութեան շնորհիւ տրիպէրի թարախը, հաւաքվելով թլպատի արանքում կարող է առաջացնել անդամի գլխի և թլպատի ներքին պատերի բորբոքումն: Սա կոչվում է քալեանիտ: Այս հիւանդութեանը նպաստում է այն հանգամանքը, երբ թլպատը շատ երկար է, ծածկում է անդամի գլուխը և ճեղքի նեղութեան պատճառով յետ չէ քաշվում, կամ թէ երբ թլպատը շատ կարճ է, միշտ անդամի գլխի յետևումն է կծկված և առաջ չէ քաշվում ու ծածկում անդամը: Առաջին դէպքում, այսինքն երբ թլպատը մեծ է և յետ


չի բաշվում, թարախը ընկնելով նրա տակը, բորբոքում է, ուռցնում և առաջացնում թարախահոսութիւն: Այսպիսի դէպքում իսկոյն պէտք է դիմել բժշկի, որը փոք-



Նկար 6.

Տրեպէրից՝ Խրկար
թլպատը և առն-
անդամի գլուխը
ուռած:

րիկ օպէրացիայի միջոցով թլպատը կը կտրէ, յետ կը բաշէ և կը մաքրէ նրա տակը: Երկրորդ դէպքում, այսինքն երբ թլպատը կարճ է, բորբոքվելով, նա ուռչում է, հաստ օղակների ձևով մնում է անդամի գլխի յետևում. հասկանալի է, որ քայլելու ժամանակ շորերին քսվելով ուռոյցը սաստիկ ցաւում է: Երբեմն էլ միաժամանակ ուռչում են և բորբոքվում թէ՛ թլպատը և թէ՛ անդամի գլուխը, և իհարկէ աւելի մեծ տանջանքներ պատճառում հիւանդին: Այսպիսի դէպքերում իսկոյն պէտք է անկողին մըտնել և հրաւիրել մասնագէտ բժշկի: Իսկ նախագգուշութեան համար անհրաժեշտ է օրական մի քանի անգամ բօրակաթթուի՝ (борная кислота) մէկ թէյի գդալ մէկ բաժակ ջրի մէջ՝ դօլ լուծվածքով լուանալ անդամը,



Նկար 7.

Յետ քաշուած և ուռած
թլպատը:

ծայրին դրած ունենալ մաքուր բամբակ, որը շուտ-շուտ փոխել և ձեռքերը լաւ լուանալ կօրօրեան սապոնով:

13. ԲՈՒԲՕՆ ՏՐԴԷՐԻՑ (BUBO)

Պատահում է, որ տրեպէրի թարախը արեան կամ թէ՛ աւշային անօթների միջոցով անցնում է և մտնում աճուկների փոքրիկ խուլերի մէջ, բորբոքում է նրանց, ուռցնում և առաջացնում թարախակալութիւն, որը կոչվում է ըուքօն: Հէնց որ նկատվում է փոքրիկ ուռոյցք աճուկի մէջ և ցաւ, իսկոյն պէտք է հանդիստ մնալ, աւելի լաւ է պառկած դրութիւն: Որպէսզի թոյլ չը տալ ուռոյցքի մեծանալուն և թարախակալութան, պէտք է սառը կօմպրէսներ կամ թէ՛ սառոյց դնել աճուկի վրայ: Եթէ այսպիսով չի անցնում, այն ժամանակ պէտք է նպաստել ուռոյցքի շուտ հասունանալուն և բացվելուն: Այս նպատակով օրական մի քանի անգամ դրվում է տաք կօմպրէս կամ թէ՛ կրտաւատի ծեծած ու եփած սերմը շորի մէջ

լցրած: Շատ քիչ դէպքերում հասունացած ուռույցքը ինքնիրան է պատռւում: Աւելի լաւ է բուբոնի դէպքում իսկոյն դիմել բժշկի, որը կըճեղքէ ուռույցքը, դուրս կը թողնէ թարախը և լաւ ախտահանելով վէրքը, կը բժշկէ հիմնաւորապէս: Տնային դեղերը կամ թէ ինքնիրան բացված բուբոնի անուշադիր թողնելը վտանգաւոր են, որովհետեւ այդ դէպքում բուբոնը կը մնայ երկար ժամանակ, թարախահոսութիւնը չի կտրվի և կարող է առաջանալ արեան վարակումն:

14. ՏՐԻՊԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՄՆԻ ՎՐԱՅ

Մինչև այժմ մենք նկարագրեցինք տրիպերի և նրա արած ազդեցութիւնը մարմնի զանազան գործարանների վրայ: Բացի վերոյիշեալ բարդութիւններից, տրիպերը ունենում է և ընդհանուր լինասակար ազդեցութիւն ամբողջ մարմնի վրայ: Տրիպերով վարակված անձը դառնում է ջղային, դիւրազգաց, դիւրագրգիռ: Նրա տրամադրութիւնը մեծ մասամբ լինում է մեղմադճոտ և վշտոտ:

Ապա տրիպերը, առաւել ևս խրոնիքականը, ազդում է և սեռական կարողութեան վրայ: Մարդու մէջ նուազում է կիրքը, էրէկցիան (անդամի կանգնումը) ուժեղ չէ լինում: Ընդհանրապէս վերցրած, կրկնվող կամ խրոնիքական տրիպերից յետոյ մարդ վաղաժամ թուլանում է սեռականապէս և երբեմն էլ զրկվում կարողութիւնից:



ԿԵՂԺ ՏՐԻՊԼԻՐ

Բացի վերոյիշեալ տրիպէրից կայ և մի-
զանցքի մի ուրիշ տեսակ բորբոքումն, որ
շատ նման է իսկական տրիպէրին: Այսպիսի
հասարակ բորբոքում առաջանում է ոչ թէ
գոնօկօկների ազդեցութիւնից, այլ ուրիշ
պատճառներից. օրինակ, իրար յետևից մի քա-
նի անգամ կրկնված մերձաւորութիւններից,
կամ կնոջ ամսական արիւնհոսութեան մի-
ջոցին կատարած յարաբերութիւններից կա-
րող է միզանցքը բորբոքվել և թարախահո-
սութիւն սկսվել: Սաստիկ հարբած ժամին
կատարվող մերձեցումից էլ կարող է բոր-
բոքվել միզանցքը. երկար ժամանակ կատէտը-
ներ, բուժեր և այլ գործիքներ՝ միզանցքը
տանելիս կարող են առաջացնել նմանապէս
բորբոքում. երբեմն էլ բաղնիսից կամ տաք
վաննայից դուրս գալուց յետոյ սեռական
մասերի մրսեցնելն էլ առաջացնում է մի-
զանցքի բորբոքում և թարախահոսութիւն:
Միզանցքի այսպիսի բորբոքումը կոչվում է

կեղծ տրիպէր, որովհետև նրա թարախի մէջ
չեն լինում սուսուկակի բացիւններ, գոնօկօկ-
ներ. ուստի թարախն էլ վարակիչ չէ: Կեղծ
տրիպէրից հարկաւոր չէ վախենալ, քանի
որ նա չէ ունենում ծանր բարդութիւններ և
մեծ մասամբ կարճատև է լինում: Անհրա-
ժեշտ է միայն հանգիստ մնալ, խուսափել
խմիչքեղէնից ու զրգուումից: Կեղծ տրիպէր
առաջանում է նաև կնոջ բունոցից հոսող
թարախահիւթից (ԾՅԱՅ) և ծննդաբերու-
թիւնից յետոյ բունոցից հոսող հեղուկից.
ուրեմն, պարզ է, որ այս միջոցներին պէտք
է խուսափել կանանց հետ մերձենալուց:
Երբ հանգիստ դրութեան և ժուժկալութեան
միջոցին կեղծ տրիպէրը չէ անցնում, այն
ժամանակ վերցնել հետևեալ դեղը և օրա-
կան երկու անգամ լուանալ միզանցքը:

Rp. Zinci sulfurici 0,3

Aq. destillat. 200,0

MDS. Спринцованіе.



V

• ՏՐԻՊԵՐԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ


Վերոյիշեալ մեր նկարագրութիւններէց պարզ երևում է, որ տրիպէրը լուրջ հիւանդութիւն է, որը կարող է առաջ բերել բազմատեսակ տառապանքներ: Այդ պատճառով երբէք չը պէտք է անուշադիր թողնել նրան, համարելով մի թեթեւ ու չնչին ցաւ: Չը պէտք է դիմել անային խաբեբայ հէքիմների, անմատչելի բժշկարանների և կամ բաւականանալ սրա նրա տուած ըէցէպտներով: Այս ճանապարհով ոչ միայն հիւանդութիւնը չի բժշկւիլ, այլ ընդհակառակն կը մնայ, կը հնանայ ու կը դառնայ խրոնիքական. ցաւը կարող է թափանցել խորքերը և գործը բարդացնել:

Քաղաքներում ապրող մարդիկ բժշկութեան տեսակէտից շատ երջանիկ են, քան թէ գիւղերում և աւաններում ապրողները. որովհետեւ քաղաքացին, վարակման դէպքում, կարող է անմիջապէս դիմել հարկւրաւոր մասնագէտ բժիշկներից մէկին,

Մինչդեռ գիւղացին կամ գաւառացին միշտ հնարաւորութիւն չէ ունենում թողնել գործը, մեծ ծախսեր անել ու քաղաք գնալ բժշկւելու: Բացի այդ, կան մարդիկ, թէկուզ հէնց քաղաքում ապրողներ, որոնք ամուսնացած լինելով կամ սաստիկ ամաչկոտ լինելով, չեն դիմում բժշկի: Պարզ է, որ այսպիսի դէպքերում հիւանդութիւնը առաջադիմում է, բարդանում և ծածուկ կերպով մաշում ամօթխած հիւանդին: Ահա հէնց յիշեալ մարդկանց համար էլ մենք կազմեցինք այս գրքոյկը: Այն մարդը, որ ինչինչ պատճառներով չէ դիմում բժշկին, կարող է օգտուել այս գրքոյկից, միայն թէ զգոյշ, խելացի ընտրութեամբ և ճշտօրէն կատարելով ցոյց տրված խորհուրդները:

Հէնց որ սկսվում են թարախահոսութիւն, այրոց և ցաւեր, անմիջապէս պէտք է թողնել ամենատեսակ ֆիզիքական աշխատանք: Հանգիստ դրութիւնը չի թոյլ տալիս բորբոքման զարգանալուն, մինչդեռ քայլելը, զանազան շարժողութիւնները, աւելի են բորբոքում հիւանդութիւնը: Ուստի և աւելի նպատակայարմար կը լինի առաջին օրերում պառկել: Եթէ հիւանդը անհամբեր է, չի կարող պառկած մնալ, գոնէ նա պէտք

է քիչ ման գայ, խոսափէ շարժումներէց. հասկանալի է, որ բոլորովին արգելվում է պարել, ձի հեծնել, վէլօսիպէդ նստել, երկար ու բարձր սանդուղներ բարձրանալ և այլն: Սկզբից և եթ պէտք է գնել ամորձիքակապ և ձուաները կապել. այսպիսով նրանք կը մնան հանգիստ ու չեն բորբոքվիլ: Ամորձիքակապը, որ կոչվում է սուսպէնզօրիում, պատրաստի է և ծախվում է դեղատներում 20—40 կոպէկով:



Նկար 8.
Ձուաների կապը.
սուսպէնզօ-
րիում

Եթէ միզանցքի բորբոքումը սաստիկ է, այրոցն ու ծակոցները այն աստիճան, որ շատ դժուարացնում են միզելը, լաւ կը լինի օրական մէկ անգամ ամբողջ վաննա ընդունել. ջրի տաքութիւնը լինելու է 30°/0. վաննայի մէջ պէտք է նստել 15—20 րոպէ: Աւելորդ է ասել, որ ցուրտ եղանակներին, ձմեռը, պէտք է վաննան ընդունել տաք սենեակում և զգոյշ լինել մրսելուց: Եթէ մեծ վաննա չը կայ, այն ժամանակ կարելի է վարվել հետևեալ կերպով.—վերցնել մի բաժակ գօլ ջուր, կաթ կամ 2°/0 բորակաթթուի լուծուցք, բոլորն էլ 30—31°/0 տաքութեան

(ի հարկէ նրանցից որեւէ մէկը առանձին, և ոչ թէ իրար խառնած), առնանդամը մէջը գնել ու պահել 5—10 րոպէ: Այս միջոցով այրոցը զգալի չափով պակասում է: Անմիջապէս պէտք է թողնել ոգելից խմիչքները, և կաթիլ անգամ չը խմել օղի, գինի, գարեջուր, որոնք տրիպէրից սիրված են և նպաստում են թարախահոսութեան շատալուծն և հիւանդութեան երկար դիմանալուն: Անչափ օգտակար ու բարեբար ազդեցութիւն է անում կաթը, ուստի պէտք է խմել օրական 4—6 բաժակ կաթ: Կարելի է գործածել բաց գոյնի թէյ, գազը թոքած լիմօնադ, գէլտէրեան և սառը մաքուր ջուր: Սրանք նպաստում են մէզի աւելանալուն և միզանցքը լուանալուն: Արդէն քանի անգամ կրկնեցինք, որ տրիպէրի թարախը վարակիչ է և ձեռքերի միջոցով կարելի է այս կամ այն գործարանը վարակել. այդ պատճառով հիւանդը պէտք է դառնայ մաքրասէր. ամեն անգամ անդամը բռնելուց յետոյ պէտք է կարբօլեան սապօնով լաւ լուանայ ձեռքերը ու եղունկների արանքները: Անպայման պէտք է խոսափել աչքերին ձեռք տալուց, քանի որ տրիպէրի թարախը շատ շուտ վարակում է նրանց: Որպէսզի անդամի գը-

լուխը շորի հետ շփվելուց զերծ մնայ և սպիտակեղէնը չը կեղտոտվի միզանցքից հոսող թարախից, անհրաժեշտ է մեծ կտոր մաքուր բամբակ դնել անդամի ծայրին, որը թարախոտվելուց յետոյ փոխել մաքուր բամբակով, յետոյ ձեռքերը լուանալ:

Ուտելիքի և խմելիքի մէջ հիւանդը պէտք է լինի չափաւոր: Միանգամից շատ չուտել և ստամոքսը չը ծանրաբեռնել: Փորը չը պիտի կապ մնայ, այլ ամեն օր պէտք է դուրս ելնել: Արգելվում է գործածել զորդոնի նիւթեր, օրինակ քացախ, մանանեխ (գարշիցա), պղպեղ, շատ կծու—թթու և աղի բաներ: Լաւ է շուտ շուտ ուտել, միայն բիշ—քիշ, և կերածը լինի սննդաւոր կերակուր: Հնարաւորութեան չափ բիշ գործածել դժուարամարս նիւթեր, որոնք են տաւարի միս, հաց, կարտօփիլ, խմորեղէն և այլն: Գիշերվայ քնելու անկողինը փափուկ չը լինի, այլ պարզ, մաքուր, չոր ու զով: Սենեակի օդը պէտք է մաքուր պահել ցերեկը պատուհանները բանալով: Տրիպէրի միջոցին արգելվում է սեռական յարաբերութիւնը, որովհետև սերմը գրգռում է միզանցքի բորբոքված թաղանթը և բժշկութեան գործը դանդաղացնում: Այս տեսա-

կէտից էլ պէտք է աշխատել, որ գիշերը երազախաբ չը պատահի: Դրա համար ցերեկը խուսափելու է կանանցից, չը խօսել ու չը լսել սեռական յարաբերութեան մասին, չը կարդալ սիրահարական կամ թէ պօռնօգրաֆիական գրքեր, սինէմատօգրաֆներում չը դիտել լկտի պատկերներ և այլն:

Ինչպէս գիտենք, սուր տրիպէրի սկզբնական շրջանում անդամի ցաւոտ կանգնումը շուտ շուտ է լինում, որը շատ անհանգստացնում է հիւանդին. այդ բանից զերծ մնալու համար լաւ կը լինի մէջքի վրայ չը քնել, այլ պառկել աջ թևի վրայ. քնելուց առաջ ոչինչ չուտել. պառկելուց 2—3 ժամ առաջ խմել մի բաժակ կաթ: Եթէ անդամի կանգնումը չի դադարում, դեղատնից վերցնել նշի կաթ (миндальное молоко) և օրական 3—4 անգամ ընդունել հացի գդալով: Եթէ սա էլ չի օգնի, վերցնել բրօմի լուծուածք (8 գրամ բրօմ, 200 գրամ դուած ջուր) և օրական 3 անգամ խմել հացի գդալով:

Սուր տրիպէրի բորբոքման միջոցին, երբ միզանցքի այրոցն ու ցաւերը սաստիկ են, երբէք չի կարելի կատարել միզանցքի լուացումներ (սրսկումներ), որովհետև սը-


րանք աւելի կը զօրեղացնեն բորբոքման երևոյթները: Պէտք է սպասել 7—10 օր, երբ բորբոքումը կընուազի առողջապահական բոլոր խորհուրդները կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է մեծ զգուշութեամբ սկսել սրսկումները: Տրիպէրի բժշկութեան միջոցին միշտ հարկաւոր չէ լինում միաժամանակ թէ ներքին դեղեր ընդունել և թէ սրսկումներ անել: Աւելի հիմնաւոր և վերջնականապէս են բուժում որոշ դեղերի լուծուածքների լուացումները: Մինչև այժմ բժշկութիւնը չի գտել մի դեղ, որ ներքուստ անմիջապէս ազդէր գոնոկոկների վրայ: Գործածվող ներքին դեղերը, (օրինակ սանթալի իւղը և զանազան բալզամներ) հիւանդութեան վրայ ազդում են կողմնակի կերպով: Նրանցից մէկը ներգործում է երիկամուկների վրայ, և նրանց ստիպում է շատ քանակութեամբ մէզ արտադրել, որով և միզանցքը լուացվում և թարախը հեռացվում է. միւս դեղը միզանցքի բորբոքված թաղանթի վրայ հանգստացուցիչ ազդեցութիւն է ունենում, և այլն: Չպէտք է մոռանալ, որ տրիպէրի դէմ ընդունվող ներքին դեղերը չէ կարելի շատ երկար ժամանակ գործածել, որովհետև նրանք

կարող են առաջացնել երիկամուկների բորբոքումն, որ աւելի վտանգաւոր հիւանդութիւն կը դառնայ, քան թէ ինքը տրիպէրը: Այդ պատճառով որևէ դեղ մի անգամ վերջացնելուց յետոյ ինքնազուխ չը կրկնել, այլ հարցնել բժշկի խորհուրդը: Իսկ ով արդէն ունի երիկամուկների հիւանդութիւն, ոչ մի դէպքում չը պէտք է խմէ հատարիպէրային դեղեր:

Գործածելու համար դեղատնից վերցնել սանթալի իւղը (санталовое масло) և օրական 3 անգամ կաթով ընդունել 10-ական կաթիլ (ոչ աւելի): Կամ թէ վերցնել կօպայսկի բալզամ, որից նմանապէս խմել 10—15 ական կաթիլ օրը 3 անգամ: Յիշեալ դեղերը բաւական էժան են ու մատչելի: Կան և արտասահմանեան պատրաստի դեղեր, որոնք աւելի բուժիչ են ու աւելի թանգ: Դրանցից լաւերն են Գօնօզան (Pil. gonosan) հապերը, որոնցից պէտք է ընդունել 2-ական հապ օրը երեք անգամ: Սանթալ Միլի հապերը, նոյնպէս 2-ական հապ օրը 3 անգամ: Վերոյիշեալ բոլոր դեղերը պէտք է գործածել ուտելուց յետոյ, այսինքն առաւօտեան թէյից, ճաշից և իրիկ-

նահացից յետոյ, որովհետև նրանք կարող են խանգարել դատարկ ստամոքսը:

Տրիպէրի լուացումները կատարվում են առանձին գործիքով, որ կոչվում է սպրինցովկա: Սա բաղկացած է ապակեայ գլանակից, որի մէջ շարժվում է խթանը (поршень). սպրինցովկի ծայրին ամրացրած է ըէզինի ծիծ: Սպրինցովկաները լինում են զանազան մեծութեան, բայց առհասարակ լաւ է գործածել 5 խորանարդ սանտիմէտր բովանդակութեան գործիք: Անհրաժեշտ է գիտենալ սպրինցովկայի գործածութեան բոլոր կանոնները և զգուշութիւնները, հակա-




Նկար 7.

Տրիպէրի սպրինցովկան, այսինքն լուանալու գործիք:

ռակ դէպքում կարելի է օգուտի փոխարէն քնաս պատճառել: Գործիքը գնելուց և տուն տանելուց յետոյ պէտք է եռուն ջրով, կարբօնան 5% կամ բորակաթթուի 2% լուծվածքով լաւ լուանալ ինչպէս մէջը, այնպէս էլ դուրսը: Սրսկումից առաջ պէտք է մի-

գել և անդամը գօլ ջրով լուանալ: Դեղից մի քիչ լցնել մաքուր պնակի մէջ, առնել սպրինցովկի մէջ է և ապա ըէզինի ծայրը դէպի վեր ուղղել ու խթանը քիչ սեղմել, մինչև որ դեղի հետ մտած օդը դուրս կելնէ: Ապա ձախ ձեռքով բռնել անդամը, աջ ձեռքով ըէզինի ծայրը զգուշութեամբ դնել միզանցքին, այդպէս բռնել, իսկ աջ ձեռքի ցուցամատով շատ հանդարտ սեղմել խթանը: Երբ ամբողջ դեղը կը լցվի միզանցքը, սպրինցովկան յետ քաշել, առաջուց սեղմած ունենալով միզանցքի ծայրը, որպէսզի

• Թիւն 6
• Գործիք
• Դեղ



դեղը դուրս չը թափվի: Այսպէս բռնած պահել 3—5 րոպէ, իսկ յետոյ ձեռքը թողնել ու դեղը դուրս թափել: Սկզբներում այս լուացումը կատարել 3—4 անգամ. յետոյ թարախի նուազման հետ պակասեցնել և լուացումները. 3, 2 և մէկ անգամ օրը. թարախի անհետանալուն պէս բոլորովին վերջ տալ սրսկումներին: Թարախի կտրվելը թող ազատութիւն չը տայ հիւանդին ուտելիքի

ու խմելիքի մէջ, որովհետեւ դա դեռ չէ՛նը-
շանակում, որ տրիպէրը իսպառ բժշկվել է.
եթէ հիւանդը անիշապէս սկսէ հարբել, ձի
հեծնել, սեռական կրկնակի մերձեցումներ
կատարել, շատ շուտ կը վերանորոգվի ցա-
ւը: Ուրեմն խորհուրդ կը տանք թարախի
անհետանալուց յետոյ դեռ էլի 2—3 ամիս
նոյն բէժիմը պահել, ինչ որ ցոյց ենք տը-
վել վերևում:

Սրսկելու դեղերից մենք կը յիշենք մի-
այն միջանի էական և ազդեցիկ դեղեր, ո-
րոնցից դատ մնացեալ հարիւրաւոր դեղերի
ընտրողութիւնը միմիայն բժշկին պէտք է
վերապահել:

Բժշկութեան սկզբին նախ վերցնել հե-
տեալ դեղը և օրական մի քանի անգամ
նրանով լուանալ մինչև թարախի կտրվիլը:

- 1) Kali hypermanganici 0,2
Aq. destillat . 400,0

MDS. Суринцованіе.

Երբ թարախը կտրվի և կամ շատ աննշան
կերպով դեռ շարունակէ երևալ, առաջին
դեղից յետոյ վերցնել հետեալ դեղը:

Թոյլ լուծվածք

- 2) Rp. Protargol .. 0,5
Aq. Destillat... 200,0

MDS. Օրական 1—2 անգամ սրսկել
վերոյիշեալ ձևով:

Այս առաջին լուծվածքը վերջացնելուց
յետոյ վերցնել երկրորդ աւելի ուժեղ լուծ-
վածքը.

- 3) Rp. Protargol... 1,0
Aq. Destillat... 200,0

MDS. Սրսկել վերոյիշեալ ձևով:
Կամ թէ թոյլ լուծվածք

- 4) Rp. Zinci sulfocarbolic... 0,5
Aq. Destillat... 200,0

MDS. Սրսկել օրը միջանի անգամ,
պահելով 3—5 րոպէ:

Վերջացնելուց յետոյ վերցնել երկրորդ
աւելի ուժեղ լուծվածք.

- 5) Rp. Zinci sulfocarbolic... 1,0
Aq. Destillat .. 200,0

MDS. Սրսկել յիշեալ ձևով:
Եթէ միզանցքի ցաւերը չեն հանդարտ-
վում, վերցնել հետեալ դեղը.

- 6) Rp. Zinci sozodol 1,0
Plumbi acetici 0,3
Tinct. opii simpl. 5,0
Aq. Destillat 200,0

MDS. Սրսկել միզանցքը օրական եր-
կու անգամ, պահելով դեղը 3—4 րոպէ:

Երբ սրսկման ժամանակ ձուաներից որևէ մէկում նկատվում է ուռոյցք և զգացվում ցաւ, իսկոյն պէտք է ընդհատել սրսկումները և հանգիստ մնալ: Ընդհանրապէս, հիւանդը երբէք 2—3 շաբաթից աւելի չը պէտք է կատարէ ինքնասրսկումներ, երբ նկատում է, որ Թարախը չի պակասում և ցաւերը չեն վերջանում: Այնուհետև պէտք է դիմէ բժշկի, որը խոր լուսացումներով ու զանազան գործիքներով հիմնաւորապէս կը բժշկէ:

Պրօնիքական տրիպէրի բացվելուն պէս կարելի է վերոյիշեալ դեղերից որևէ մէկով սրբակումներ անել, միայն թէ օրական մէկ անգամ:

Ցանցկալի է, որ թէ սուր և թէ խրօնիքական տրիպէրը միշտ յանձնել բժշկի խնամքին, որպէսզի միանգամից հիմնաւոր կերպով բժշկվել ու ազատ լինել յետագայ կրկնութիւններից: Շատ բշերն են բժշկվում իրանք իրանց արած սրսկումներով: Նրանք, որոնք զլանում են ժամանակին դիմել բժշկական օգնութեանը, յաճախ երկար տարիներ, նոյն իսկ մինչև մահ չեն ազատվում տրիպէրի ճանկերից:

VI

ԴՆԴԵՐ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ ՏՐԻՊԷՐԻ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Երբ բորբոքի միզապարկը և նրա մէջ առջանան ծակոցներ, դոդոցներ, մէզը սաստիկ պղտորվի, վերջնել դեղատնից salol 10-ական գրան 16 պարաշօկ և օրական ընդունել մի քիչ ջրով 4 պարաշօկ: Կամ թէ վերջնել urotropin 16 պարաշօկ 8-ական գրան իւրաքանչիւրը, օրական ընդունել 4 պարաշօկ մի բաժակ սէլտէրեան ջրով: Շատ լաւ է և ցաւերը մեղմացնում է օրական մէկ անգամ 30% կիսավաննա ընդունելը (сидячая ванна): Հանգստացնում է նաև նշի կաթը, օրական 4 անգամ հացի գդալով: Եթէ այս միջոցներով միզապարկի բորբոքումը չէ անցնում, իսկոյն պառկել և բժիշկ հրաւիրել:

Բուբօնի դէպքում վարվել այնպէս, ինչպէս ասել ենք սեպհական գլխում:

Երբ ձուն ուռչի, իսկոյն թողնել սրսկումներն ու պառկել: Դեղատնից վերջնել свищовая вода մի սրուակ, նրա մէջ թռչել մաքուր քա-

Թան ու ծալած դնել ձուանների վրայ, այսպէս փոփոխել օրական միջանի անգամ: Եթէ ցաւերը չը մեղմանան, լաւ կը լինի սառոյց դնել սառ- ցապարկով: Փորկապ ժամանակ ընդունել թեթեւ լուծողական, օրինակ գէնագէրչակի իւղ (касто- ровое масло) մի պօրցիւ: Եթէ ցաւը մեղմանայ, իսկ ձուի ուռոյցըը չիջնի, այն ժամանակ ուռած ձուին քսել վազելին և վրայից դնել տաք կօմ- պրէս, այսինքն տաք ջրում թռչած քաթան, որը նորոգել միջանի անգամ: Իսկ երբ այս կերպ էլ չը բժշկվի ձուռն, անմիջապէս դիմել բժշկի:



Նկար 9.

Միզանցքի նեղութեան լայնացնելը բուժով:

Միզանցքի նեղութեան և մէզի բռնվելու դէպքում անպայման պէտք է դիմել բժշկի, որը կատէտրի օգնութեամբ դուրս կը թողնէ մէզը, և ապա ժամանակի ընթացքում առանձին մե-

տաղէ ձողերով, որոնք կոչվում են ըուժեր, աս- տիճանաբար կը լայնացնէ միզանցքը: Բժշկու- թեան միջոցին լաւ կը լինի օրական մէկ անգամ 30% ամբողջ վաննա ընդունել, մէջը նստելով 20—30 րոպէ:

Աչքերի բորբոքման դէպքում օրական մի- քանի անգամ բորակաթթուի (борная кислота) գօլ լուծվածքով աչքերը լուանալ: Լոյսից ան- հանգիստ չը լինելու համար կրել սև ակնոցներ: Լինել խիստ մաքրապահ և առողջ աչքը պաշտ- պանել վարակվելուց: Լուրջ դէպքում անմիջա- պէս դիմել ակնաբուժի:

Տրիպէրի միւս բարդութիւնների դէպքե- րում, օրինակ յօդերի, երիկամունքների և այլ բորբոքման ժամանակ, կամ թէ միզանցքում խո- շոր թարախակալութիւնների, թլպատի ուռոյցքի դէպքերում առանց ժամանակ կորցնելու իսկոյն և եթ դիմել բժշկի, վաղօրօք զանազան փորձեր չանելով բժշկարանների ու տնային հէքիմների խորհուրդներով:




VII

ԿՆՈՋ ՍԵՌԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ

1. Չուարաններ (ovaria): Սրանք երկու հատ փոքրիկ ձուլաձև ու տափափոտ մարմիններ են, տղամարդի ձուլաններից բիշ փոքր, որոնք գտնվում են արգանդի (զաւակատուն) երկու կողմերում: Մի քանի կապերով նրանք ամրացած են զաւակատան և Ֆալօպի խողովակների հետ: Իւրաքանչիւր ձուարան բաղկացած է ա) արտաքին ծածկիչ շերտից, որը բաւական ամուր է և ձուլված է որովայնածածկ թաղանթի հետ (брюшина), և բ) ներքին բաղադրեալ միջուկից, որը բաղկացած է բազմաթիւ արեան անոթներից ու Գրաաֆեան պարկերից: Այս պարկերը, թուով մօտ 12—20 հատ, փոքրիկ փակ բշտիկներ են, որոնց մէջ և ամփոփված է կնոջ ձուրկը, այսինքն մարդկային սաղմը:

2. Փալլօպեան խողովակներ (Tubae Fallopii): Սրանք, թուով 2 հատ, սկսվում են ձուարաններից և մտնում են արգանդը. սրանց միջով դէպի արգանդն է անցնում կնոջ սերմը, որի հետ, իհարկէ և ձուրկը: Իւրաքանչիւր խողովակ բաղկացած է երեք շերտից արտաքին, մի-

ջին՝ մկանային և ներքին թաղանթներից: Խողովակի երկարութիւնը լինում է 4—7 դիւյմ:



1. Վեներայի բլրակը: 2. Մեծ շրթունքներ: 3. Կրքազրգոյի: 4. Փոքր շրթունքների սկիզբը: 5. Փոքր շրթունքների և կրքազրգոյի կապը: 6. Փոքր շրթունքներ: 7. Նախադուռն: 8. Միզանցք: 9. Կուսական թաղանթ: 10. Բռնոցի մուտքը: 11. Մսային ծալքեր: 12. Նաւակաձև փոս: 13. Յետանցք:

3. Արգանդ կամ զաւակատուն (uterus), գտնվում է փորի ստորին մասում, միզապարկի և ուղիղ աղիքի մէջ տեղում: Արգանդը նման է տափակացրած տանձի, որի լայն կողմը դարձած

է դէպի վեր, իսկ նեղ կողմը դէպի վայր: Ստորին՝ նեղ մասը կոչվում է արգանդի պարանոց: Արգանդը իր դիրքը պահպանում է և ամրացած է կապերով, որոնք բաւական առաձգական են, և թոյլ են տալիս արգանդին սղմվել ու լայնանալ: Արգանդը կազմված է հաստ մսի շերտից, որը ներսից և դրսից պատած է թաղանթներով: Արգանդի մէջ՝ երկու կողմերից բացվում են Փայուպեան խողովակները: Զաւակատուն անունը ցոյց է տալիս, որ նա նշանակված է իր մէջ ձուիկը բեղմնաւորելու ու մանկանը պահելու մինչև ծնունդը:

4. Բունոց կամ հեշտոց (vagina): Բունոցը կազմում է սեռական մերձաւորութեան օրգանը և ներկայացնում է մի երկայն խողովակ, որի վերին մասը աւելի լայն է, միանում է արգանդի պարանոցի հետ, իսկ ստորին մասը աւելի նեղ է և բացվում է դէպի դուրս: Բունոցի յետին կողմում գտնվում է ուղիղ աղիքը, իսկ առջին կողմում՝ միզանցքը և միզապարկը: Արգանդի երկարութիւնը լինում է $3\frac{1}{2}$ —6 դիւյմ, իսկ լայնութիւնը 1 — $1\frac{1}{2}$ դիւյմ: Սակայն բունոցը հետզհետէ մեծանում է սեռական մերձաւորութիւններից ու ծննդաբերութիւններից: Բունոցը կազմված է մկանային և այլ շերտերից. բունոցի անցքը ծածկված է նրբաթաղանթով,

որը միջին մասերում գոյացնում է ոլորակներ և ծալքեր:

ԿՆՈՋ ԱՐՏԱՔԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ (vulva)

Մինչև այժմ նկարագրած սեռական գործարանները գտնվում են մարմնի մէջ, դրսից անտեսանելի, սակայն նրանց սկզբնաւորութիւնը, այսինքն արտաքին մասը գտնվում է կնոջ երկու ազդրերի մէջ տեղում և տեսանելի են. դրանք են—

1. Վեներայի բլրակը, բաւական դուրս ցցված բարձրավանդակ է, շէքերի վերին մասում: Նա բաղկացած է ճարպային շերտից, հաստ կաշուից, որի վրայ՝ կնոջ հասունացած ժամանակ բուսնում են մազեր:

2. Մեծ շրթունքներ (labia majora), որոնք կազմում են վեներայի բլրակի շարունակութիւնը և շրջապատելով բունոցի ճեղքը, վերջանում են յետանցքի մօտ: Իւրաքանչիւր շրթունք դրսից պատած է մարմնի գոյնի կաշուով, որի վրայ բուսնում են մազեր, իսկ ներսի կողմից ծածկված է բարակ թաղանթով, որը մատաղ օրիորդների մօտ լինում է մուգ կարմրագոյն, իսկ հասակաւորների մօտ—կարմիր: Երկու շրթունքների մէջն էլ նստած են լինում ճարպային

գեղձիկներ, որոնք միշտ թաց են պահում բու-
նոցի մուտքը:

3. Փոքր շրթունքներ (labia minora), որոնք
գտնվում են մեծ շրթունքների արանքում և
գնում են նրանց հետ գուգընթացաբար: Իւրա-
քանչիւր փոքր շրթունք ծածկված է լորձաթա-
ղանթով, որի մէջ գտնվում են մի տեսակ մա-
ծուցիկ հեղուկ արտադրող գեղձիկներ: Փոքր շրթ-
ունքի գոյնը միշտ կարմիր է լինում:

4. Կրքազրգոհչ կամ ցանկութեան կենդրո-
նը (клицторъ): Սա մի փոքրիկ մարմին է, բազ-
կացած խոռոչաւոր մասնիկներից, ընդունակ է
լարվել, ինչպէս տղամարդի անդամը: Կրքաբերը
գտնվում է փոքր շրթունքների վերին մասում,
նրանց միացման տեղում:

5. Կուսական թաղանթ (hymen): Սա բու-
նոցի սկզբի մասերը ծածկող թաղանթի շարու-
նակութիւնն է, որը քողարկում է բունոցի մուտ-
քը: Թաղանթի մէջ տեղում լինում է փոքրիկ
կամ մեծ անցք, որի միջից դուրս է հոսում ամ-
սական կեղտոտ արիւնը: Թաղանթը մեծ մասամբ
լինում է կիսալուսնաձև, որի լայն, դուրս ցցած
մասը միանում է բունոցի յետին մա-
սի և կողքերի հետ, իսկ առաջին՝ ներս ընկած
մասը ուղղված է դէպի միզանցքի կողմը: Կու-
սական թաղանթը, ինչպէս ցոյց է տալիս անունը,

յատուկ է միմիայն անարատ կոյս աղջիկներին.
առաջին սեռական մերձաւորութեան ժամանակ
նա պատուվում է և ժամանակի ընթացքում ո-
չնչանում: Լինում են դէպքեր, թէև հազուադէպ,
երբ կուսական թաղանթը պինդ է լինում, իսկ
մէջ տեղի անցքը բաւական լայն, այնպէս որ
սեռական յարաբերութիւնների ժամանակ էլ
թաղանթը մնում է անփլաս, նամանաւանդ, եթէ
տղամարդի անդամն էլ շատ փոքր է լինում:

6. Բարտօլինեան գեղձեր, երկու հատ, գրա-
նվում են բունոցի մուտքի մօտ և արտադրում
են մի տեսակ ճարպային հեղուկ, որը սեռական
մերձաւորութեան միջոցին թաց է անում բուն-
ոցը և այլ մասերը: Գեղձերը նման են ծիրանի
կորիզին և դասաւորված են բունոցի մուտքի եր-
կու կողմերում: Նրանցից բացվում են երկու
փոքրիկ խողովակներ, որոնց միջով գեղձերից
արտադրված հեղուկը թափվում է բունոցի անցքի
մէջ: Առանց այս հեղուկի անհնարին կը լինէր
սեռական մերձաւորութիւնը, որովհետև, կնոջ
սեռական քնքոյշ գործարանները կոպիտ շփումից
կարող էին ցաւել և ֆրասվել, մինչդեռ հեղուկը
թաց ու մածուցիկ դարձնելով բունոցի թաղանթը,
հնարաւորութիւն է տալիս անցաւ ու անփլաս
կերպով մերձաւորութիւն կատարել: Բարտօլին-
եան գեղձերը միշտ միաշափ չեն արտադրում

յիշեալ հեղուկը. սեռական մերձաւորութեանց, ծնանիզմի, կրքերի, վաւաշոտ երազների ազդեցութեան ներքոյ նրանք բաւական շատ են արտադրում այդ հեղուկից, իսկ հանգիստ միջոցին՝ շատ քիչ:

7. Ստինքներ կամ ծծեր (mammae): Կնոջ սեռական գործարանների մի մասն էլ կազմում են ծծերը, որոնք, թւով երկու հատ, կիսագնդաձև մարմիններ են և գտնվում են կրծքի առաջին մասում: Իւրաքանչիւր ծիծ բաղկացած է 15—20 մասերից, որոնք իրար հետ կցվում են միացնող թաղանթով: Իւրաքանչիւր մասն նման է փամփուշտի, որ ունի իր կաթնատար խողովակը: Կաթնատար խողովակները ծծի պտուկի մօտ միանում են իրար հետ և կազմում աւելի խոշոր խողովակներ: Ուրեմն պտուկը կազմվում է կաթնատար խողովակների ձուլմունքից, և լինում է մուգ կարմիր գոյնի: Մինչև սղջկայ հասունանալը նրա ծծերը շատ փոքր են լինում, նման տղամարդի ծծերին, իսկ հասունանալուն պէս, երբ սկսվում է ամսական արիւնհոսութիւն, ծծերն էլ մեծանում են և ընդունակ են դառնում կաթ արտադրել:

ԿԱՆԱՆՑ ՏՐԻՊԵՐԸ

(Սուսունակը)

Որքան որ տղամարդկանց սեռական գործարաններն են ենթակայ սուսունակով հիւանդանալուն, նոյնքան և կանանց սեռական գործարանները: Եթէ հիւանդութիւնը թողնել առանց բժշկութեան, նա կարող է բարդանալ և վարակել բոլոր սեռական մասերը սկսած դրսից մինչև ներսը:

Ինչպէս տղամարդի մօտ, նմանապէս կնոջ մօտ սեռական գործարանների հիւանդութիւնը կարող է լինել միկրօբային, այսինքն վարակված ուրիշ հիւանդի հետ շփումից, և կամ մեխանիկական պատճառից գոյացած: Նախքան ախտային (միկրօբային) սուսունակին անցնելը, խօսենք կնոջ բունոցի հասարակ բորբոքման մասին:

ԲՈՒՆՈՑԻ ՀԱՍԱՐԱԿ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

(catarrhus vaginae)

Այս հիւանդութիւնը սաստիկ սովորական է, համարեա յայտնի է շատերին ու տարածված է

կանանց մեծամասնութեան մէջ (մօտ 80⁰/₀): Նա առաջ է գալիս յաճախակի սեռական յարաբերութիւններէց, սեռական մասերը կեղտոտ պահելուց, սակաւարիւնութիւնից, սպիրտային խմիչքներ գործածելուց: Հասարակ բորբոքում առաջանում է նաև մանկահասակ ամուսնութեան ժամանակ, մրսելուց: Նեղ կօրսէտները, օնանականութիւնը, երկարատև փորկապութիւնը, անկանոն ամսական արիւնհոսութիւնը, խոնաւ բնակարանները և ուրիշ շատ հանգամանքներ նոյնպէս առաջացնում են բուռնոցի բորբոքում:

Բուռնոցի բորբոքումը կայանում է հետեւեալում.— զգացվում են այրոց և եռք բուռնոցի մէջ. ցաւերը զարկում են դէպի փորը, աճուկները և յետանցքը. նրանք աւելի են սաստկանում քայլելու միջոցին: Բուռնոցի մեծ շրթուները, անցքի պատերը ուռած և կարմրած են լինում ու շօշափելիս տաք:

Վերջապէս բուռնոցի բորբոքման ամենամեծ նշանը թարախանման սպիտակ հոսանքն է. այս հեղուկը սկզբում լինում է ջրալի, պարզ ու համարեա անգոյն, որ յետոյ աստիճանաբար թանձրանում է ու դառնում դեղնագոյն, թարախանման, երբեմն էլ կանաչագոյն, և ունենում է սաստիկ սուր, զգուելի հոտ և շապկի վրայ թող-

նում է կեղտեր: Եթէ վաղօրօք չը բժշկվի հիւանդը, այն ժամանակ սուր բորբոքումը դառնում է խրօնիքական, այսինքն երկարատև. այս դէպքում այրոցն ու ցաւերը կամ նուազում են և կամ երբեմն էլ ոչնչանում. սակայն սպիտակ հոսանքը անընդհատ թափվում է: Այս կեղտոտ թարախը քսվելով ոտքերի շէքերին կարող է առաջացնել վէրքեր. սոյնանման խոցեր կարող են գոյանալ նաև բուռնոցի ներսում, զաւակատան սլարանոցի վրայ ու այլ մասերում: Ուստի լաւ կըլինի, որ միշտ մաքուր բամբակ դրված լինի բուռնոցի բերանին թարախը ծծելու համար, որը իհարկէ շուտ շուտ փոխել: Այս սպիտակ հոսանքը տղամարդի միզանցքում ընկնելով առաջացնում է միզանցքի հասարակ բորբոքում կամ կեղծ տրիպէր, որի մասին արդէն խօսել ենք սեպհական բաժնում:

Բուռնոցի բորբոքման կամ աւելի լաւ է ասենք սպիտակահոսութեան բժշկութիւնը այնքան էլ բարդ չէ, եթէ միայն հիւանդը հետեւէ բժշկական խորհուրդներին ու իր ժամանակին կատարէ լուացումները:

Բորբոքման սուր շրջանում, այսինքն երբ հիւանդութիւնը նոր է սկսվել ու կան ցաւեր, այրոցներ, անհրաժեշտ է հանգիստ դրութիւն, քիչ մանգալ ու շարժվել, հեռու մնալ սեռական

մերձեցումից, չը գործածել խմիչքներ: Սեռական մարերը պէտք է մաքուր պահել, չի կարելի ոտքով պտտեցնել կարեմեքենայ: Պէտք է ուտել աննդարար և դիւրամարս կերակուր, օրինակ կաթ, ձու, մածուն, բուլիօն, վառիկ և այլն: Սկզբում պէտք է բուժնոցը սրսկել էսմարխի կըրուժկայի միջոցով հետևալ դեղը.—վերցնել մէկ ունց ромашка ծաղիկը, եփել 5 բաժակ ջրում և 27—28⁰/₀ տաքութեան հասնելուն պէս լուացումն կատարել: Լուացումն օրական արվում է 2—3 անգամ հետևալ ձևով. հեղուկով լի կըրուժկան քարշ պէտք է անել մահճակալից 1¹/₂ արշին բարձր, ապա պառկել մահճակալի վրայ, շէքերի տակը դնել որևէ տափակ թաս հեղուկի համար. ռեզինի ծայրին ամրացրած բուժնոցի լուանալու խողովակը զգուշութեամբ ներս տանել և բաց անել փականը: Միքանի օր վերոյիշեալ ձևով լուացումներ անելուց յետոյ, երբ ցաւերն ու այրոցն ոչնչանան, այն ժամանակ լուացումն կատարել հետևեալ դեղով: Վերցնել մէկ թէլի գդալ тагоју (տաննին) և չորս բաժակ գօլ ջուր:

Հին, խրօնիքական սպիտակահոսութեան ժամանակ լուացումներ անել հետևեալ լուծուացքներով:

Rp. Zinci sulfuric. . . . 2,0
Aq. destillat. . . . 360,0
MDS. Спринцованіе.

կամ թէ 5⁰/₀ կարբօլեան թթւութի լուծվածով.
կամ թէ

Rp. Kali permanganici . . . 1,0
Aq. destillat . . . 700,0
MDS. Спринцованіе.

Բուժնոցի խրօնիքական բորբոքման և սպիտակահոսութեան միջոցին մեծ օգուտ է տալիս ծովում լողանալը. եթէ հնարաւորութիւն չըկայ ծախսեր անելու և ծովային երկրներ դնալու, կարելի է նաև լողանալ գետերի ու առուների մէջ:



IX.

ԲՈՒՆՈՅԻ ՍՈՒՍՈՒՆԱԿԸ

Սուսունակ ունեցող տղամարդի հետ մեր-
ձաւորութեան միջոցով սուսունակի թոյնը՝ գո-
նօկօկը թարախի հետ ընկնում է կնոջ բունոցը,
այսպիսով վարակում և առաջացնում է բոր-
բոքում, այսինքն առաջացնում է սուսունակ:
Սկզբում վարակված կինը զգում է նոյն երևոյթ-
ները, ինչ որ բունոցի հասարակ սուր բորբոք-
ման միջոցին, այսինքն եռք և տաքութիւն բու-
նոցի մէջ, ցաւեր ու այրոցներ. եթէ թոյնը ան-
ցնում է միզանցքը և այնտեղ էլ բորբոքում, այն
ժամանակ միզելիս զգացվում են սաստիկ ծա-
կոցներ: Բունոցի շրթունքներն ու պատերը կար-
մըրում են, երբեմն էլ կապուտակում, մանիշա-
կազոյն դառնում. սկսվում է հոսանք, որ սկզբում
լինում է սպիտակազոյն և մածուցիկ, ապա շու-
տով դառնում է դեղնա-կանաչազոյն: Բունոցը
սեղմելիս դուրս է գալիս աւելի շատ քանակու-
թեան թարախ, որը ունենում է վատ հոտ և շա-
պիկի վրայ թողնում է կանաչադեղնազոյն կեղտեր,

ղաքաներ՝ կրախմայի նման: Հիւանդը դժուար է
քայլում, որովհետեւ փոքր ու մեծ շրթունքները
բաւական ուռած են լինում, կարմրած և շփվելիս
սաստիկ ցաւում են: Հիւանդութեան սկզբում
վարակված կինը զգում է ընդհանուր թուլու-
թիւն, վատ տրամադրութիւն և ունենում է ան-
քնութիւն:

Պատահում է, որ ուռած շրթունքներից մէ-
կը թարախակալում է և բաւական տանջանք
պատճառում, մինչև ուռուցքի տրաքվիլը ու թա-
րախի դուրս հոսիլը: Թարախը կարող է անցնել
դէպի ներս, բորբոքել արգանդը. բացի այդ՝ թա-
րախը կարող է ընկնել յետանցքը ու այստեղ էլ
առաջացնել բորբոքում, թարախահոսութիւն ու
այրոցներ: Վարակիչ թարախը յաճախ բորբոքում
է Բարտոլինեան գեղձերը և տկարացնում նրանց:
Ուրեմն կնոջ սուսունակն էլ կարող է լայն ծա-
ւալ ստանալ ու վարակել զանազան օրգաններ:

Սակայն պէտք է ասել, որ կնոջ սուր տրի-
պէրը աւելի կարճատե է լինում և աւելի շուտ
է բժշկվում, քան տղամարդի սուր տրիպէրը:
Մինչդեռ չը բժշկվելու դէպքում, կնոջ տրիպէ-
րը դառնում է խրօնիքական ու այնուհետեւ
տևում է երկար ամիսներ ու տարիներ և չա-
փազանց դժուար է բժշկվում: խրօնիքական
տրիպէրի ժամանակ այլևս չը կան ցաւեր, ծա-

կոցներ. բուռնոցի մակերևոյթը սաստիկ կարմիր չէ լինում, ինչպէս սուր տրիպէրի միջոցին:

ԿՆՈՋ ՍՈՒՍՈՒՆԱԿԻ ԲԺՅԱԿՈՒԹԻՒՆԸ

Կնոջ սուսունակը բժշկելիս մենք նոյն խորհուրդներն ու պատուէրները կը տանք, ինչ որ տղամարդի տրիպէրի միջոցին, ուստի և հարկ չը կայ նորէն կրկնելու. միայն կաւելացնենք հետեւեալը. եթէ բուռնոցի շրթունքները շատ են ուռած ու բորբոքված, լաւ կը լինի դեղատնից վերցնել *свинцовая вода*, մէջը թաթախել մի մեծ կտոր մաքուր բամբակ և դնել շրթունքների վրայ. այսպէս վարվել օրական մի քանի անգամ: Սրսկումները պէտք է անել օրական 3—5 անգամ նոյն լուծվածքներով, ինչ որ յիշել ենք բուռնոցի հասարակ բորբոքման միջոցին: Չը պէտք է մոռանալ, որ հիւանդութեան սուր շիջանում, երբ կան ցաւեր, այրոցներ ու ծակոցներ, ոչ մի դեղով լուացումներ չանել, բացի *ромашка*-ի գօլ թէյից, ինչպէս վերևում ասել ենք: Անհրաժեշտ է հանգիստ դրութիւն, նոյնիսկ անկողին մտնել: Երբ եփած *ромашка*-ի լուացումներից ցաւերն ու այրոցն անցնեն, այն ժամանակ միայն սկսել դանազան դեղերով լուացումները: Եթէ վերոյիշեալ դեղերը չօգնեն և կամ շատ քիչ ազդեցու-

թիւն ունենան հոսանքի վրայ, այն ժամանակ վերցնել հետեւեալ դեղից:

Rp. Argenti nitrici 0,8

Aq. destillat 100,0

MDS. Спринцованіе.

կամ Rp. Protargoli 4,5

Aq. destillat 100,0

MDS. Спринцованіе.

Վերոյիշեալ երկու դեղերով լուացումները պէտք է անել օրական մէկ անգամ, երեկոյեան դէմ:

Իսկ երբ տրիպէրը բաւական լայն ծաւալ է ստացել, վարակելով սեռական գործարանի խորքերը, արգանդը, միզանցքը և յետանցքը, իսկոյն պէտք է դիմել մասնագէտ բժշկի և երբեք չը բաւականանալ ինքնաբժշկութեամբ:



X.

ՓԱՓՈՒԿ ԵԱՆԿՐ

Փափուկ շանկր կոչվում է այն խոցը, որ առաջ է գալիս հիւանդ մարդի հետ մերձաւորութիւն ունենալուց՝ և որը սովորաբար կաշւում է սեռական գործարաններին: Փափուկ շանկրը մեծ մասամբ տղամարդի մօտ առաջանում է թլպատի, թլպատակալի և անդամագլխի վրայ, իսկ կնոջ մօտ՝ հեշտոցի անցքի վրայ, մեծ ու փոքր շրթունքների ներքին մակերևոյթների վրայ և երբեմն էլ բունոցի մէջ: Կնոջ սեռական գործարանների խորքերում համարեա թէ շանկրը չէ գոյանում: Պատահում է, բարեբաղդաբար հագուադէպ, որ շանկրի թոյնը ընկնում է տղամարդի միզանցքը և այստեղ առաջացնում շանկրի խոցը: Այսպիսի շանկրը, իհարկէ աչքին անտեսանելի, կոչվում է ծածկեալ շանկր և միայն հմուտ բժիշկը առանձին զննողութեամբ կարող է ճանաչել նրան:

Փափուկ շանկրով վարակվելուց 1—3 օրից յետոյ, լաճախ էլ հետեւեալ օրը, վարակման տեղում

առաջանում է կարմրութիւն. ապա այդտեղ գոյանում է պզուկի նման խոցիկ, որը հետզհետէ թարախակալում է: Այս պզուկը լինում է դեղնագոյն: Պզուկի թարախակալելուց և պատուկելուց յետոյ գոյանում է փափուկ շանկրի խոցը, որը լինում է ցորենի հատիկից մինչև լոբու մեծութեան: Փափուկ շանկրը ունենում է մեծ մասամբ կօլօր ձև, երբեմն էլ ձուլաձև: Շանկրին ձեռք տալիս զգացվում է նօրմալ մակերևոյթի փափկութիւն և ոչ մի կոշտութիւն չէ երևում. հէնց այս հանգամանքն էլ տարբերում է փափուկ շանկրը կոշտ շանկրից, որը շօշափելիս կոշտուկ է ներկայացնում: Բացի յիշեալ տարբերութիւնից, պէտք է անհրաժեշտ գիտենալ, որ փափուկ շանկրի խոցը նստած տեղի մակերևոյթից աւելի ցածր է լինում, խորը մտած մսի մէջ, մինչդեռ կոշտ շանկրի խոցը մսի մակերևոյթից վեր է լինում:

Փափուկ շանկրի խոցից թափվում է թաւախ, երբեմն էլ մի քանի կաթիլ արիւն: Խոցը ցաւում է և քոր գալիս. ձեռք տված ժամանակ ցաւերը սաստկանում են և յաճախ սկսվում է արիւնհոսութիւն: Շանկրի թարախը սաստիկ վարակիչ է, այնպէս որ ինչ տեղ էլ կաշի նա, կարող է գոյացնել շանկրային խոցեր: Հէնց դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ

շանկրի խոցը երեցած դէպքում, եթէ իսկոյն չեն դիմում բժշկի, կարճ միջոցում խոցի բոլորքում ինքնավարակման միջոցով առաջանում են ուրիշ խոցեր, ուրեմն շանկրի թարախը քսվելով այս ու այն կողմ, վարակում է և բաց անում խոցեր: Շանկրի թարախն այն աստիճան վարակիչ է (շանկրի սկսված բուժելից մինչև բոլորովին վերջանալը) որ նա ոչ միայն վարակում է սեռական գործարանները մերձաւորութեան միջոցին, այլև համբուրվելիս, ձեռք տալիս, հիւանդին կպչելիս և այլն դէպքերում: Պատահում է, որ մի քանի առանձնացած շանկրային խոցեր միանում են իրար հետ և մեծ խոց գոյացնում: Եթէ շանկրը թողնել առանց բժշկութեան, նա ընդունակ է հետզհետէ խորանալ և այդպիսով կարող է ծակել անդամը: Մէկ անգամ շանկրով հիւանդացած մարդը, շատ տրամադիր է հեշտութեամբ վարակվելուն. ուստի լաւ բժշկվելուց յետոյ էլ պէտք է սաստիկ զգոյշ լինել սրա նրա հետ շրվելիս կամ մերձենալիս:

Շանկրի տևողութիւնը լինում է տարբեր միջոց. եթէ չեն բժշկում նա տևում է տարիներ: Բժշկութեան ժամանակ մեծ մասամբ 3—4 շաբաթից յետոյ շանկրի խոցը մաքրվում է, թարախը կտրվում և երևում է միմիայն մի քանի կաթիլ մաքուր արիւն: Խոցի շուրջը կարմրու-

թիւնը և բորբոքումը անցնում են, խոցի յատակը բարձրանում է, հարթվում. խոցի բոլորքը սպիւսկ է դառնում, իսկ վերջիվերջոյ համարեա բոլորովին հարթվում:


Շանկրի չը բժշկվելու դէպքում կարող են բորբոքվել մարմնի մէջ գտնվող բազմաթիւ գեղձերից որևէ մէկը: Աւելի յաճախ բորբոքվում է աճուկներում գտնվող գեղձերից մէկն ու մէկը, որը ուռչում է, մեծանում և թարախակալում: Այսպիսով գոյանում է բուբոն (շանկրային բուբոն): Այս բուբոնի ընթացքը և վերջաւորութիւնն էլ նոյն է, ինչ որ տրիպէրի բուբոնի ժամանակ, ուստի մանրամասն չենք կանգ առնել բուբոնի վրայ:

Փափուկ շանկրի բժշկութիւնը: Հէնց որ անդամի կամ բունոցի վրայ երևայ կարմրութիւն ու խոցիկ, իսկոյն պէտք է թողնել ամեն տեսակ խմիչքեղէնի գործածութիւնը, քիչ մանգալ և շարժումներ անել. անպայման պէտք է խուսափել սեռական յարաբերութիւն ունենալուց, ապա թէ ոչ՝ նախ վարակված խոցիկի մէջ կարող է ընկնել սիֆիլիսի թոյնը և վերջը սիֆիլիս առաջացնել և երկրորդ՝ կարելի է վարակել առողջ կնոջը կամ տղամարդին: Եթէ հնարաւորութիւն չը կայ բժշկի դիմելու, այն ժամանակ պէտք է ինքնաբժշկութիւն կատարել: Երկու թէյի գդալ

բորակաթթու (борная кислота) հալեցնել երկու բաժակ եռուն ջրի մէջ, սառեցնել. ապա օրական մէկ անգամ այս լուծվածքով (իհարկէ ոչ ամբողջ լուծվածքով, այլ մի քիչ լցնել յատկացրած ափսէի մէջ) լուանալ շանկրը: Լուանալիս չը պէտք է խոցը շփել, ապա թէ ոչ սաստիկ ցաւ կառաջանայ, արիւն կը հոսէ և վերքը աւելի կը բորբոքվի: Մի կտոր մաքուր բամբակ թրչել յիշեալ հեղուկի մէջ, ապա քամել շանկրի վրայ. այսպէս միքանի անգամ. ապա զգոյշ չորացնել խոցը մաքուր բամբակով (չը շփել վերքը, այլ բամբակը դնել վրան և թոյլ սղմել). այսպիսով վերքը լաւ մաքրելուց և չորացնելուց յետոյ ցանել քսէրօֆորմ (ксероформ) պօրօշօկից: Յետոյ դնել փոքրիկ շերտ մաքուր չոր բամբակ և անդամը փաթաթել բինտով (марлевой бинт): Փաթաթելիս չը պէտք է սղմել, ապա թէ ոչ արիւնը կանգ կառնէ և անդամը կուռչի. այլ պէտք է շատ թոյլ փաթաթել ու կապել: Այսպէս պէտք է վարվել ամեն օր կանոնաւոր կերպով, մինչև որ շանկրը կանհետանայ: Փափուկ շանկրի միջոցին ոչ մի ներքին դեղ հարկաւոր չէ ընդունել: Այլ միայն անհրաժեշտ է զինուց և օղիից ձեռք քաշել, հակառակ դէպքում շանկրը շատ երկար կը տևէ:

Քսէրօֆորմ փոշուց աւելի լաւն ու զօրեղը

իօդօֆորմ (іодоформ) է, բայց սրա պակասութիւնը իր սաստիկ վատ հոտի մէջն է. որը իհարկէ ամեն մի քայլափոխում մատնում է հիւանդի ախտը: Եթէ հոտից չը վախենալ, աւելի խորհուրդ կը տանք գործածել իօդօֆորմը: Կան և ուրիշ դեղեր շանկրի բժշկութեան համար, միայն թէ անմատչելի են ամեն մի պատահական մարդու համար (այսինքն ոչ բժիշկների) և առանց բժշկի ստորագրութեան չեն արվում դեղատներից: Մեր յիշած դեղերը շատ մատչելի են և խնամքով գործածելու դէպքում նրանք անպայման կը բժշկեն հիւանդութիւնը: Շանկրով վարակված անձը պարտաւոր է վերին աստիճան մաքրութիւն պահպանել, սպիտակեղէնը շուտ շուտ փոխել, ձեռքերը շուտ շուտ լուանալ կարքօլեան սապօնով (карболовое мыло) և հնարաւորութեան չափ խուսափէ առողջ մարդկանց հետ համբուրվելուց, ձեռք տալուց և շփվելուց:



Ս Ի Ֆ Ի Լ Ի Ս

Մարդկութեան բարեկեցութեան ամենակատաղի թշնամիներից մէկն է սիֆիլիսը։ Դեռ շատ հին դարերում յայտնի է եղել նա և այժմս էլ երկրագնդիս վրայ համարեա չկայ մի անկիւն, որ տեղ տարածված չլինի սիֆիլիսը։ Սիֆիլիսի թոյնը չէ բաւականանում մարմնի որևէ մասը վարակելով, այլ նա բազմանում է և միախառնվելով արեան հետ վարակում ամբողջ մարմինը։ Հէնց սրանով էլ նա սոսկալի է և տարբերվում է միւս վատ հիւանդութիւններից, որոնք բաւականանում են միայն մի կամ մի քանի օրգաններ վարակելով։

Մենք շատ մանրամասնաբար չենք կանգ առնիլ սիֆիլիսի վրայ, ապա թէ ոչ հատորներ են հարկաւոր, և մանաւանդ չենք վերլուծիլ սիֆիլիսի բժշկութիւնը, որովհետև նրա բժշկութիւնը շատ բարդ է, լուրջ է, կարևոր են տարիներ և բացի մասնագէտ բժշկից, ոչ ոք, նոյնիսկ ոչ մասնագէտ բժիշկ, չէ կարող բժշկել։ Մեր ամենաանկեղծ խորհուրդն է — հէնց որ մարմնի մէջ երևան եկան սիֆիլիսի որևէ նը-

շաններ կամ թէ գոյացաւ կոշտ շանկր, անյապաղ դիմել մասնագէտ բժշկի։ Սիֆիլիսի թոյնը սաստիկ վարակիչ է, նա անցնում է սեռական մերձաւորութեան, համբոյրի, շփման միջոցով։ Սիֆիլիսով հիւանդ մարդի գործածած շորերը, պնակները, ծխախոտը, բաժակը և այլ իրերը կարող են վարակիչ լինել, որովհետև հիւանդի թոյնը կարող է կաշի նրանց և ապա անցնել աւոողջներին։ Նկատված է, որ մէկ անգամ սիֆիլիսով վարակված մարդը, միւս անգամ այլևս ազատ է մնում վարակվելուց։ Սիֆիլիս հիւանդութիւնը իր ամբողջ ընթացքում ունի երեք շրջան։ Առաջին, երկրորդ և երրորդ շրջաններ։



I

ՍԻՖԻԼԻՍԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Կ Ո Շ Տ Շ Ա Ն Կ Ր

Սիֆիլիսի թոյնը ընկնելով առողջ մարմնի վրայ իրան բարեյաջող տեղում (քերծվածք, ճանկերտվածք, վէրք և այլն) սկսում է աննկատելի կերպով գործել և իր համար բոյն պատրաստել: Թոյնը կպած բոպէից մինչև շանկրի բացվելը անցնում է 8—20 օր: Այս ժամանակն անցնելուց յետոյ թոյնի կպած տեղում գոյանում է կոշտուկ, որ շօշափելիս ունենում է խրճուկի կարծրութիւն: Կոշտուկի մեծութիւնը հասնում է մինչև լոբու մեծութեան և սահմանները բաւական որոշվում են առողջ մասերից: Աստիճանաբար կոշտուկի վրայի կաշին նրբանում է, փափկում, կարմիր գոյն ստանում և փայլում: Կոշտուկի մէջ գոյանում է փոքր բանակութեամբ թարախանման հեղուկ, որ չորանում է և շերտաւորվում: Շօշափելիս այս խոցի յատակը, բոլորքը կոշտ են. հէնց սրանով հեշտութեամբ կարելի է որոշել կոշտ շանկրը կակուղից. բացի այդ, ինչ-

պէս վերևում ասել ենք, փափուկ շանկրի խոցերը լինում են միջանի հատ, մինչդեռ կոշտ շանկրը համարեա միշտ ունենում է մէկ խոց: Փափուկ շանկրը երևում է վարակվելուց 1—3 օր յետոյ, իսկ կոշտ շանկրը մօտ 3 շաբաթ յետոյ. փափուկ շանկրից հոսում է թարախանման հեղուկ, իսկ կոշտ շանկրից՝ ալրիւնանման ջրալի հեղուկ: Փափուկ շանկրի ժամանակ, եթէ ուռչում են մօտակայ խուլերը, նրանք սաստիկ ցաւում են և թարախակալում են, մինչդեռ կոշտ շանկրի միջոցին ուռած գեղձերը (խուլերը) չեն ցաւում և համարեա չեն թարախակալում:

Կոշտ շանկրը ներկայացնում է սիֆիլիսի նախնական շրջանը: Կոշտ շանկրը գոյանում է անդամի գլխի վրայ, թլպատի ներքին և արտաքին պատերի վրայ, միզանցքի շրթունքներին և երբեմն միզանցքի մէջ: Կնոջ մօտ կոշտ շանկրը գոյանում է մեծ մասամբ բունոցի մեծ շրթունքների վրայ, վեներայի բլրակի վրայ, բունոցի մէջ և այլ մասերում: Բացի սեռական մասերից, կոշտ շանկրը կարող է զարգանալ աչքերի մօտ, կոպէրի վրայ:

Կոշտ շանկրի տեղական բժշկութիւնը, եթէ չէք յանձնիլ բժշկին, կայանում է հետևեալում: Հէնց որ առաջացաւ կոշտուկ, դեղատնից վերցնել американский ртутный пластырь և մի կտոր

կայցնել խոցին. այսպէս շարունակ վարվել մինչև կոշտուկի անյայտանալը: Իսկ երբ արդէն գոյացել է կոշտ շանկրի խոցը և երևում է հոսանք, այն ժամանակ բորակաթթուի (борная кислота) լուծվածքով (մէկ թէյի գդալ դեղից մէկ թէյի բաժակ տաք ջրում, հալեցրած և սառեցրած) նախ զգուշութեամբ լուանալ, չորացնել, ապա ցանել КАЛОМЕЛЬ փոշուց, կամ իօդօֆորի. ապա փաթաթել և այսպէս շարունակ, մինչև խոցի վերջանալը իսկ եթէ շանկրը յամառոտութեամբ մնում է, իսկոյն դիմել բժշկի:

2.

ՍԻՖԻԼԻՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Ուրեմն սիֆիլիսի առաջին շրջանում երևան է գալիս կոշտ շանկրը և ուռչում են մարմնի զանազան խուլերը, այս միջոցին կազմվածքում տեղի չեն ունենում ընդհանուր հիւանդութեան նշաններ: Առաջին շրջանն անցնելուց յետոյ, նոյնիսկ շանկրի բոլորովին անհետանալուց յետոյ, սկսվում է երկրորդ շրջանը, երբ սիֆիլիսի թոյնը ծածկաբար տարածված լինելով արեան մէջ, սկսում է առաջացնել զանազան հիւանդ երևոյթներ: Երկրորդ շրջանում հիւանդութիւնը վարակում է կաշին և նրբաթաղանթները, իսկ ոսկո-

ներն ու ներքին գործարանները դեռ զերծ են մնում թոյնի ազդեցութիւնից: Վարակված մարդը երկրորդ շրջանում զգում է ընդհանուր վատառողջութիւն, երբեմն տենդ. նա լղարում է, գունատվում, նրա հոգեկան տրամադրութիւնը ճնշվում: Միջանի հիւանդների մօտ առաջանում են ընկճատիղմի նման անցողական ցաւեր մերթնակատում, երեսի ջղերի մէջ, կողերի մէջ և այլն: Ապա մարմնի կաշուի վրայ դուրս են գալիս սիֆիլիսային պզուկները, չոր կամ թարախոտ: Այս պզուկները չեն քոր գալիս. սրանով էլ սիֆիլիսի պզուկները որոշվում են ուրիշ պզուկներից: Սիֆիլիսի պզուկները լինում են զանազան տեսակ: Ա. մէկ տեսակ պզուկը նման է լուի կծելուց առաջացած ուռուցքին, բաց կարմրագոյն. մեծութիւնը սկսած կորեկահատից մինչև սիսեռաչափ: Այս պզուկները մնում են 1—3 շաբաթ, ապա բոլորովին անհետանում են: Նրանք կարող են միջանի ժամանակից յետոյ նորից երևալ: Այս վարդագոյն պզուկների սիրած տեղերն են կրծքի և փորի կողքերը. թևերի ներքին կողմերը, երբեմն էլ աւելի ստորին մասերը: Բ. թաց պզուկներ, որոնք սկզբում լինում են մուգկարմրագոյն, կաշուի մակերևոյթից դուրս ցցված: Սրանք երևում են մարմնի համարեա բոլոր արտաքին մասերում: Սրանցից հոսած

հեղուկը սաստիկ վարակիչ է: Այս պզուկները կամ բոլորովին չորանում են և թողնում են մուգ հետքեր, կամ թէ նրանք մեծանում են և գոյացնում թարախոտ խոցիկներ: Դ. թարախապզուկներ, որոնք բաւական մեծ են լինում և կազմում են սիֆիլիսի լուրջ նշաններից մէկը: Դ. նրբաթաղանթների պզուկները, որոնք առաջանում են բերանում, քոթին, կկորդում, քթի մէջ, սեռական քնքոյշ մասերում և յետանցքի շուրջը: Այս պզուկները մոխրագոյն են լինում և յաճախ կերպարանփոխվում են խոցիկների: Սրանցից արտադրված հեղուկը, պարունակելով իր մէջ սիֆիլիսի բոյնը, սաստիկ վարակիչ է: Բերանում այս պզուկներից ունեցած մարդու հետ համըռվելիս շատ հեշտութեամբ կարելի է վարակվել սիֆիլիսով:

3.

ՍԻՓԻԼԻՍԻ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

Սիֆիլիսը չը բժշկած դէպքում առաջանում է երրորդ շրջանը, երբ արդէն մարմնի զանազան մասերը ենթարկվում են քայքայման և հիւժման: Այս շրջանում երևան են գալիս բաւական մեծ ուռոյցներ (գումմա) մարմնի թէ արտաքին և թէ ներքին մասերում: Ուռոյցը վերջիվերջոյ կամ

ծծվում է, թողնելով փոսացած հետք, կամ թէ փթում է, դառնում սիֆիլիսի խոց, որը շատ դանդաղ է բժշկվում: Սիֆիլիսի մեծ կամ փոքր ուռոյցը կարող է գոյանալ կաշուի մէջ, կամ թէ խորքում, որը կամ ծծվում է կամ խոց դառնում: Այս ուռոյցները աւելի յաճախ առաջանում են սրունքների, ճակատի, ծոծրակի և երեսի վրայ: Բերանի մէջ զանազան մասերում և լեզուի մէջ էլ կարող են գոյանալ սիֆիլիսի ուռոյցներ, սակայն սրանք աւելի մանր են լինում և շուտ են դառնում խոցիկներ: Քմբի վրայ գոյացած խոցը կարող է հետզհետէ կռծել քիմքը, խորանալ և անցք բանալ բերանի և քթի միջև: Քթի մէջ սիֆիլիսի խոցը կարող է փթեցնել քթի միջնապատը ու խրճիկները, որից յետոյ վայր է ընկնում քիթը ու այդպիսով այլանդակվում ամբողջ դէմքը: Այնուհետև հիւանդի խօսվածքը դառնում է կոկորդային, անհասկանալի: Քթի մէջ գոյացած խոցից թափվող թարախը ունենում է վատ հոտ և զգվելի շրջապատողների համար:

Սիֆիլիսի ուռոյցներից ու խոցերից շատ լուրջ վնասվում են ոսկոռներն ու նրանց թաղանթը: Ոսկուի մէջ գոյացած խոցը աստիճանաբար փթեցնում է ոսկոռը, որի մեռած մասնիկները թարախի հետ դուրս են թափվում բացված անցքից: Ոսկուաթաղանթի վրայ գոյացած

ուռոյցքն էլ, եթէ թարախակալում է, անցք է բաց անում դէպի դուրս, որտեղից հոսում են թարախն ու փթած մասերը: Այս խոցը կարող է փթեցնել իր տակի ամբողջ ոսկուր: Այսպիսի ուռոյցքներն ու խոցերը բաւական մեծ տանջանքներ են պատճառում հիւանդին:

Մարմնի յօդերն ու մսերն էլ զերծ չեն մնում սիֆիլիսի 3-րդ շրջանի խոցերից: Յանկարծ որևէ յօդի մէջ գոյանում է ուռոյցք, որը հետզհետէ կոշտանում է, մեծանում և յօդի շարժողութիւնը խանգարում: Ապա այդ ուռոյցքը թարախակալում է: Սիֆիլիսի ուռոյցքից մսերը դառնում են դգայուն, նրանց մէջ զգացվում են սուր ցաւեր և կծկումներ: Յաճախ ուռոյցքները հասնում են և դառնում խոցեր:

Սիֆիլիսից կարող են փնսսվել նաև ուրիշ գործարաններ. օրինակ, աչքերի արանքումն էլ կարող են գոյանալ խոցիկներ, որոնք կարող են կուրութեան պատճառ դառնալ: Ապա սիֆիլիսի թոյնը կարող է մտնել ձուանների մէջ, որոնք այնուհետև ուռչում են, բաւական մեծանում. սակայն այս ուռոյցքը բոլորովին չէ ցաւում նոյնիսկ սեղմելիս: Թոքերը, շիգարը, սիրտը և և այլ ներքին գործարաններ նմանապէս վարակվում են սիֆիլիսի թոյնով, որոնք կամ ուռչում են, մեծանում և կամ թէ նրանց մէջ գոյանում են

խոցեր: Գանգուղեղը, մէջքուղեղը և շղափին ամբողջ համակարգութիւնը ենթակայ են սիֆիլիսի հիւծումներին: Շատ յաճախ հոգեկան ու շղափին զանազան հիւանդութիւններ հետևանքներ են սիֆիլիսի: Սիֆիլիսի ուռոյցքներ մեծ ու փոքր մեծութեամբ գոյանում են գանգուղեղի վերին մասերում, ողնուղեղում, որոնց հետևանքն լինում են սոսկալի գլխացաւ, անքնութիւն և շղափին այլ տառապանքներ ու երբեմն էլ անդամալուծութիւն:

Քանի որ սիֆիլիսի թոյնը խառնվում է արեան հետ և տարածվում մարմնի բոլոր մասերը, հասկանալի է, որ նա թափանցում է թէ տղամարդի ձուանների մէջ և թէ կնոջ ձուարանները: Ուրեմն երբ սիֆիլիսի առաջին ու երկրորդ շրջանով բռնված մարդու հետ սեռական մերձաւորութիւն է կատարվում, սերմի հետ անցնում է նաև սիֆիլիսի թոյնը. պարզ է, որ այդ սերմի բեղմնաւորած էակը կարող է սիֆիլիսոտ լինել: Սրանով էլ եզրակացրած և հաստատված է սիֆիլիսի ժառանգականութիւնը: Ուրեմն սիֆիլիսոտ սերունդ չարտադրելու համար սիֆիլիսով հիւանդ մարդիկ բոլորովին չը պէտք է ամուսնանան, մինչև հիմնաւոր բժշկվիլը, հակառակ դէպքում կարտագրեն հաշմանդամ ու թշուառ էակներ, անպէտք թէ ծնողների և թէ հասարա-

կութեան համար նրանք կը լինեն մեծ պատիժ
 ու ծանր բեռն մարդկութեան վրին: Առողջ
 մարդիկ շատ զգոյշ պէտք է լինեն սիֆիլիսոտ
 մարդկանց հետ գործ ունենալիս, գիտենալով, որ
 նրանց բերանի թուքը, թարախը, արիւնը, շո-
 րերն ու գործածած իրերը վարակւած են սիֆի-
 լիսի թոյնով, որ կարող է անցնել ուրիշներին:



XI.

ՍԻՓԻԼԻՍԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Որքան որ սիֆիլիսը սոսկալի և վատ ախտ
 է, և որքան էլ նա թափանցում է մարմնի բո-
 լոր մասերը, այնուամենայնիւ նա անպայման
 բուժելի ցաւ է: Սիֆիլիսից իսպառ ազատվելու
 համար անհրաժեշտ է համբերութիւն, ժամանակ
 ու խելացի բժշկութիւն: Միայն թէ ինքնաբժըշ-
 կութիւնը սիֆիլիսի դէպքում ոչ միայն անօգուտ
 կը լինի, այլ և նոյն իսկ վնասակար, որովհետեւ
 զանազան բարդ ու ծանր բժշկական գործողու-
 թիւններ ինքը՝ հիւանդը անկարող է կատարել,
 ու այդպիսով անօգուտ ժամանակ կորցնելով՝
 ցաւը հետզհետէ կը զարգանայ, կը մտնի իր յե-
 տագայ շրջաններէ մէջ ու կը հիւծէ հիւանդի
 մարմինը: Յամենայն դէպս ի ծանօթութիւն և
 մխիթարութիւն հիւանդի մենք շատ կարճառօտ
 կը տանք սիֆիլիսի բժշկութեան ընդհանուր
 սխէման:

Սիֆիլիսի բժշկութիւնը բաժանւում է երեք մասի. ա—հակասիֆիլիսային բժշկութիւն. բ—սիֆիլիսից առաջացած զանազան բարդութիւնների բժշկութիւն և գ—առողջապահական ու դիէտիկական բժշկութիւն:

Ինչպէս գիտենք, սիֆիլիսի վարակման առաջին հետեանքն է կոշտուկն ու խոցը, որի բժշկութեան մասին արդէն խօսել ենք համապատասխան գլխում: Սիֆիլիսի ընդհանուր ներքին բժշկութեան համար մինչև 1910 թ. կէսերը կար սնդիկը և նրանից պատրաստած այլ և այլ դեղերը: Սնդիկը հիմնական և զօրեղ դեղ է սիֆիլիսի դէմ, միայն թէ նրանով պէտք է բժշկվել տարիներ շարունակ: Մեծ մասամբ սնդիկը գործ էածւում կաշուի տակ սրսկումներով և կաշուի վրայից քսելով: Ներքուստ՝ ստամոքսի միջոցով համարեա թէ նա չէ գործածւում: Սնդիկի մահլամը, անպայման թարմ պատրաստած, (պէտք է գնել դեղատանը) քսւում է հետեալ կերպով: Նախ պէտք է ասենք, որ դեղատնից պէտք է վերցնել սնդիկի մահլամը 2-ական գրամ բաժանված փաթէթներով: Քսել պէտք է մարմնի զանազան մասերում, որովհետեւ շարունակ մի տեղում քսելով կարող է կաշուի բորբոքում առաջացնել: Որպէսզի չը մոռացվի քսած տեղը և պահպանվի որոշ սխառէմ,

դրա համար առաջարկել են հետեալ ցուցակը: 1-ին օրը մէկ փաթէթ քսել աջ թևի ներքին երեսին: 2-րդ օրը՝ ձախ թևի ներքին երեսին: 3-րդ օրը՝ աջ շէքի ներքին երեսին: 4-րդ օրը՝ ձախ շէքի ներքին երեսին: 5-րդ օրը՝ կրծքի աջ կողմը: 6-րդ օրը՝ կրծքի ձախ կողմը: 7-րդ օրը չը քսել, այլ պէտք է նստել տաք վաննա, յետոյ սապոնով լաւ լուանալ ամբողջ մարմինը: 8-րդ օրը նորից սկսել սնդիկի քսումը վերոյիշեալ կարգով: Վաննա կարելի է ընդունել աւելի շուտ շուտ: Եթէ հիւանդը բաւական ուժեղ է, թող ինքը քսէ սնդիկը. իսկ եթէ նա թոյլ է և անկարող, այն ժամանակ երկրորդ անձը պէտք է կատարէ քսումը, միայն թէ ոչ մերկ ձեռքով, այլ նախ հագնել ռեզինի ձեռնոց, որ ծախվում է դեղատանը: Սա նրա համար է, որ սնդիկը շփոզի մարմնի մէջ չը թափանցէ և վատ ազդեցութիւն չունենայ: Շփել պէտք է մօտ $\frac{1}{4}$ ժամ, մինչև որ կաշին կը կորցնէ ճարպային փայլը և կստանայ պողպատի գոյն: Քսելիս պէտք է անել օդակաձև շարժումներ: Սնդիկի քսումը պէտք է կատարել 30—40 անգամ, տարին երկու կուրս, 2—3 տարի շարունակ:

2ը պէտք է մոռանալ, որ սնդիկը, բարերար ազդեցութիւն ունենալով հանդերձ, փաստակար է ատամների ու լնդէրքների համար, որոնք սկսում

են շարժվել ու փխրվել: Եւ քանի որ սնդիկը արձակում է գոլորշիներ, ուստի քսումն կատարած սենեակի մէջ պէտք է շուտ շուտ օդը մաքրել, պատուհանները բանալով: Մնդիկով բժշկվող հիւանդը անպայման պէտք է օրական 4—6 անգամ բերանը ողողէ Բէրտօլէտեան աղի լուծվածքով ($\frac{1}{4}$ թէյի գդալ մէկ բաժակ ջրի մէջ): Ատամները պէտք է մաքրել կաւիճով կամ ատամի փոշիով գոնէ շաբաթը 2 անգամ: Եթէ սնդիկ քսելու միջոցին մարմնի կաշուի վրայ երևան գանազան պղուկներ, պէտք է ընդհատել քսումը, մինչև պղուկների անհետանալը: Կամ թէ քսելու շրջանում եթէ առաջանայ թուրքի մեծ հոսանք, նմանապէս ընդհատել շրջվելը և սպասել:

Մնդիկի սրսկումը աւելի նպատակայարմար է, քան թէ քսումը: Միայն թէ սնդիկ սրսկելը շատ հեշտ չէ և ամեն մի պատահական մարդ, նոյնիսկ անփորձ ֆէլդշերը, չեն կարող կատարել: Ուստի սնդիկի սրսկումը պէտք է անէ հմուտ բժիշկը: Մնդիկը սրսկվում է մէջքի ստորին մասում, յետայտի մէջ:

Բացի սնդիկից սիֆիլիսի դէմ կայ և ուրիշ լաւ միջոց, դա իօդային կալին է (iodistyy kalii): Այս դեղը աւելի լաւ է ազդում սիֆիլի-

սի 3-րդ շրջանում: Սովորաբար նա գործ է ածվում այսպէս.

Rp. Kali jodati 4,0

Aq. destillat 200,0

MDS. По 1 стол. ложкѣ 3 раза въ день.

Այս դեղից օրը 3 անգամ խմել հացի գդալով ուտելուց յետոյ: Աւելի լաւ է կաթով ընդունել դեղը ստամոքսը դեղից չը խանգարելու համար:

Բացի յիշեալ դեղերից սիֆիլիսի դէմ առաջներում գործ էին ածվում զանազան դէկօխտներ: Դրանից ամենայայտնին է Յիտմանի դէկօխտը, որը լինում է 2 տեսակ, թոյլ և ուժեղ: Այս դէկօխտները պէտք է վերցնել միմիայն դեղատանը: Հիւանդը առաւօտեան, դեռ անկողնում պառկած խմում է 2 բաժակ Յիտմանի ուժեղ դէկօխտը, տաք-տաք, ապա լաւ ծածկվում է և պառկած մնում 2 ժամ, ճաշից յետոյ խմում է 2 բաժակ թոյլ դէկօխտից: Այսպէս մի առժամանակ, Իսկ երբ դէկօխտի գործածելուց առաջանայ ստամոքսի խանգարումն, իսկոյն ընդհատել նրա խմելը: Ինչ վերաբերում է հիւանդի կեանքի եղանակին, պէտք է գիտենալ, որ նա անպայման պէտք է հեռու մնայ ոգելից խմիչքներ գործածելուց, զանազան չափազանցութիւններից, անքուն գիշերներից ու վատ կեանքից:

Նա պէտք է ուսէ գիւրամարս սննդաբար կերակուրներ,—ձու, կաթ, միս, կարագ և այլն: Անպատճառ պէտք է թողնէ ծխելը, որովհետև ծխելու միջոցին սիֆիլիսոտի բերանում միշտ գոյանում են խոցեր, որոնք շատ յամառ են բժշկվում: Ընդհանրապէս ասած, հիւանդը պէտք է աշխատէ իր ուժերը կազդուրել, լաւ բնել, մաքուր օդ շնչել, մարմինը մաքուր պահել: Խնայելով շրջապատողներին, նա մարդասիրաբար պէտք է աշխատէ մօտիկ շփում չունենալ նրանց հետ և չը վարակել: Այսպիսի բարեկեցիկ պայմաններում և կանոնաւոր բժշկութեամբ սիֆիլիսը անպայման բուժվում է: Բացի յիշեալ հակասիֆիլիսային դեղերից, 1910 թւական պրօֆ. Էրլիխը բազմաթիւ փորձերից յետոյ մարդկութեանը պարգևեց սիֆիլիսից շուտ փրկվելու հրաշագործ դեղ, այն է «606»-ը կամ այլ անունով «Սալվարսանը»: Սրանով մէկ կամ երկու սրսկումը մի քանի օրվայ ընթացքում համարեա բժշկում է սիֆիլիսը, մաքրելով ու չորացնելով սիֆիլիսի ամենամեծ ու խորունկ խոցերն անգամ: Այս դեղի մասին մենք չենք խօսիլ երկար, որովհետև նրա սրսկումը կատարում է միմիայն մասնագէտ բժիշկը, որից զատ ոչ ոք, նոյն իսկ բժիշկներ, անկարող են կատարել:

XII

ՔԱՄՈՏՈՒԹԻՒՆ

Քամոտութիւնը թէև ծանր հիւանդութիւն է, սակայն նա վատ և գարշելի ախտ է: Քամոտ մարդը, ուր էլ որ մտնի, ինչ շրջանում էլ որ լինի, գարշեցնում է շրջապատողներին: Քամին կամ գազը մեծ քանակութեամբ հաւաքվելով ստամոքսի ու աղիքների մէջ առաջացնում է փքում, փորացաւ, ծակոցներ ու դողոց: Հիւանդը չը դիմանալով քամու փքումին, ամեն ըոպէ, թէ մենակ և թէ մարդկանց մօտ աւամայ թողնում է բամին ու գարշահոտութիւն տարածում: Ուստի պէտք է ժամ առաջ բժշկվել այդ ախտից, ապա թէ ոչ նա դառնում է սովորութիւն և պահանջ: Քամոտութեան դէմ եղած դեղերը բաւական էժան են, մատչելի ու անփնառ: Դեղատնից վերցնել.

Rp. Fol. menthae

» melissae

Flor. chamomillae vulg.

Semina anisi aa 10.0

MDS. Заварить какъ чай.

Այս դեղից 1 թէյի գդալ, ինչպէս թէյ,
եփել ու խմել ամեն օր 2—3 շաբաթ շարունակ:
Պատրեղէն ու հաց քիչ ուտել: Եթէ հիւանդը
ունի սովորական ամրութիւն, ամեն առաւօտ
քաղցած փորին թող խմէ մի բաժակ հում ջուր:



XIII

ՈՏՔԵՐԻ ՔՐՏԻՆՔԸ ԵՒ ԳԱՐՇԱՀՈ- ՏՈՒԹԻՒՆԸ

Կան մարդիկ, որոնց ոտքերը, ձեռքերը, թևատակերը համարեա միշտ քրտնում են և անհանգիստ անում նրանց: Քրտինքը անընդհատ արտադրվելով բորբոքում է կաշին, այրում, պղուկներ առաջացնում և նոյն իսկ ցաւեր պատճառում: Բացի այդ նա մնալով մարմնի վրայ հոտում է և զգալի դառնում շրջապատողների համար: Ամենից վատը ոտքերի խիստ քրտնելն է, որի ժամանակ տարածվում է զգուշի հոտ: Հիւանդը չի կարողանում մօտենալ մարդկանց, բոլորը փախչում են նրա վատ հոտից: Քրտինքի պատճառները բազմաթիւ են: Ամբողջ մարմնի մըշտական քրտնելու պատճառ կարող է լինել սակաւարինութիւնը, թոքախտը, ջղային հիւանդութիւնը և այլն: Թևատակերի ու ոտքերի քրտնքի պատճառը յաճախ մարդու աշխատանքի եղանակն է, օրինակ շատ մանգ գալը: Ինչևէ սաստիկ քրտինքը և վատ հոտը աննօրմալ երևոյթ-

հեր են, ուստի պէտք է մտածել բժշկելու մասին: Ամբողջ մարմնի քրտինքի դէմ լաւ է ամուր գետում լողանալը: Ոտքերի քրտինքի ու հոտի դէմ վարվել հետևեալ ձևով.—ամեն օր ոտքերը լուանալ զօլ ջրով ու կարթօլեան սապօնով, յետոյ լաւ չորացնել: Դեղատնից վերցնել՝

Rp. Ac. salicyl. 1.0

Talc. venet. pulv.

Amyli puri aa 45,0

MDS. Присыпка.

Չորացնելուց յետոյ այս փոշուց ցանել ոտքերի քրտնոդ մասերին ու մատների արանքներին: Այսպէս ամեն օր, մինչև լիովին բժշկվելը: Գուլպաները անպայման շուտ-շուտ փոխել:




XIV.

ԲԵՐԱՆԻ ՎԱՏ ՀՈՏԸ

Կան մարդիկ, որոնց բերանից փչում է վատ հոտ. յաճախ մի բանի քայլ տարածութեան վրայ զգացվում է այդ հոտը: Բնական է, որ այդպիսի մարդուց խորշում են ոչ միայն սլատահական մարդիկ, այլև իր հարազատները: Պատահում է, որ զգայուն մարդը հանդիպելով բերանից վատ հոտ արտաշնչող մարդի, իսկոյն սիրտը թափում է:

Գարշելի հոտի պատճառները զանազան են լինում.—խրոնիքական գարշահոտ հարբուխը, բերանում գոյացած թարախոտ խոցերը, թարախոտ բրօնխիտը, (ստամոքսի կատարը) և այլն: Հետևապէս մինչև չիմանալ պատճառը, չի կարելի բժշկել վատ հոտը: Երբ քիչ է փչում հոտը, վերցնել Aristol փոշուց 3 գրամ և օրական 2—3 անգամ քիչ քիչ քիթը քաշել: Եթէ բերանում կան խոցեր և կամ բերանի թաղանթը, լնդերները բորբոքված են, վերցնել $\frac{1}{4}$ գրամ бертолетовая соль-ից մէկ բաժակ ջրում հալեցնել ու

բերանը ողողել օրական միքանի անգամ: Բացի սրանից կարելի է վերցնել դեղատնից պատրաստի зубной алексир-ին, որը շատ անուշահոտ է, և նրանով բերանը շուտ-շուտ ողողել: Եթէ վատ հոտը փչում է թոքերից, այն ժամանակ վերցնել մէկ բաժակ տաք ջուր, մէջը խառնել մէկ թէյի գլխով տէրբէնտին և բաժակից բարձրացած գոլորշիները ներշնչել: Ինչ էլ որ լինի, անհրաժեշտ է բերանը ամեն օր ողողել վերոյիշեալ դեղերով և ատամներն էլ շաբաթը 1—2 անգամ մաքրել ատամնափոշիով: Իսկ եթէ բերանում կան փչացած ատամներ, որոնք նմանապէս կարող են վատ հոտ տարածել, շուտով դիմել ատամնաբուծի, որը կամ կը մաքրէ ատամը ու լցնէ, և կամ կը հանէ:



XV.

Ո Չ Լ Ո Տ Ո Ի Թ Ի Խ Ն

Մարմինը կեղտոտ պահելուց և հակաառողջապահական պայմաններում գտնվելուց մարմնի վրայ և շրթերի մէջ առաջանում են ոչիւններ: Սրանք լինում են երեք տեսակ—գլխի ոչիւններ, շրթերի կամ մարմնի ոչիւններ և շէքերի կամ սեռական մասերի ոչիւններ:

Առաջին տեսակ ոչիւնները, ինչպէս երևում է հէնց անունից, գոյանում են գլխի վրայ մազերի մէջ, սակայն աղքատների և կեղտոտ մարդկանց մօտ նրանք գլխի մազերից անցնում են դէպի մօրուքը, ունքերը, բելքերը և այլ մասերը: Ոչլոտութեան պատճառները, բացի անմաքրութիւնից, լինում են նաև վատ սնունդը, աղքատութիւնը, մարմնի ընդհանուր քայքայումն և այլն: Երեխաների մէջ աւելի է տարածված ոչլոտութիւնը, քան թէ հասակաւորների մէջ: Գլխի ոչիւնները բաւական քանակութեամբ դնում են ձուկներ, որոնք կաշում են մազերին ու տե-

սանելի են շրջապատողներին. դրանք ժողովրդի լեզուով կոչվում են անիծներ:

Ոչիւները շարունակ կծելով ու գրգռելով կաշին, առաջացնում են սաստիկ քոր ու անհանգստութիւն. մանաւանդ զգայուն երեխաները այն աստիճան ուժեղ քորում են ոչլոտ տեղերը, որ նոյնիսկ եղունկներով քերծում են կաշին ու արիւնհոսութիւն առաջացնում:

Փլխի ոչիւներից ու անիծներից ազատվելու համար գլուխը ամեն օր սապոնով լաւ լուանալ, խիտ սանրով մազերը սանրել ու մաքուր սպիտակեղէն հագնել: Եթէ այսպիսի լուացումներից ոչիւները չեն կորչում, այն ժամանակ վարվել հետևեալ կերպ. — քնելուց առաջ գլխին քսել նաւթ և գլուխը շորով փաթաթել: (Շատ զգոյշ լինել և կրակի չը մօտենալ, ապա թէ ոչ նաւթը կարող է բռնկվիլ ու վառվիլ): Առաւօտեան գլուխը լաւ լուանալ սապոնով ու տաք ջրով: Այսպէս վարվել այնքան օր, մինչև ոչիւները անհետանան: Եթէ անիծները դեռ կալած են մազերին, վերցնել կէս քացախ կէս ջուր, իրար խառնել և նրանով լուանալ մազերը, մինչև անիծները ոչնչանան:

Մարմնի ու շորերի ոչիւները միւս տեսակներից ամենախոշորներն են և նրանք բուն են դնում բացառապէս սպիտակեղէնի ու վերնաշորերի

մէջ: Քաղցած ժամանակ նրանք անցնում են մարմնի վրայ կերակրվելու համար. իրանց խայթոցով մարմնի արիւնը ծծելուց և կշտանալուց յետոյ վերադառնում են շորերի մէջ: Այստեղ նրանց սիրած տեղն է ծալքերն ու կարի կողքերը: Շորի ոչիւները սաստիկ ընդունակ են արագ բազմանալու: Նրանց բազմանալու ժամանակ մարդու մարմինը բաւական տուժում է, որովհետև նրանք շարունակ կծոտելով ու գռգռելով կաշին առաջացնում են քոր, ճանկրվածք, պրզուկներ և արեան փոքրիկ հոսանքներ: Շորի ոչիւները աւելի տարածված են հասակաւորների մէջ, քան թէ երեխաների:

Շորի ոչիւներից ազատվելու համար պէտք է շուտ շուտ լողանալ սապոնով, իսկ սպիտակեղէնն ու շորերը շուտ շուտ լուանալ, եփել, մինչև որ ոչիւները անհետանան: Ուրիշ ոչ մի դեղ չի կարող օգնել, եթէ հիւանդը կեղտոտ ու անմաքրասէր մարդ լինի:

Սեռական գործարաններն անմաքուր պահելուց թէ տղամարդի և թէ կնոջ սեռական արտաքին մասերում, մազոտ տեղերում, գոյանում են սովորական ոչիւներից զատ մի ուրիշ տեսակ մանր, խիստ կծող ոչիւներ: Սրանք շատ արագ բազմանում են և հետզհետէ տարածվում դէպի կուրծքը, թևերի տակը, ունքները և այլ մազոտ

մասերը: Բաւական է մէկ ոչիլ ընկնի մաքուր մարմնի վրայ, և արդէն գոյանում են ահագին քանակութեամբ ոչիլներ: Այս ոչիլը մազի արմատի մօտ, սեղմ կաշում է կաշուին, մասամբ խրվելով կաշվի մէջ և իր սուր խայթոցը ցցում է մարմնի մէջ: Այսպիսով յիշեալ ոչիլները սաստիկ անհանգիստ են անում վարակված մարդուն, որը շարունակ քորում է շէքերը այնքան խիստ, որ յաճախ ճանկրթում է կաշին և արիւնհոսութիւն սկսում: Հասարակական կանայք, լինելով անմաքուր, շատ յաճախ իրանց այցելու հիւրերին տալիս են որպէս սիւրպրիզ այս ոչիլները, ի հարկէ, մերձաւորութեան շրջման միջոցով: Մարդկանց բաւական մեծ մասը երբեք վարակված կը լինի այդ ոչիլներով և քաշած կը լինի նրանց պատճառած աննկարագրելի բորբ:

Երբ արդէն ոչիլները կաշում են մարմնին և բազմանում, անհրաժեշտ է խիստ մաքրութիւն պահել, ձեռքերը՝ վարակված մասերը քորելուց յետոյ՝ չը դիպցնել ունքերին, կոնատակերին և մարմնի այլ մասերին, որովհետեւ ոչիլների ձուրկները կամ հէնց կենդանի ոչիլները՝ եղունկների տակ մնալով, կարող են անցնել մարմնի ուրիշ մասերին և այնտեղ էլ բազմանալ: Հեռու պէտք է մնալ ընտանիքի միւս անդամներից, նրանց

էլ չը ոչլոտելու համար: Սպիտակեղէնը պէտք է առանձին լուանալ և լաւ եփել սօղալի մէջ: Դեղատնից վերցնել 15 կոպէկի ПОЛИТАНЬ կոչված դեղը, որ պատրաստի ծախվում է բոլոր դեղատներում, և օրը մէկ անգամ նրանից լաւ քսել ոչլոտած մասերը: Երեք օրից յետոյ, երբ մի քանի անգամ արդէն լաւ քսած կը լինի յիշեալ դեղը և այլ ևս բոր չը կայ, իսկոյն գնալ տաք բաղնիս, լողանալ, կարթօլեան սապօնով լաւ լուանալ ոչլոտ տեղերը մասնաւորապէս ու ամբողջ մարմինը ընդհանրապէս: Եթէ մարմինը բաւական թաւ է և մազերը շատ են, աւելի լաւ կը լինի մի կերպ մազերը խուզել կամ ածիլել: Թիֆլիսի բաղանիսներում, մազերը հեռացնելու համար կայ հիանալի միջոց տարօ կոչված ցեխը, որը բաւական էժան է, հանրամատչելի ու մի քանի րոպէում մաքրում է մարմնի բոլոր մազերը: Եթէ բաղնիսից յետոյ, գէթ փոքրիկ կասկած կայ ոչիլ մնալու վրայ, այսինքն երբ նորից զգացվում է բոր շէքերի մէջ և կամ հէնց նկատվում է ոչիլը, իսկոյն կրկնել նոյն գեղի քսելը և երկու օրից յետոյ նորէն գնալ բաղնիս ու սապօնով լաւ լուացվել: Այնուհետեւ լաւ կը լինի զգոյշ կենալ նորէն ոչլոտվելուց, խուսափելով կեղտոտ կանանց հետ շփվելուց և անպայման մաքուր պահելով սեռական մասերը:

Մ Ա Յ Ա Ս Ի Լ

Մայասիրը բաւական տարածված հիւանդութիւն է ժողովրդի մէջ: Մայասիրին ենթակայ են հարուստ թէ աղքատ, լղար թէ չաղ, տղամարդիկ թէ կանայք առանց խտրութեան: Նա առաջանում է հասակաւոր և ծեր շրջաններում, այնպէս որ փոքրահասակները համարեա ազատ են այդ հիւանդութիւնից: Մայասիր հիւանդութիւնը կայանում է հետեւեալում:—Յետանցքի (ուղիղ աղիք) սև արեան երակները զանազան պատճառներից աստիճանաբար լցվում են արեան մեծ քանակութեամբ և ուռչում: Արիւնը ազատ շարժում չունենալով կանգ է առնում յիշեալ երակների մէջ: Այդպիսով յետանցքի պատերը ուռչում են, լայնանում և հասն օղակներ կազմում: Այս օղակները այնքան են լցվում արիւնով և մեծանում, որ յաճախ յետանցքից դուրս են գալիս և կախվում, այնպէս որ զրսից նրանք նկատելի են դառնում: Յետանցքի թաղանթը դառնում է սաստիկ զգայուն և բարակ: Քայլելուց, քրտին-

քից, շփումից և յետանցքի արտաթորութիւնից հետզհետէ բորբոքվում է ուռած յետանցքը և ցաւեր առաջացնում: Քանի որ ուռոյցը և բորբոքումը սաստիկ չեն զարգացել, գեռ հիւանդը դիմանում է ցաւերին, սակայն երբ ուռած օղակները մեծանում են և բորբոքումը տարածվում գէպի յետանցքի խորքերը, այն ժամանակ առաջ են գալիս սոսկալի ցաւեր ու տանջանքներ: Ամեն անգամ արտաթորելիս յետանցքում զգացվում են սաստիկ այրոց, քոր: Եթէ ցաւը թողնվում է առանց բժշկութեան, նա բարդանում է և լուրջ հետեւանքներ առաջացնում: Ուռած օղակները տրաքվում են, որոնցից սկսվում է արիւնհոսութիւն, թէև արիւնհոսութիւնից յետոյ հիւանդը փոքր ինչ թեթևութիւն է զգում: Կամաց կամաց առաջանում են աղիքների փքումն, զկռոց, սրտախառնութիւն, գլխապտոյտ, սրտի թրթռոց և այլն: Մայասիրի արիւնհոսութիւնը կարող է շառանալ, և վերջիվերջոյ առաջացնել սակաւարիւնութիւն: Հիւանդը սաստիկ գոռնատվում է, թմրում, ախորժակը կորցնում, ընդհանուր թուլութիւն և վատ տրամադրութիւն զգում: Վատ տեսակի մայասիրը նոյն իսկ կարող է հիւանդի կեանքը կործանել:

Մայասիրը վարակիչ հիւանդութիւն չէ, այլ նա առաջ է գալիս որոշ պատճառներից ու կեն-

ցաղավարութիւնից: Մայասիլի գլխաւոր պատճառներն են շարունակ նստակեաց աշխատանքը և մշտական փորկապութիւնը: Առաջին գէպըում, այսինքն նստակեաց ապրուստի ժամանակ, մարմինը չէ ենթարկւում անհրաժեշտ շարժողութիւնների. այնպէս որ մարմնի հեռաւոր մասերում արիւնը շատ դանդաղ է հոսում: Յետափնքի երակները, նստած միջոցին շարունակ ճնշւած են լինում վարից՝ նստաբանով, կողքերից սըղմըված յետայտերով, իսկ վերից՝ ամբողջ փորով և աղիքների ծանրութեամբ: Այսպիսով արիւնը հետզհետէ կանգ է առնում յետանցքի երակներում և ուռցնում նրանց: Այս բանը հաստատուում է այն երևոյթով, որ մայասիլը աւելի շատ տարածված է չինոյիկների, գրողների, գիտնականների մէջ. նա և հաստափոր հարուստների մէջ, որոնք, հեռու հասարակական գործերից, առաւօտից մինչև երեկոյ շարունակ ուտում են ու փափուկ օթեակներում նստում:

Մայասիլը, եթէ հէնց երեցած ժամանակ չէ բժշկւում, այնուհետև նա դառնում է շատ յամառ ու խրօնիքական հիւանդութիւն. ու թէև նա հիւանդի կեանքին անմիջական վտանգ չէ սպառնում, բայց և այնպէս դանդաղ քայքայում է նրա ֆիզիքական ու շղային աշխարհները, և աննկա-

տելի կերպով ապագայ կեանքից տարիներ կըրճատում:

Խրօնիքական փորկապութեան միջոցին, հիւանդը արտաթորելիս շարունակ ուժ տալով, նըքալով, մեծ ուժով դուրս է մղում կոշտացած կղկղանքը, որը սաստիկ սեղմ ճնշելով յետանցքի պատերը, արիւնը վար է մղում, որից և առաջանում է երակների լցումն և յաճախ տրաքումն: Բացի յիշեալ գլխաւոր պատճառներից՝ մայասի են առաջացնում ջիգեարի, սրտի, զաւակատան, ձուարանների և այլ հիւանդութիւններ. յաճախ էլ առատարիւնութիւնը և սեռական անընդհատ մերձաւորութիւնները պատճառ են դառնում մայասիլի:

Մայասիլի բժշկութիւնը այնքան կախված չէ դեղերից, որքան կենցաղավարութեան որոշ եղանակից: Քանի որ արդէն ասացինք, թէ երկարատև նստակեաց աշխատանքը և խրօնիքական փորկապութիւնը կազմում են մայասիլի գլխաւոր պատճառները, ուստի պէտք է վերացնել նրանց: Նստակեաց մարդը անհրաժեշտաբար պէտք է փոխէ իր աշխատանքը, շարունակ շարժողութեան մէջ լինի. պէտք է օրական $\frac{1}{2}$ ժամ զբօսանք կատարէ թարմ օդի մէջ և 5—10 րոպէ սենեակում մարմնամարզութիւն անէ: Սովորական փորկապութեան դէմ անպայման պէտք է

միջոցներ ձեռք առնէ, օրինակ, առաւօտները, բաղցած փորին, խմէ մէկ բաժակ հում սառը ջուր. ուտէ բուսեղէն կերակուր և ծանր դէպքերում առանձնապէս բժշկվի փորկապութիւնից: Բարեկամաբար խորհուրդ կը տանք մշտական փորկապներին՝ երկար և շարունակ չը գործածել լուծողականներ, որովհետեւ նրանք կորցնում են իրանց ոյժը և բացի այդ կարող են աղիքների վերջնական անդամալուծութիւն առաջացնել: Աւելի լաւ է վարից հօքնա տալ (КЛИСТИРЪ) քօլ ջրով: Անպայման պէտք է թողնել գինին, օղին և այլ ոգելից խմիչքեղէն, որովհետեւ ալկոհօլը միշտ բորբոքում է մայասիլի ցաւերը: Թոյլ և սակաւարիւն հիւանդները կարող են գործածել միմիայն սպիտակ լաւ գինուց կէս գինու բաժակ խառնած ջրի հետ: Չի կարելի գործածել կծու, թթու ուտելիքներ, տաւարի միս, թունդ թէյ և սուրճ: Որքան կարելի է շատ գործածել բանջարեղէն կերակուր, կաթ, ձու, խաղող և առհասարակ թեթեւ, սննդաբար կերակուր: Մայասիլով հիւանդներին, նամանաւանդ փորկապներին, օգտակար են հետևեալ հանքային ջրերը. —Վիշի, Էսսէնտուկի, Մարիէնբադ, Կարլսբադ, Կիսսինգէն և այլն:

Եթէ յետանցքից քարշ ընկած ուռոյցները բորբոքված չեն, պէտք է նրանց ուղղել հետևեալ

կերպով. ցուցամատը թռչել նշի իւղով կամ գլիցէրինով, ապա յետանցքից կախված աւելորդ օղակները կամաց ներս սղմել ու միքանի ըռպէ օղակաձև սեղմումներով դէպի ներս հրել: Եթէ ուռոյցները բորբոքված են և զգացվում են այրոց, քոր, տաքութիւն, այնպէս որ հիւանդը չէ կարողանում ման գալ, այն ժամանակ պառկել. վերջնել СВИНЦОВАЯ ВОДА (գործածելու ժամանակ սրուակը թափահարել), սրանով շուտ շուտ թռչել մաքուր բամբակ և դնել յետանցքի վրայ: Կարելի է դնել նա և պարկով սառոյց: Սատիկ ուռած ու փքված միջոցին, յետանցքին կարելի է կպցնել 5—6 տգրուկ: Ման գալիս չը խանգարելու համար, յետանցքին կարելի է քսել նշի իւղ: Երբ մայասիլը խորն է և յետանցքի մէջ սանտիկ ցաւ կայ, պէտք է դիմել բժշկի, որը կը տայ թմրեցուցիչ մոմեր: Եթէ արիւնհոսութիւնը յետանցքի խորքիցն է, այն ժամանակ սրսկել 5 բաժակ սառը ջուր, մէջը հալեցնելով 10 գրան շիպ կամ տաննին: Իսկ այն դէպքերում, երբ յետանցքից կախված ուռուցքները շատ մեծ են և չեն անցնում սովորական բժշկութեամբ, պէտք է դիմել վիրաբոյժ բժշկի, որը նրանց կը կտրէ ու կը հեռացնէ: Այս օպերացիան այնքան էլ ծանր ու երկիւղալի չէ, եթէ հիւանդը դիմէ հմուտ բժշկի: Ուստի և չը պէտք է վախենալ:

XVII.

ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ՁԵՌՆԱԾԱՐԺՈՒԹԻՒՆ

Վատ և անբարոյական դաստիարակութիւնը հէնց մանուկ հասակում առաջ է բերում այնպիսի վնասակար սովորութիւններ, որոնք հետըզետէ ածրանալով մարդու մէջ դառնում են կործանիչ ախտեր ոչ միայն իրեն՝ անհատի, այլ և ամբողջ սերնդի համար: Ուրիշ որեւէ անբարոյականութիւն այնքան շուտ և ամուր չէ պատվաստվում մանուկ հոգու և մարմնի մէջ, որքան սեռական անբարոյականութիւնը: Պատանու անմեղ հոգին, վառվռուն միտքը և ճկուն մարմինը շատ շուտ ազդվում են շրջապատող ապականված մթնոլորտից և վարակվում հեշտատասիրութեամբ, որը և ապագայում բաւական ծանր հետևանքներ է պատճառում նրա կեանքին: Ամենատարածված ախտը պատանի հասակում օնանականութիւնն է: Անկասկած, ամեն մարդ գաղափար ունի այդ կեղտոտ ախտի մա-

սին, և թերևս մարդկանց մեծամասնութիւնը պարապել է դրանով, ուստի նրա մասին մենք կը խօսենք շատ համառօտ և մի փոքրիկ տեսութեամբ՝ հնարաւորութեան չափով կը պարզաբանենք այդ վնասակար սովորութեան էութիւնը:

Օնանականութիւնը այնպիսի հակաբանական գործողութիւն է, որի միջոցով մարդ դուրս է հոսեցնում իր սերմը: Օնանականութեան երեւոյթը կատարվում է՝ անգամը ձեռքերով կամ այլ իրերով շփելով, որի ժամանակ նաև անհրաժեշտաբար սաստիկ լարվում է երեակայութիւնը հեշտասիրական ցինիկ պատկերներով: Օնանականութեան ախտը նոր չէ և հնումը, գեռ Քրիստոսից դարեր առաջ, նա գոյութիւն ունէր: Այդ ախտը օնանականութիւն է կոչվում Յակոբի թող Օնան (Յովնան) Մարգարէի անունով, որովհետև նա միշտ ունենում էր թերի մերձեցումներ և հեշտասիրական հաճոյքներ էր ստանում զանազան արհեստական միջոցներով: Օնանականութիւնը կամ ձեռնաշարժութիւնը հաւասարապէս տարածված է հարուստ և աղքատ, կրթված և անկիրթ դասակարգերի մէջ. նա վարակել է թէ հասակաւորների և թէ անչափահասների, տղամարդկանց և թէ կանանց: Եւ օրէցօր նա հսկայական չափեր է ստանում, քայքայելով բազմաթիւ սերունդներ:

Պատանու կազմվածքի մէջ դէպի հասու-
նութիւն դիմող շրջանում անժամանակ զարգա-
նում են սեռական գործարանները և նրա մէջ
առաջ են գալիս նորանոր անժանօթ ցանկու-
թիւններ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ սեռա-
կան կրքի անսնակ յոյզեր: Եթէ պատանին մե-
ծանում է բարոյական շրջանում, իրան հեռու է
պահում գայթակղեցուցիչ ազդեցութիւններից,
այն ժամանակ սեռական գործարանները իրանք
իրանց բնական ճանապարհով են հասնում զար-
գացման ծայրագոյն աստիճանին. ապա միայն
արթնանում է և գոհացում է պահանջում զօ-
րեղ կիրքը: Սակայն ներկայումս սր է այդ-
պիսի դաստիարակութիւն. պատանին, հէնց
սկզբից ենթարկվում է այնպիսի գայթակղե-
ցուցիչ ազդեցութիւնների, որոնք բնութեան
որոշած ժամանակից վաղ զարթեցնում են սե-
ռական հակումն, և դիւրագգաց պատանին շատ
շուտ շեղվում է բարոյական ուղիղ ճանապարհից:
XX-րդ դարու պոռնկագրութեան զրքերում
լսիրձ ու կեղտոտ նկարագրութիւնները,
գեղարուեստի տաճարներում՝ այսինքն թատրոն-
ներում բեմի վրայ զանազան օպերէտների ու
օպերէտիկաների ներկայացումը կանացի մերկ
մարմիններով, պրոֆէկտորների պոռնօգրաֆիա-
կան զգուելի պատկերների ցուցադրումը, կա-

նանց նորանոր պիկանտ «դէկօրտէ» մօդաները,
երբ օրը ցերեկով կինը իր մեղկ մարմնի գաղտ-
նի և զրգուեցնող մասերն է ցուցահանդէս դնում
փողոցներում ամենաանպարկեշտ կերպով, ահա
այս բոլոր անբարոյակացնող երևոյթները ա-
կամայ գայթակղեցնում և հեշտասէր են դարձ-
նում պատանուն, որը հետաքրքրվելով արգե-
լեալ պտղի երանաւէտ քաղցրութեամբ, սկսում
է անձնատուր լինել իր շինծու կրքերին: Մե-
ծերից վախենալով և ամաչելով, բացի այդ ֆի-
զիքապէս հնարաւորութիւն չունենալով կանանց
հետ շփվել, անփորձ պատանին աշխատում է
զանազան արհեստական գաղանի միջոցներով
զրգիռ առաջացնել իր սեռական գործարանե-
րում: Դրա համար նա առանձնանում է և ձեռ-
քերով, բարձերով և այլ իրերով այնքան շփում
է, տրորում. առնանգամը, մինչև որ սերմը
արտաթորվում է: Այս նպատակով թէ տղաները և
թէ աղջիկները յաճախ, բացի ձեռքերից և փափուկ
բարձերից, գործ են ածում բանալիներ, շպիլ-
կաներ, մատանիներ, մոմեր և այլ անարկաներ,
որոնք այլասեռում և հակաբնական են դարձնում
նրանց մէջ սեռական ինստինկտը: Տհաս պատա-
նին, անձնատուր լինելով օնանականութեան, չէ
զիտակցում, թէ ի՞նչ սոսկալի հետևանքներ ու-
րի այդ բանը. նա գաղափար չունի սերմի էու-

Թեան մասին և չը գիտէ, որ իւրաքանչիւր կաթիլ սերմ անժամանակ արտաթորվելով, յողնեցնում և կանգնեցնում է մասնաւորապէս սեռական գործարանների զարգացումը և ընդհանրապէս ամբողջ մարմնի բնական ընթացքը: Նա չը գիտէ, որ սերմի կորուստը բայքայիչ է ամբողջ մարմնի համար, որովհետեւ նա նուազեցնում է արեան քանակութիւնը մարմնի մէջ:

Օնանիստը հետզհետէ աւելի է հրապուրվում իր սովորութեամբ, և ախտը սկզբում աննկատելի և ապա նկատելի կերպով փխստում է մարմնին: Օնանական ախտը ունի մի այնպիսի զօրեղ և կաշկանդիչ յատկութիւն, որ նրա ճանկերից ազատվելու համար կարեւորվում են հերոսական ջանքեր: Պատանին ամեն մի յարմար բոլորէ առանձնանում է և արհեստականապէս թափում իր կեանքի քաղցր հիւթը: Յաճախ նա օբսական մի քանի անգամ է կատարում ձեռնաշարժութիւն: Այս ախտը տեւում է երկար ժամանակ, տարիներ և նոյնիսկ տասնեակ տարիներ, որի վերջը լինում է կամ ցաւալի վախճան և կամ ուշ սթափում: Սերմի մասին խօսելիս, մենք ասել ենք, որ նա պատրաստվում է շատ դանդաղ. իսկ երբ հակառակ բնութեան օրէնքի բռնադատում ենք ամորձիքներին անբնական սերմ պատրաստել, հարիւրապատկե-

լով իրանց գործունէութիւնը, այն ժամանակ նրանք սաստիկ տուժում են և ենթարկվում ատրօֆիայի (անդամուլուծութիւն): Անխնայողաբար վիժող սերմի պատրաստութեան համար գործադրվելով մեծ քանակութեամբ արիւն, ամբողջ կազմուածքը զրկվում է իր կենսունակութեան համար անհրաժեշտ քանակութեան արիւնից, այդպիսով ուրեմն մարմնի մէջ գոյանում է սակաւարիւնութիւն: Արիւնն էլ հետզհետէ փոխում է իր որակը. նա շարունակ իր ընտիր մասերը տալով սերմի ատրադրութեանը, կորցնում է իր Թանձրութիւնը, դառնում է ջրալի և դժգոյն:

Ֆիզիքական բայքայումներին հետեւում է հոգևոր ու մտաւոր խանգարումը: Օնանականութեան վայրկեանին օնանիստը իր առաջ չունենալով տրփանքի առարկան, ստիպված լարում է իր երեակայութիւնը: Յայտնի է, որ տրփանքը և զրգիւր շատ շուտ առաջանում են հակառակ սեռերի ներկայութիւնից և շփումից, ուստի զրգիւ առաջ բերելու համար կարիք չէ լինում լարել երեակայութիւնը, քանի որ այդ դէպքում զգայնականութիւնը բնական ճանապարհով զարթեցնում է սեռական հակումն: Մինչդեռ օնանականութեան միջոցին բացակայ լինելով կանայքի մարմնի շփումն ու մեղկանքը, օնանիստը պարտադրում է իր երեակայութեանը ցինիկ ու

հեշտասիրական վառ մտապատկերներով նպաստել էրէկցիային և սերմնահոսութեանը: Ուրեմն հասկանալի պէտք է լինի, թէ ինչո՞ւ օնանականութիւնը սաստիկ փնասում է մարդուն ֆիզիքապէս և մտաւորապէս: Բնական յարաբերութեան միջոցին պառկած դրութեամբ մարմինը չէ տուժում. մինչդեռ ձեռնաշարժութիւնը կատարվելով ոտքերի վրայ կանգնած դրութեամբ փնասում է ծնկներին և յաճախ առաջացնում ծնկներէ դողդողոց և թուլութիւն: Համարձակ կարելի է. ասել, որ մէկ անգամ կատարած ձեռնաշարժութիւնն աւելի փնասակար է, քան թէ միքանի անգամ ունեցած սեռական կանոնաւոր մերձաւորութիւնը: Ձեռնաշարժութեան միջոցով սերմի անխնայ և անընդհատ վատնումի հետեանքները պատանի, հասակում անհամեմատ աւելի են կորստաբեր, քան թէ սեռական անչափաւորութիւնը այրական հասուն շրջանում: Պարզենք մեր ասածը: Պատանեկան հասակում մարդու սեռական գործարանները դեռ կատարելապէս զարգացած չեն լինում, հոգեկան ու մարմնական յոյզերը դեռ լիովին չարթնացած, սերմնահոսութիւնը այս շրջանում ձեռնաշարժով կամ թէ այլ արհեստական ճանապարհով կատարվում է բռնադատօրէն. այդ պատճառով պատանու ձկուն կազմուածքը և զգայուն հոգին շուտ

են փնասվում: Մինչդեռ այրական հասակում մարդու սեռական գործարանները կազմակերպված են լինում, սեռական և այլ զգայնական յոյզերը բնածին կերպով արթնացած, ուստի այս դէպքում մարմինը այնքան չէ տուժում, որքան առաջին դէպքում: Օնանականութեան գոհը դառնում է մի խղճուկ արարած, որի համար կեանքը յաճախ կորցնում է իր արժէքը, և նա իր ապրելու մէջ այլևս ոչ մի նպատակ չը գտնելով, յաճախ վերջ է դնում իրան անձնասպանութեամբ:

Այժմ համառօտ, սակայն պարզ գոյներով, նկարագրենք օնանականութեան և ընդհանրապէս սերմի առատ վատնումի հետեանքները: Մարմինը, կորցնելով այդ կարևոր հեղուկը, նիհարում և տկարանում է: Արագութեամբ պակասում են օնանիստի ֆիզիքական ու հոգեկան ուժերը, բթանում են մտաւոր ընդունակութիւնները. մարդ դառնում է դանդաղաշարժ, անընդունակ, բթամիտ և վերջի վերջոյ կատարեալ ապուշ: Ձեռնաշարժութեան միջոցին երեւակայութիւնը և ջղերը սաստիկ լարվելով, խանգարվում է ամբողջ ջղային սիստէմը, ուստի առաջ են գալիս մեղմադձոտութիւն, անքնութիւն, իստէրիկա, ոտքերի ու ձեռքերի դողդողոց, ընկճելութիւն, լուսնոտութիւն և երբեմն խելագարութիւն: Սեռական գործարանները վերջի վեր-

Ղոյ յողնում են և միանգամայն թուլանում այն աստիճանի, որ այնուհետև ամեն մի հասարակ շփում կամ հեշտանքի մտապատկեր առաջացնում է սերմնահոսութիւն: Օնանիստը միշտ ենթակայ լինելով իր հիւանդ երեակայութեան ստեղծած տրփական մտապատկերներին և իրականութեան մէջ գտնվող կանայք աւելի նսեմ ներկայանալով նրա աչքին, նա խորշում է կանանցից և առհասարակ մարդկանց ներկայութիւնից: Իր հետ համակերպվող կնոջից նա ոչ մի գրգիռ չստանալով, դարձեալ առանձնանում է և երեակայութեան մէջ վերաստեղծելով աւելի հեշտալից կանանց, կատարում է ձեռնաշարժութիւն: Օնանիստը չի կարողանում համարձակ կերպով նայել մարդկանց աչքերին, առաւելաւ նա խուսափում է կանանց հայեացքներից: Արեան պակտսութեան շնորհիւ նրա դէմքը լինում է դժգոյն և դեղնած. աչքերը փոսն ընկած, որոնց տակ՝ կոպերի ուղղութեամբ, որոշակի նկատվում են մուգ—կապտագոյն շերտեր: Երեսը ծածկվում է մանր ու խոշոր պզուկներով, որոնք մնում են բաւական երկար ժամանակ և այլանդակում դէմքը: Ոչ մի դեղ չի ազդում այդ թարախոտ և կարմրագոյն պզուկների վրայ, բացի այն որ օնանիստը թողնէ իր վնասակար սովորութիւնը. այն ժամանակ նրանք ոչնչանում են ինքն իրանց:

Յայտնի է, որ ստամոքսը, կանոնաւոր մարսողութեան համար, անհրաժեշտաբար պահանջում է որոշ քանակութեան արիւն. օնանականութիւնից առաջացած սակաւարիւնութեան պատճառով նա զրկվելով արիւնից, խանգարվում է և չէ կարողանում կանոնաւոր կերպով մարսել ստացած սնունդը: Այդպիսով առաջ է գալիս ստամոքսի կատարը և այլ հիւանդութիւններ: Բերանի մէջ զգացվում է դառնութիւն, լեզուն ծածկվում է սպիտակ փառով. պատահում են սրտախառնութիւն, զկռտոց. յաճախ բերանից փչում է վատ հոտ: Ստամոքսի անկանոն գործունէութիւնից խանգարվում են նաև աղիքները, որի հետեանքը լինում են միմեանց յաջորդող փորկապութիւն և փորլուծութիւն: Աղիքների մէջ զգացվում են ցաւեր և ծակոցներ: Պարզ է ուրեմն, որ ստամոքսն ու աղիքները չը կարողանալով անհրաժեշտ սնունդ մատակարարել ամբողջ օրգանիզմին, վերջինս նիհարում է, տկարանում և թուլանում: Սերմի վատնումից վնասվում են թոքերը, որոնք մարմնի քնքոյշ և թոյլ գործարաններն են կազմում: Թոքերի տկարանալու հետեանքները լինում են շնչարգելութիւն, ճնշումն կրծքի մէջ, թոքերի բորբոքում, հազ, բրօնխիտ և վերջապէս մահաշունչ թոքախտ: Հիւանդի տեսողութիւնը խանգարվում և նուազում

է. նրա աչքերին յաճախ երևում են դանազան մանր կարմրագոյն կէտեր օդի մէջ, այսինքն պատահում է հալիւցինացիա. վերջի վերջոյ նա դառնում է այն աստիճան կարճատես, որ առանց ակնոցի երկու քայլ տարածութեան վրայ չի կտրողանում ճանաչել մարդկանց: Պատահել են դէպքեր, երբ օնանիստները բոլորովին կուրացել են: Լսողութիւնն էլ կամաց կամաց ենթարկվում է փոփոխութեան, նրա ականջներին լսելի են լինում իրականութեան մէջ բացակայ շշուկներ և զօղանջիւն:

Արեան նուազումից և նրա անկանոն շրջանառութիւնից խանգարվում է սրտի կանոնաւոր գործունէութիւնը. սիրտը երբեմն բաբախում է այնպէս ուժեղ, որ փոքր տարածութիւնից տեսանելի և լսելի է լինում նրա զարկը. երբեմն էլ, ընդհակառակն, թուլանում և արագանում են նրա հարուածները: Ամբողջ մարմինը ծածկվում է բծերով, ուռոյցքներով, թաւախոտ պզուկներով. առաջ են գալիս ջրակալութիւն և ջրգողութիւն: Կաշին դառնում է մի տեսակ լպրծիւն, բրտնքոտ, դժգոյն և արձակում է ուրոյն տհաճոյ հոտ: Սերմի սպառուկում է ուրոյն տհաճոյ հոտ: Սերմի սպառուկում է փրփրում են շարժիչ միկանները, որոնք հետըզհետէ նիհարանալով, թուլանում են և կորցնում իրանց շարժունութիւնը: Այս պատճառով

օնանիստները միշտ լինում են դանդաղկոտ, ծոյլ և վատ տրամադրութեան մէջ: Ձայնը նոյնպէս թուլանում է, դառնում դողդոջուն և խռպոտ: Օնանիստին թւում է, թէ նրա մարմնի վրայով, առաւելապէս մէջքի ուղղութեամբ, ման են գալիս մըշիւններ:

Ի լրումն այս ամենի վերջի վերջոյ տկարանում են գանգուղեղը և ողնուղեղը, որոնց մէջ փափկանում են սեռական կենդրոնները: Յիշողութիւնը իսպառ բթանում է և մարդ հաւասարվում է անբան կենդանու:

Վերոյիշեալ համառօտ նկարագրութիւնից արդէն ընթերցողը կարող է երևակայել, թէ որպիսի թշուառ և խղճալի մի էակ է ներկայացնում իրենից օնանականութեան զոհը:

Թէ ինչ աստիճան զարհուրելի հետեանքներ ունի օնանականութեան ախտը, մենք մեր վերոյիշեալ նկարագիրը հաստատելու համար այժմ թարգմանաբար բերենք փաստեր հոչակաւոր բժիշկների մէմուարներից:

Դէլեւանտը գրում է. «Վերջնական հետեանք կարող է լինել ծննդաբերական գործարանների զգայնականութեան ոչնչացումը: Այն ձևերը, որոնք սկզբում նպատակի են հասցնում (այսինքն սերմի հոսեցումն), այլևս շուտով չեն առաջացնում ցանկալի զգայնութիւնը, որը հետըզ-

հետէ թուլանում է և զրոյի հաւասարվում: Այս ձևերը դեռ կարող են առաջ բերել էրէկցիա և մինչև անգամ ցաւոտ գրգռումն, բայց նրանք արդէն չեն կարող այնպիսի բաւականութիւն պատճառել, ինչպէս սկզբներում: Լաւ կը լինէր, որ այսպիսի թուլութեան ժամանակ մոռացվէին անցեալ հաճոյքները. սակայն նրանց յիշողութիւնը ապրում է մեծ ուժով և դժբաղդ գոհին դրդում է շարունակել իր էկսցէսները (տրփա-կանհաճոյքները): Այս յիշողութեամբ տանջվելով, յղփացած օնանիստը գրգռում է իր լքեալ գործարանները: Գործադրած ձևերը գոհացուցիչ հետեանքների չը հասցնելով, նա հնարում է նորանոր հրէշային և այլանդակ ձևեր: Նրա նախկին մտքերը թւում են անմեղ և անպախարակելի՝ համեմատած նորերի հետ. և օնանակա-նութիւնը համեմատած նոր ախտի հետ արժա-նի կը լինի գովասանքի: Սկզբում օրգազմ առաջ բերող ձևերը այժմ նպատակի չեն հասցնում. առնանդամի մակերևոյթը, որի վրայ երբեմնապէս կենտրոնացած էր զգայնականութիւնը, կորցրել է բաւականութիւն պատճառելունը, կորցրել է բաւականութիւն պատճառելունը, և հիմա հարկ է լինում աւելի խորը թափանցել, ուր դեռևս ձեռք չէր հասել: Այն գործողութիւնները, որոնք առաջ ցաւեցնող էին, այժմ կատարվում են առանց դժ-

ժուարութեան, հպատակվելով ներքին ուժին: Օնանիստը վիրաւորում և պատառոտում է մսերը, կանգ չառնելով ոչ մի բանի առաջ, միայն թէ հնարաւորութիւն ստեղծէ հեշտասիրական հաճոյք զգալու: Այս դրութիւնը տևում է այնքան ժամանակ, մինչև որ վտանգաւոր գործողութիւններն էլ կորցնում են իրանց ոյժը և կամ առաջ են գալիս ծանր հիւանդութիւններ:

Բժիշկ Ծօպարը նկարագրում է հետևեալ դէպքը:—Լանգէտօկցի հովիւ Գաբրիէլ Հալիէնը օնանակութեան նուիրվեց 15 տարեկան հասակում, օրական ձեռնաշարժութիւն անելով մինչև 15 անգամ: Հասաւ այնպիսի ժամանակ, երբ սերմը շատ չնչին քանակութեամբ էր դուրս հոսում, և երբեմն երկար ջանքեր էր գործադրում հոսեցնելու համար: Ձեռնաշարժի ընդմէջ յաճախ առաջ էին գալիս մկանների կծկոտումն և սերմի փոխարէն հոսում էր միքանի կաթիլ արիւն: Տասնևմէկ տարեկան ընթացքում նա օնանականութիւն էր կատարում միայն ձեռքով, բայց 16 տարեկան հասակում այսպիսի ձևերից այլևս չստանալով հեշտասիրական բաւականութիւն, նա սկսեց միզանցքը կոխել մօտ 15 սանտիմէտր երկարութեան փայտի կտոր: Տասնևեկեց տարի շարունակ նա այս միջոցն էր գործադրում, բայց վերջապէս միզանքի թաղանթը

կոշտացաւ և դարձաւ բոլորովին անզգայ. այլ-
ևս փայտի կտորը իր նպատակին չէր հասցնում:
Օնանիստը զո՞հ դարձաւ մշտական էրէկցիայի,
որին ոչ մի բան չէր հանգստացնում: Այս ամ-
բողջ ժամանակամիջոցում նա անընկճելի զգուանք
էր տածում դէպի կանայք, որ յատուկ է ծնա-
նիստներին: Նա դարձաւ մեղամաղձոտ. արհա-
մարհում էր իր աշխատանքը և միմիային զբաղ-
ված էր իր կրքերին գոհացնելու միջոցներ մտա-
ծելով: Բազմաթիւ միջոցների դիմելով և չստա-
նալով ցանկալի հետևանքը, նա յուսահատված
մի անգամ վճռեց լայնութեամբ ճեղքել առնան-
դամի գլուխը դէպի միզանքը տանող ուղղու-
թեամբ: Այս օպէրացիան նրան բաւականու-
թիւն պատաճեց, որովհետև ոչ մի ցաւ չզգաց
և տեղի ունեցաւ սերմի առատ հոսումն: Այս
ժամանակից սկսած, բաղդաւոր զգալով կըր-
քերը յագեցնող իր նոր հնարագիտութեամբ,
նա սկսեց յաճախ կրկնել այս փորձը և միշտ
էլ նոյն հետևանքն էր ստանում: Այսպէս շարու-
նակ ճեղքելով անդամը, վերջիվերջոյ նկա-
տեց, որ առնանդամը կիսել է երկու մասի
մեզանցքի ուղղութեամբ: Երբ արիւնհոսութիւնը
առատ էր լինում, նա արիւնը կանգնեցնում էր
անդամը փոկով կապելով: Բաժանված առնան-
դամի կէսերը ընդունակ էին մնացել կանգնման,

սակայն նրանք ուղղութիւնը փոխել էին դէպի
աջ և ձախ: Երբ անդամը կիսված էր մինչև ար-
մատը երկու մասի, դանակն այլևս աւելորդ էր,
երևան եկան նոր ձևեր, նոր յուզումներ և նորա-
նոր փորձեր՝ հաճոյք ստանալու համար: Ի մի-
ջի այլոց նա գործադրում էր հետևեալ միջոցը.
— Վերցնում էր աւելի կարճ կտոր փայտ և կո-
խում էր միզանցքի յետին մասը, որ դեռ ճեղք-
ված չէր: Այս միջոցով նա գոգրում էր սերմ-
նանցքները և առաջացնում էր սերմնահոսութիւն:
Նա սրանով բաւականացաւ 10 տարի, մինչև
այն ըոպէն, երբ անզգութիւնից փայտի կը-
տորը ընկաւ միզապարկի մէջ: Նա իսկոյն սաս-
տիկ ցաւ զգաց և ոչ մի կերպ չը կարողացաւ
փայտը զուրս հանել: Չարհուրելի տանջանքնե-
րից յետոյ, երբ մէզը բռնվեց և միզապարկից
սկսեց արիւն հրկալ, դիմեց վիրաբոյժի, որը
իհարկէ, շատ զարմացաւ, տեսնելով երկու մա-
սի բաժանված անդամը: Իժիշկը վիրահատու-
թեամբ միզապարկից հանեց փայտի կտորը, որը
երեք ամիս մնալով պարկի մէջ ծածկվել էր կը-
րային նիւթով: Լուրջ հիւանդութիւնից յետոյ նա
կազդուրվեց, սակայն երեք ամիս անց մեռաւ
թոքախտից, որ վաղուց առաջացել էր նրա մէջ.
սերմի առատ վատնումից:

Դէլիանտը օրինակ է բերում մի դպրոցա-

կան ուսուցչի, որը միզանցքը գրգռում էր գանազան առարկաներով՝ սերմնահոսութիւն առաջացնելու համար: Նա սովորաբար գործադրում էր մետաղաթել (проволокa), որի ծայրը ծալել էր՝ անցքի թաղանթը չը վիրաւորելու նպատակով: Մէկ անգամ, երբ նա մետաղաթելով գրգռում էր միզանցքը աւելի կատաղի շարժումներով, մետաղաթելի ծայրը խրվեց անցքի մէջ և մնաց: Ուսուցիչը շատ փորձեց դուրս քաշել թելը, սակայն անաջող: Չընայելով տանջանքներին, ամօթը նրան չէր թոյլ տալիս դիմել բժշկի: Նա մետաղաթելի դրսի ծայրը ոլորեց ամուր բռնելու և ուժով քաշելու համար. բայց նրան այս էլ չը յաջողվեց, որովհետեւ ուժով դուրս քաշելիս մետաղի դրսի ծայրը կոտրվեց, իսկ ներսի մասը մնաց անցքում խրված: Յուսահատված, վախենալով մահաբեր վախճանից, նա դիմեց Ֆարգո-դը-Սօմիւր բժշկին: Առնանդամը սաստիկ ուռեց, ուռեց նաեւ ամորձիքապարկը: անդամի արմատի մօտ՝ փորի տակ՝ երեւց կարմրութիւն, ցաւ և ուռոյցք: Մէզը բռնվեց, երեսը կարմրատակեց, աչքերը արիւնով լցվեցին, սկսվեց գառանցանք, զարկերակը արագացաւ և թուլացաւ: Բժիշկը քաշելով մետաղաթելը, համոզվեց, որ միւս ծայրը ամբացած էր քրէ կոշտ մասի վրայ: Մեծ զգուշութեամբ

զննելով այդ տեղը, տեսաւ, որ երկաթը դէմ էր ընկել կոշքի ոսկոռի առաջին մասին: Այստեղում նա վիրահատեց. մետաղաթելը երևաց, որ և հանվեց յետանցքի միջից: Հիւանդը իսկոյն թեթեւութիւն զգաց և կամաց կամաց առողջացաւ:

Սարայէն հաղորդում է յիսնամեայ ծերունու մասին, որը երեք տարվայ ընթացքում ձեռնաշարժութիւն էր անում գործելու ճաղով, որ կոխում էր միզանցքը: Մէկ անգամ էլ ճաղը ձեռքից սողաց և մնաց միզանցքում: Մի շաբաթ յետոյ օպերացիայի միջոցով հանեցին ճաղը:

Բաւական համարելով յիշեալ օրինակները ծնանականութեան զարուրելի պատկերը ապուռ համար, այժմ խօսենք, թէ ի՞նչ միջոցներով կարելի է ազատվել այդ ֆեաւակար սովորութիւնից, և թէ ի՞նչ դերք են բռնելու ծնողներն ու դաստիարակները փոքրահասակներին գերծպահելու վաղաժամ ախտերի ճիրաններից: Մանուկ հասակն այնքան ներգործվող է, որ ամեն մի լաւ կամ վատ սովորութիւնը շատ հեշտութեամբ պատուաստվում է նրա մարմնի մէջ: Նախ և առաջ ծնողները պէտք է աշխատեն մանկանը մեծացնել այնպիսի պայմաններում և բարոյական շրջանակում, որոնց մէջ նրա քնած սեռական գործարարները ոչ մի արհեստական չփում և զրգիւ չստանան: Այդ տեսակէտից շատ

ժազանց աննպակայարմար և գայթակղեցուցիչ է փոքրհասակ երկսեռ երեխաներին մի անկողնում մերկ պառկեցնելը:

«Քոյը և եղբայր, կամ օտար հասակակիցներ և կամ մեծ ու փոքր տղաներ ու աղջիկներ միասին պառկեցնելու ապականիչ սովորութիւնն էլ յաճախ պատճառ է դառնում ծննդագործարանների կանխահաս զրգիւի, ասում է պրօֆէսոր Ալբերէտը:

Անկողնի ջերմութիւնն ինքնստինքեան արդէն զրգուման մի պատճառ է, և երբ էգ էակի, որչափ սա փոքր ու փափուկ լինի, արտաշնչութիւնը աւելանում է ջերմութեան վրայ... երբ տաք մերկութեան հպումը նոր զրգիւ էլ աւելացնէ, այն ժամանակ անկարելի է, որ միամիտ մանուկը իր ճղճիմ հասակում շունենայ արտասովոր զգացումներ, թէպէտ իհարկէ ոչ այնպիսի գիտակից և ուժգին հաճոյք, որպիսին զգում են չափահասները»։ Սաստիկ մեծ հակողութիւն պէտք է ունենալ այն երեխաների վրայ, որոնց սնուցանում և մեծացնում են դայեակները, ծրծմայրները։ Վերջիններս շատ յաճախ միամտաբար և երբեմն էլ գիտակցօրէն շփում են երեխայի սեռական գործարանները, որից նա ըզգում է ուրոյն անմեղ հաճոյք։ Ապա հետզհետէ նա սովորելով այդ հաճոյքին պահանջ է զգում

այդպիսի շփումների. աստիճանաբար մեծանալով, ինքը սկսում է տրորել ու զրգուել իր սեռական մասերը. այսպիսով նրա մէջ բուն է դրնում օնանականութիւնը։ Ուրեմն իւրաքանչիւր որդեսէր մայր պարտաւոր է իր երեխային անձամբ կերակրել ու մեծացնել. իսկ ստիպողական դէպքերում յանձնելով օտարների խնամատարութեանը, նա պէտք է ի մօտոյ հետևէ ծծմայրների և արգելէ երեխայի գործարանների հետ խաղալը։ Բացի սրանից օնանականութեան ծագմանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ երեխային ծեծում են, ապտակներ ու փայտի հարուածներ են տալիս յետոյքին, ինչպէս ընդունված է ասել, ոօզգի են տալիս. այս դէպքում ձաղկելուց արիւնը մեծ քանակութեամբ դիմում է վերին մասերից դէպի ստորին մասերը և սեռական գործարանները. սրա շնորհիւ նրանք առատ սնունդ են ստանում, շուտ հասունանում և զգում վաղաժամ զրգիւ։ Այնուհետև արտաքին նպաստող պայմանների մէջ սկսում է ձեռնաշարժութեամբ պարապել. Նա ընկերների վատ ազդեցութեան ներքոյ սկսում է կարգաւ պօռնօգրաֆիական գրականութիւնը, դիտել պարիզեան անառակութեան ծնունդ գաղտնի ամենացինիկ պատկերներ, և այսպիսով նա շատ շուտ ընկնում է անբարոյա-

կանութեան գիրկը և անձնատուր լինում գաղտնի մեղքերի: Ծնողները ու դաստիարակները ուշի ուշով պէտք է հետևեն իրենց սաներին. յաճախ պէտք է նայեն նրանց գրքերը, գրպանները և այլ գաղտնի պահարանները, որպէսզի հնարաւորութիւն չը տան մանուկներին վերոյիշեալ ապականիչ գրքերից ու պատկերներից պահելու: Հետևելու է, որ մանուկներն ու պատանիները անվայել խաղեր չը խաղան, լկտի խօսակցութիւններ չանեն և զոյգ զոյգ կամ թէ միայնակ երկար միջոցով չառանձնանան զանազան կասկածելի անկիւններում: Երեխաներին չըպէտք է ուտեցնել ու խմեցնել գրգռիչ կերակուրներ և ըմպելիքներ: Անչափահաս սաներին երբէք չը պէտք է տանել թատրոն, ցիրկ ու սինէմատոգրաֆ այն ժամանակ, երբ ներկայացվում են գայթակղեցուցիչ ու անբարոյականացնող տեսարաններ, մերկ մարմիններով ու վատիմաստ պօզաներով: Իրանք, ծնողները, պարտաւոր են մանուկների ներկայութեամբ շատ պատշաճ և վայելուչ կեանք ցոյց տալ, ու ոչ մի ժամանակ չը պէտք է թոյլ տան նրանց ներկայութեամբ համբուրվել, գրկել և սիրային տեսարաններ ներկայացնել: Մի խօսքով, ընտանեկան խելացի և բարոյական դաստիարակութիւնը միայն կը փրկէ սաներին օնանական և այլ ախտե-

րից: Իսկ եթէ վատ դաստիարակութեան պատճառով երեխաներն արդէն դարձել են օնանիստներ, այն ժամանակ գոնէ ծնողները կամ ուսուցիչները պէտք է խիստ հետևեն և ամեն մի նպատակաշարմար միջոցով վատ սովորութեան առաջն առնեն: Անհրաժեշտ է գիտենալ, որ օնանիստները շատ խորամանկութիւններ են գործ դնում իրանց սովորութիւնը գաղտնի պահելու համար: Երկար տարիներ շարունակ նրանք ծածուկ կերպով մաշում են իրանց մարմինը, իսկ ծնողներն ու դաստիարակները այդ բանին մնում են բոլորովին անտեղեակ: Ուստի աւելորդ չի լինիլ առաջարկել միջանի խորհուրդներ յիշեալ ախտը յայտնագործելու և արմատախիլ անելու համար: Օնանականութեամբ պարապող երեխաները կորցնում են երեսի փարթամութիւնը և դալկանում: Բոլոր մկանները հետզհետէ թուլանում են: Նըրանց աչքերը ստանում են սուրճի գոյն, կամ կարմրում են և կամ ստանում արձճի գոյն: Նըրանք խորն են ընկնում. հայեացքը դառնում է երկչոտ և շփոթվող: Շրթունքները գունատ են. դէմքի բոլոր շարժումները դանդաղ են և հարկադրեալ. օրինակ, ծիծաղը բռնազբօսիկ և այլն: Երեխան դառնում է տխուր, լուռ և շուտ է բարկանում չնչին պատճառներից: Օնանիստները շարունակ ձեռքերը տանում են դէպի սեռա-

կան գործարանները և տրորում: Վատ նշաններ են նաև շուտ շուտ միգելը կամ արտաքնոց վազելը: Ձեռնաշարժութիւնից յետոյ հետքեր են մնում սպիտակեղէնի վրայ. ուստի շատ կարևոր է առաւօտ և երեկոյ ուշադրութեամբ զննել սպիտակեղէնները, թէ արդեօք չեն նշմարվում կասկածելի բծեր նրանց վրայ: Այս բոլորը պէտք է ծածուկ անել, հակառակ դէպքում երեխան, նրկատելով ծնողների հետախուզութիւնը, կաշխատէ այլ միջոցներով սպիտակեղէնը զերծ պահել կեղտերից: Օնանխտանները շարունակ խուսափում են հասարակութիւնից և աշխատում են առանձնանալ: Նրանց երեսին նշմարվում են պզուկներ: Սեռական մասերը յաճախ քրտնում են. առնանդամը թօշնում է և ամորձիքները թուլանում, կախ ընկնում: Օնանականութեամբ պարապող պատանիները սովորութիւն ունին եղունկները կռծելու: Ահա բոլոր այն նշանները, որոնցով կարելի է յայտնագործել օնանականութեան անձնատուր եղած անհատների ծածուկ սովորութիւնը: Եւ երբ այս նշաններով կամ այլ կերպ համոզվում են այդ բանում և կամ թէ երբ ինքը՝ օնանխտը խոստովանում է իր մեղքը, պէտք է համբերատար ու ներողամիտ վերաբերմունքով, մրտերմաբար ցոյց տալ նրա ընթացքի կորստաբեր հետևանքները, համոզել ձեռք բաշելու այդ սո-

վորութիւնից: Ոչ մի դէպքում պէտք չէ բարկանալ, նախատել նրան, որովհետև փորձերը ցոյց են տուել, որ խիստ վերաբերմունքը, նախատինքն ու պատիժը ոչ միայն յետ չեն կասեցնում օնանխտին իր սովորութիւնից, այլ ընդհակառակն, նա աւելի է առաջ գնում իր ընթացքով: Գուցէ ոմանք հարցնեն, թէ արդեօք բժշկութեան մէջ կայ որոշ դեղ օնանականութեան դէմ: Պատասխանն է ոչ: Բժշկական ճոթ դեղարանը չունի և չի ունենալ քիմիական որևէ միջոց, որը խմելով կամ քսելով արմատախիլ անէր օնանական ախտը: Իւրաքանչիւր հիւանդութիւն բուժելի է, երբ յայտնի են նրա պատճառները և երբ վերացվում են նրանք: Օնանական ախտը ֆիզիքական հիւանդութիւն չէ. նրա պատճառը թագնված է բարոյական ու հոգեկան աշխարհներում. ուստի ոչ մի դեղ չի կարող ազդել բարոյական հիւանդութեան վրայ բացի ազնիւ ու անարատ դաստիարակութիւնից: Անհրաժեշտ է նաև կամքի ոյժ, որը ձեռք է բերվում կեանքի որոշ պայմաններում, որոշ նիստուկացով մեծանալու դէպքում: Իսկ երբ օնանխտը հեռու գայթակղեցուցիչ պատճառներից, գիտակցաբար իր մարմինն ու հոգին դնէ առողջ ճանապարհի վրայ, այն ժամանակ նրանք իրար վրայ ազդելով, կազատեն նրան անբարոյական

ճանճից: Միտքը կըթող իւրաքանչիւր գիրք կամ
զուարճութիւն, մարմինը զարգացնող, ուժե-
ղացնող ամեն մի զբօսանք, մարմնամարզութիւն,
աշխատանք, կամքը զօրեղացնող կենցաղ կազ-
մում են միակ սպեղանիները օնանական և այլ
վատ ախտերի դէմ:

Վերջացնելով մեր խօսքը օնանականութեան
կամ ձեռնաշարժութեան մասին, ամփոփում ենք
մեր եզրակացութիւնը հետեւեալով. — մարդուն
հէնց մանուկ հասակից անհրաժեշտ է բարոյա-
կան սուրբ դաստիարակութիւն և խղճաւորութիւն
ամեն տեսակ գայթակղեցուցիչ, անառակացնող
հասարակական երևոյթներէից. այն ժամանակ մի-
այն մարդ հեռու կը մնայ այլևայլ վնասակար սո-
վորութիւններէից, և մարմինը մնալով առողջ, նրա
մէջ էլ կը զարգանան առողջ հոգի, առաքինի
միտք և զօրեղ կամք:



XVII.

Ե Ր Ա Ջ Ա Ն Ա Բ

Կ Ա Մ

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍԵՐՄՆԱՀՈՈՈՒԹԻՒՆ

Մինչև այժմ մենք խօսեցինք այն տեսակ
սերմնահոսութեան մասին, որը տեղի է ունե-
նում սեռական յարաբերութեան բուռն և օնա-
նականութեան ժամանակ: Տեսանք, որ առաջին
դէպքում սերմնահոսութիւնը կատարվում է բնա-
կան ճանապարհով, իսկ երկրորդ դէպքում սերմը
հոսում է անբնական ճանապարհով, արհեստա-
կան միջոցներով: Սակայն այս երկու դէպքե-
րումն էլ սերմնահոսութիւնը տեղի է ունենում
գիտակցաբար. այսինքն, երբ մարդ արթուն է,
երբ գործում են զանգուղեղը, ողնուղեղը և ջը-
ղերը: Բացի վերոյիշեալներից կայ և այլ ձևի
սերմնահոսութիւն, որը տեղի է ունենում գի-
շերը, քնած միջոցի. ուրեմն և անգիտակցա-
բար, ակամայ:

Գիտենք, որ սեռական գործարանները հա-
սունանալուն պէս սերմնագեղձերն սկսում են

սերմ արտադրել: Երբ սեռական յարաբերութեան բացակայութեան պատճառով սերմը մեծ քանակութեամբ հաւաքւում է և տեղ չէ լինում սերմնապարկերի մէջ, այն ժամանակ բնութիւնը օգնութեան է հասնում: Քնած ժամանակ հեշտասիրական երազների ազդեցութեան տակ աւելորդ սերմը դուրս է հոսում: Այս երևոյթը կոչւում է *երազախաք*, որի ժամանակ զգալի է նաև բնականին համազօր զգայնական հաճոյք: Երազախաքից յետոյ, մարմինը ազատւելով սերմի աւելորդից, որը նրան անժամանակ և անտեղի գրգիռներ էր պատճառում, զգում է թեթևացած և զուարթ, ինչպէս կանոնաւոր սեռական յարաբերութիւնից յետոյ: Ուրեմն երազախաքը բնութեան տնօրինած մի իմաստուն և օգտակար ֆիզիոլոգիական երևոյթ է և ոչ թէ ֆլասակար, ինչպէս շատերը կարծում են: Երազախաքը բնական է և առողջարար, երբ տեղի է ունենում ոչ յաճախ քան շաբաթը մէկ անգամ, իսկ երբ նա կրկնւում է շաբաթը մի քանի անգամ, նա արդէն դառնում է նոյնչափ ֆլասակար, որչափ օնանականութիւնը կամ սեռական անչափաւոր մերձաւորութիւնը: Երազախաքն էլ կախւած է անհատի կեանքի եղանակից, բարոյական դաստիարակութիւնից: Երբ մարդ քնում է, իսկոյն կանգ է առնում գանգուգեղի գործունէութիւնը:

Այդ ժամանակ, ցերեկվայ կարգացածի, տեսածի և լսածի ազդեցութեան ներքոյ երազի մէջ պատկերանում են նրանց տպաւորութիւնները. գանգուղեղը քնած լինելով, չէ կարողանում կօնսրօլի ենթարկել ողնուղեղի և միւս շղային կենտրոնների գործունէութիւնը. ուստի և սեռական կենտրոնները դիւրութեամբ զրգուկելով տրփական մտապատկերներից, առաջացնում են սերմնահոսութիւն և հաճոյք: Որքան բարոյական է մարդ, այնքան ուշ ուշ է տեղի ունենում երազախաք. իսկ երբ ցերեկը նա շատ կարգում է կեղտոտ նկարագրութիւններ, դիտում է պարիզեան ժանրի նկարներ, կանանց ու ընկերների հետ լիրբ խօսակցութիւններ է ունենում, այն ժամանակ յաճախանում է և գիշերային սերմնահոսութիւնը:


Նօրմալ երազախաքի միջոցին առողջ տղամարդի անդամը կանգնած դրութեան մէջ է լինում: Դա բացատրւում է նրանով, որ երբ նա պառկած է լինում մէջքի վրայ, մեծ քանակութեամբ արիւն է հաւաքւում ողնուղեղի և երկարաձև ուղեղի մէջ. դրանից առաջանում է նրանց մէջ ջերմութիւն, որի ներգործութեամբ մեծանում է սեռական գործարանների անդրադարձ (րէֆլէկտօր) գրգիւրը, որի միջոցին տեղի է ունենում սերմի վիժումն: Նկատւած է, որ երազախաքը մեծ մասամբ կատարւում է մէջքի

վրայ քնած ժամանակ: Երազախաբի ենթարկված են աւելի շատ 17-25 տարեկան պատանիք:

Շատ շատերը ճիշտ չը գիտենալով երազախաբի էութիւնը, պատահած դէպքում տխրում են, վախենում, կարծելով, որ իրանց սեռական գործարանները թուլացել են, և անմիջապէս վազում են բժշկի մօտ, գանգատվում և խնդրում որևէ դեղով վերջ դնել երազախաբին: Բժշկի մէջ աւելի կարեկցութիւն առաջացնելու նպատակով նրանք երբեմն կրկնապատիկ են ասում պատահած երազախաբների թիւը, նկարագրում են իբր թէ առաջացած թուլութիւնը և այլն: Սակայն դրանք սխալվում են, ծանօթ չը լինելով ֆիզիօլօգիական օրէնքների հետ:

Երբ երազախաբը տեղի է ունենում սահմանեալ չափից աւելի, դա արդէն դառնում է հիւանդութիւն: Յաճախակի կրկնվող երազախաբի պատճառը, բացի վերոյիշեալ ասածներից, լինում են սեռական գործարանների թուլութիւնը, օնանականութիւնը, սեռական անշափաւորութիւնը և այլն: Մտաւոր լուրջ աշխատանքը, բարոյական կենցաղավարութիւնը հեռու են պահում մարդուն գիշերային հեշտասիրական երազներից և երազախաբից: Օնանականութեամբ պարապող, անբարոյական կեանք վարող, լկաի զրոյցներ անող մարդը միշտ են-

թակայ է գիշերային կրկնվող սերմնահոսութիւնների: Այսպիսի դէպքերում երազախաբը տեղի է ունենում շաբաթը մի քանի անգամ, ամեն գիշեր, երբեմն էլ գիշերը մի քանի անգամ: Հետեանքների մասին այլևս մանրամասնաբար չենք խօսիլ, որովհետև նրանք խոյն են, ինչ որ սեռական անշափաւորութեան և օնանականութեան դէպքերում: Հիւանդոտ երազախաբի բժշկութեան մասին կը խօսենք հետեւեալ գլխում:



XIX.

ՍՊԵՐՄԱՏՈՐԻԷԱ

Կ Ա Մ

ՖԵՐԵԿՎԵՑ ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

Սպէրմատորէան կամ ցերեկվայ սերմնահոսութիւնները հետեանք են սեռական գործարանների կատարեալ ուժասպառութեան և թուլութեան: Այս տեսակ սերմնահոսութիւնը աւելի փաստակար է, քան գիշերային երազների ազդեցութեամբ կատարված սերմնահոսութիւնը, և տարբերվում է վերջինից նրանով, որ ցերեկվայ սերմնահոսութիւնը կամ սպերմատորէան տեղի է ունենում առանց հեշտասիրական հաճոյքի և էրէկցիայի: Սեռական կրկնակի մերձաւորութիւնները և օնանականութիւնը վերջիվերջոյ առաջ են բերում սեռական գործարանների այնպիսի թուլութիւն, որ սերմը ինքնաբերաբար դուրս է հոսում անժամանակ և անտեղի կերպով: Երազախաբութիւնն էլ եթէ շուտ շուտ է պատահում, կարող է առաջացնել սպէրմատորէա: Հիւանդը նոյնիսկ չէ նկատում, թէ ինչ-

պէս քամվում է իր կեանքի զօրաւոր հիւթը: Իւրաքանչիւր հեշտասիրական միտք, կանացի մերկ մարմնական, պօռնօգրաֆիական ընթերցանութիւն և դէկօլտէ հագնված կնոջ կուրծք ու թևը առաջացնում են ակամայ սերմնահոսութիւն առանց որևէ հաճոյքի: Լինում են այնպիսի հիւանդներ, որոնք տրամվայ կամ կառք բարձրացող կնոջ ոտքերը դիտելով կորցնում են սերմ: Բացի յիշեալ գլխաւոր պատճառներից, այսինքն—սեռական անչափաւորութիւնից և աննօրմալ երազախաբից,—կան նաև ուրիշ պատճառներ սպէրմատորէայի: Չի նստած միջոցին սեռական գործարանների շփումը պատճառ է լինում սերմնահոսութեան, որը կատարվում է երբեմն թոյլ հաճոյքի զգացմունքով. ծառ բարձրանալիս ամորձիքները և առնանդամը տրորվելով զրգռվում են և առաջ բերում սերմի ցայտում: Խրօնիքական սաստիկ փորակապութիւնը նոյնպէս պատճառ է դառնում սպէրմատորէայի: Սա բացատրվում է նրանով, որ կարծր կղկղանքը անցնելով ուղիղ աղիքի միջով ճնշում և զրգռում է շագանակաձև գեղձը և սերմնապարկերը, որից և տեղի է ունենում սերմնահոսութիւն: Սակայն փորկապութեան դէպքում մի ուրիշ երևոյթ էլ է պատահում, որը շատ նման է սերմնահոսութեան և յաճախ շփոթվում է սրա

հետ. այս մասին կը խօսենք: Ընդհանրապէս ա-
սած, սպէրմատորէա առաջացնում են այնպիսի
մօմէնտներ, որոնք ճնշում և գրգռում են սեր-
մնապարկերը, սերմնացայտ խողովակները, շա-
գանակաձև գեղձը, ամորձիքները և անդամը:
Այդպիսի գրգիչ պատճառներ են նաև. — մի-
զանցքի բորբոքումը (սուսունակ), միզանցքի
նեղացումն (стриктура), բոյասիւր (геммерой),
աղիքների ճիճուները, որոնք շարունակ գրգռում
են աղիքների միջոցով, միզապարկի բորբոքու-
մը, միզաքարերը, զանազան ուռոյցքներ յետանց-
քում, մէջքի վրայ քնելու ուժորոշութիւնը, ոգե-
լից խմիչքների անժուժկալ գործածութիւն կամ
հարբեցողութիւնը, որից ընդրապէս տուժում
է ամբողջ կազմուածքը և մասնաւորապէս թու-
լանում սերմնացայտ խողովակները: Սերմնահո-
սութեան պատճառներից մէկն էլ չափից դուրս
ժուժկալութիւն է, երբ սերմը ամբարկելով և
այլևս տեղ չը գտնելով, ամեն մի չնչին ազդե-
ցութեան ներքոյ դուրս է վիժում: Դուրս հո-
սած սերմը յաճախ խառնվում է մէզի հետ: Ե-
թէ խոշորացոյցով դիտենք այդպիսի մէզը, եր-
բեմն կը գտնենք նրա մէջ սերմնակեղաններ:
Սպերմատորէան լուրջ հիւանդութիւն է, որից
ամբողջ մարմինը թուլանում է, սեռական ցան-

կուծիւնը նուազում և առաջ է գալիս սեռական
անկարողութիւն, իմպօտէնցիա:

Անհրաժեշտ է իմանալ, որ կայ և մի ուրիշ
երևոյթ, շատ նման սպէրմատորէային, որ վա-
խեցնում է անտեղեակ մարդկանց: Շատ անգամ
մէզի մէջ առաւօտները նկատվում են թելերի
նման մարմիններ, որոնք չեն տարբերվում սեր-
մի մասերից: Քնից արթնանալով երբեմն ոմանք
զգում են անդամի ծայրը թաց, միզանցքի ծայ-
րին չնչին քանակութեամբ մածուցիկ հիւթ, որը
և ընդունում են որպէս սերմ: Սակայն դա սերմ
չէ, այլ մի ֆիզիօլօգիական երևոյթ է և կայա-
նում է հետևեալում: Միզանցքի պատերը քնքոյշ
և թաց մնալու համար միշտ արտադրվում է մի
տեսակ թանձրոտ հիւթ: Մէկ կազմուածքում դա
շատ է արտադրվում, միւսի մէջ՝ քիչ: Գիշերը,
քնած միջոցին ամբողջ արտադրված այդ ճար-
պային հիւթը հաւաքվում է միզանցքում և ա-
ռաւօտեան միզելիս միանգամից դուրս գալիս
տեսանելի կերպով: Այս հեղուկը առատօրէն ար-
տադրվում է նաև ցերեկը, երբ առաջանում է
զրգիւ և էրէկցիա: Բացի այս՝ փորկապութեան
ժամանակ շագանակաձև գեղձը ճնշվելով անցնող
կոշտ մասերից թողնում է իր հեղուկը, որը նոյն-
պէս նման է սերմի և յաճախ շփոթվում է սեր-
մի հետ: Ուրեմն վերոյիշեալ գէպերը սպէրմա-

տօրրէա չեն և անվնաս են օրգանիզմի համար, ուստի և չը պէտք է վախենալ: Որպէսզի կասկածը փարատվի և մարդ անհանգիստ չը լինի, կարծելով սեռական գործարանները թուլացել են, լաւ կը լինի իսկոյն այդ հեղուկը քննել տալ մասնագէտի մօտ, որը կը պարզէ ամեն ինչ: Իսկ երբ կը յայտնանագործվի իսկական սպէրմատօրէա, այն ժամանակ անմիջապէս պէտք է դիմել մասնագէտ հմուտ բժշկի և ժամ առաջ ամրացնել սեռական գործարանները: Ինչ վերաբերվում է բժշկութեանը, սա միևնոյն է երազախաբի և սպէրմատօրէայի համար: Դեղերից առաջ կարևոր է հիւանդի կողմից համբերութիւն և որոշ կենցաղավարութիւն ըստ բժշկի ցուցմունքի: Մենք այստեղ ուրիշ բժշկարանների հման չենք տալ դեղատոմսերի ցուցակներ, քանի որ դա աննպատակայարմար է և անմատչելի իւրաքանչիւր պատահական ընթերցողի համար: Ենթադրենք այս գրքում շարել ենք հարիւր բէցէպտ. հիւանդը առանց բժշկական կրթութեան չի կարող աչքը փակել և մատը դրած բէցէպտը ընտրել: Բացի այդ կան այնպիսի դեղեր, որոնք դեղատոմսերից չեն տրվում առանց բժշկի ստորագրութեան: Ուրեմն շահադիտական նպատակով և կամ գրքիս ծաւալը մեծացնելու հայեցակէտով չենք ղեկավարվիլ և անհասկանալի բէ-

ցէպտներ չենք մատուցանիլ ընթերցողին. այլ դրա փոխարէն խորհուրդ կը տանք նախ հեռու մնալ գայթակղեցուցիչ պայմաններից և չափաւորել ամեն մի բնական պահանջ, երկրորդ՝ առանց յետաձգելու դիմել բժշկի, որը կը նշանակէ համապատասխան դեղեր ըստ հիւանդութեան էութեան և աստիճանի: Մենք կը տանք խորհուրդներ և մի քանի բէցէպտներ այնպիսի մարդկանց համար, որոնք սաստիկ ամաչելուց գերադասում են հիւանդ մնալ, հիւծվել, քան թէ իրանց գաղտնի ցաւը յայտնել ում և իցէ: Մեր բէցէպտները պիտանի կը լինեն նաև այն գաւառացիների համար, որոնք հեռու լինելով բժշկական պոլսկտերից, անկարող են մեծ ծախսեր անել, գործը թողնել և գնալ քաղաք բժշկվելու. այդպիսիները կարող են բէցէպտը ուղարկելով քաղաք որևէ ծանօթի, պոստով ստանալ դեղը: Ներքոյգրեալ ընտրեալ բէցէպտները վերցրել ենք հռչակաւոր բժիշկների գրուածքներից, և նրանք անվնաս են նոյնիսկ այն դէպքում, երբ սխալ ընտրութեամբ գործադրվեն:

Երազախաբով և սպէրմատօրրէայով տառապող նիհար, քայքայված մարդիկ նախ պէտք է կազդուրեն իրանց թոյլ մարմինները սննդարար և դիւրամարս կերակրով. պէտք է խմեն ընտիր գինի քիչ քանակութեամբ, լինեն մաքուր օդի

մէջ. կատարեն չափաւոր մարմնամարզութիւն: Ուտելիքներից մեծ մասը պէտք է կազմեն—մրսաջուր (բուլիօն), խորոված միս, կաթ, քաղցր մածուկ, թերխաշ ձու, վայրի թռչուն, լաւ պանիր, կարագ, վէաչինա և այլն: Անհրաժեշտ է, որ նրանք միառժամանակ թողնեն սեռական վայելքները, խուսափեն գրգռիչ տեսարաններից, հարբեցողութիւնից, ծխելուց. մտաւոր և ֆիզիքական յոգնեցուցիչ աշխատանքներից պէտք է հեռու լինեն: Սերմնահոսութեան ժամանակ մեծ օգուտ է տալիս սառն ջուրը, որը գործադրվում է հետեւեալ ձևերով. սառն կիսավաննաներ (полуванны), նստավաննաներ (сидячая ванны), սեռական գործարանների լուացումներ սառն ջրով, սառնաղի շփումներ առաւօտները, գետում և ծովում լողացումներ: Այս բոլորը պէտք է ի կատար ածել մինչև ճաշ. երեկոյեան քնելուց առաջ ջրի զանազան մանիպուլիացիաները ոչ միայն օգտակար չեն, այլ ընդհակառակն, կարող են երազախաբ պատճառել: Երազախաբ է պատահում, երբ քնելուց անմիջապէս առաջ ընթրում են և ստամոքսը կերակրով լցնում:

Պէտք է խուսափել տաք ու փափուկ անկողնից, որի ջերմութիւնը տաքացնելով ողնուղեղի սեռական կենտրոնը, ենթարկում է երազների և սերմնահոսութեան: Դեղերից ամենաէա-

կանը և զօրաւորը երկաթն է և իր տարբեր ձեւափոխութիւնները: Բայց քանի որ երկաթը ունի մի վատ յատկութիւն, այն է պատճառում է փորկապութիւն և փչացնում է ատամները, անպայման պէտք է լաւ ընտրութիւն անել երկաթի դեղերի մէջ, համակերպվելով ստամոքսի և ատամների զրութեանը: Երկաթագեղերից առաջին տեղը բռնում է phosphorus ferri cum ammonio citrico, որը ընդունվում է սիրօպի ձևով, այսինքն sirupus phosphor. ferri cum ammonio citrico, 2—3 անգամ թէյի գդալով, կամ թէ

Rp. Phosphor. ferri cum ammon. 0,15

Aq. destillat. 180.0

MDS. 3—4 անգամ օրէնը հացի գդալով: Եւ կամ փոշու ձևով— $\frac{1}{2}$ գրան վերոյիշեալ դեղից 6 գրան շաքարի հետ: Երկաթի միւս արտադրութիւններից ընտիրներն են.—ferratin, օրական 3 անգամ 5 գրան փոշի. ferrum hydrogeno reductum—նոյն չափով. liq ferri peptonati Pizzol, օրը 3 անգամ ուտելուց յետոյ մի թէյի գդալ ընդունել կէս բաժակ կաթով. Բլօդ-ի պիլլաները—օրը 2—3 անգամ 3—4 հապ միանգամից. ferrium lacticum—2 գրան 2—3 անգամ և այլն: Օգտակար և կազդուրիչ ազդեցութիւն ունի նաև խինան, փոշու և հեղուկի ձևերով.—

chininum muriaticum-5 գրան, օրէնը 3 անգամ
կամ tinctura chinae composit.—20 կաթիլ խմել
ջրի մէջ օրէնը 3 անգամ: Զղերը հանգստացնող
ներգործութիւն է անուամբ բրօմը և իր աղերը.
օրինակ՝

Rp. Kali bromati 6.0

Aq. destillat. 180,0

Mucil. salep. 15,0

MDS. օրական 3 անգամ հացի գդալով:

կամ թէ Rp. Natri bromati 10,0

Aq. destillat. 200,0

MDS. 3 անգամ հացի գդալով:

Բացի վերոյիշեալներից մենք կը տանք նա-
և մի քանի ազդեցիկ բէցէպտներ, միաժամանակ
խորհուրդ տալով—առանց բժշկական անձի ցուց-
մունքի, ինքնուրոյն շաբլոն ընտրութեամբ չօգ-
տվել: Աւելորդ է յիշել այն վատ սովորութիւ-
նը, որ երբ մէկը բժշկվում է որևէ դեղով, իր
ընկերներին կամ բարեկամներին լաւութիւն
անելու նպատակով այդ բէցէպտն է առաջար-
կում առանց բժշկի: Սակայն պէտք է գիտենալ,
որ եթէ մի որոշ դեղ օգնեց որևէ մարդու,
նոյն դեղը անպայման չի կարող բուժել և ու-
րիշ անձի միևնոյն հիւանդութիւնները, որովհե-
տե կազմուածքները տարբեր են լինում և միև-

նոյն դեղը ազդելով մէկի վրայ, չի ազդում միւ-
սի վրայ:

Հնացած երազախաբի և սպէրմատօրրէայի
դէմ լաւ են ազդում հետեւեալ դեղերը:

Rp. Kali bromati 10,0

Lupulini

Camphor. ras. aā 0,5

Mfp. div. in part. aeq. № 10.

DS. երեկոները ընդունել երկու պարաշօկ,
մէկը միւսից մի ժամ յետոյ:

Rp. Clandul. Lupulin.

Sacchar albi a i 0,5

Mf p. d. t. d. № 4.

DS. երեկոյեան ընդունել մէկ պարաշօկ:

Rp. Decoef. lich. islandic. 4.0—180,0

Elex. acidi Nalleri 2,0

Sir. simpl. 15,0

MDS. 2 ժամը մի անգամ հացի գդալով:

Ծանր դէպքերում մեծ օգուտ է բերում է-
լէքտրականութիւնը, որ անպայման պէտք է
գործադրէ բժիշկը կամ բանիմաց փորձված ֆէլդ-
շերը:

ՏՐԻԳԵՐՈՎ ՈՒ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱՍՏԵՐՈՎ ՎԵՐԱԿԱՆ ԴԷՄ ՆԱԽԱԳԻՈՒԹՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ:

Քանի որ ներկայ հասարակական կազմի ու կեանքի գայթակղեցուցիչ պայմանների շնորհիւ, մարդիկ, կամքի ուժից զուրկ, չեն կարողանում բարոյական մաքուր շաւղով ընթանալ և անձնատուր են լինում սեռական ցոփ կեանքի, ուստի վեներական ախտերով չը վարակվելու համար պէտք է գիտենան միքանի պարզ ու հեշտ գործադրելի կանոններ:

Նախապաշտպանողական բոլոր միջոցներից և դեղերից ամենափստահելին է զօնդօմը: Մաշափազանց նուրբ, բարակ թաղանթ է, որը յարաբերութիւնից առաջ հագցնվում է առնանդամի վրայ մինչև արմատը: Եթէ կինը վարակված լինի որևէ ախտով, սրա թոյնը կը կաշի թաղանթին և իսկոյն չի կարող նրա միջով թափանցել առնանդամի մէջ: Մերձաւորութիւնից յետոյ ըզգուշութեամբ պէտք է յետ քաշել զօնդօմը ու դէն գցել: Որպէսզի զօնդօմը հագցնելիս չը կաշի

մսին ու չը ցաւեցնէ, լաւ կը լինի առաջուց քիչ վազելին քսել անդամին, յետոյ միայն հագցնել: Գօնդօմը լինում է թէ տղամարդի և թէ կանացի: Տղամարդինը արժէ 10—40 կոպէկ: Շատերը առարկում են, որ իբր թէ զօնդօմը թուլացնում է հաճոյքը, սակայն դա սխալ է. թէկուզ



Նկար 11.


Տղամարդի զօնդօմը ոլորած.

հէնց այդպէս էլ լինի, աւելի լաւ է փոքր ինչ պակաս հաճոյք վայելել մի րոպէում, քան թէ վարակվել զանազան ախտերով, ու յետոյ ամիսների, տարիների ընթացքում դառնութիւն քաշել:

1. Պէտք է խուսափել յարաբերութիւն ունենալ այն կնոջ հետ, որի մարմնի վրայ կան մեծ քանակութեամբ պզուկներ ու խոցեր, որովհետև նրանք կարող են վարակիչ լինել:

2. Մերձաւորութեան միջոցին երբէք չը համբուրվել օտար կնոջ հետ, մանաւանդ շրթունքներից, որովհետև սիֆիլիսի և թորախտի բացիւնները շատ դիւրին կերպով անցնում են բերանից բերան համբուրվելիս: Օտար կնոջ հետ յարաբերութիւնից յետոյ անմիջապէս պէտք է միգել: Մի բժշկի կարծիքով դա անպայման նպա-


տակայարմար և միակ միջոցն է վարակվելուց
զերծ մնալու: Եթէ մերձաւորութեան ժամանակ
հիւանդութեան թոյնը ներս է մտել տղամար-
դի միզանցքը, միզելիս նա յետ է մղվում մէզի
հետ. իսկ սրսկելով կարելի է, ընդհակառակն,
թոյնը աւելի խորը տանել և վարակել: Թէպէտ
մերձաւորութիւնից անմիջապէս յետոյ անգամը



Նկար 12.
Կանանց գոնդոմ.

կանգնած ըռպէին դժուար է միզել, բայց և այն-
պէս նրա թուլանալուն պէս պէտք է միզել: Մի-
զելուց յետոյ հարկաւոր է լուացումն կատարել
զանազան դեղային լուծուածքներով, որոնք ըն-
դունակ են սպանել հիւանդութեանց բացիւններին:
Մի կողմ թողնելով զօրեղ և թունաւոր դեղերի
լուծուածքները, որոնք դեղատոնից արվում են
միմիայն բժշկի ստորագրութեամբ, մենք կը

թվենք այնպիսի միջոցներ, որոնց միշտ և ամեն
որ կարող է ձեռք բերել առանց ժամանակ կորց-
նելու կամ բժշկի ստորագրութիւնը ստանալու:
Դրանք են—գինու քացախ, լիմօնի հիւթ, կար-
միր գինի, գինու սպիրտ, սապոնի սպիրտ, սապոն,
խլորաջուր, խլորակիր, սովորական աղ, բորակ,
կրաջուր, շիպ և այլն: Սրանց որեւէ մէկը փոքր
քանակութեամբ պէտք է լուծել մի քանի բաժակ
սովորական կամ զտած ջրի մէջ և լուանալ սե-
ռական գործարանները: Մերձաւորութիւնը
սակար է կնոջ ամսական արիւնհոսութեան մի-
ջոցին: Չը խօսելով կնոջ համար առաջացած
ծանր հետեւանքների մասին, կը յիշենք միայն
տղամարդի վնասները. առնանդամի գլուխը կեղ-
տոտ արիւնից կարող է բորբոքվել, անդամամաշ-
կի տակ կարող են առաջանալ բշտիկներ. բացի
այդ կարող է նորոգվել հին և խրոնիքական տրի-
պէրը. միզանցքը կարող է բորբոքվել և առնան-
դամի գլուխը ուռչել այսինքն կառաջանայ բա-
լեանիտ, որի մասին վերում էլ խօսել ենք: Լաւ
կը լինի սպասել արեան ընդհատվելուց դեռ էլի
3 օր, ապա մերձենալ: Վտանգաւոր է մերձա-
ւորութիւն ունենալ հարբած ժամանակ: Ծննդա-
բերութիւնից յետոյ հոսող հեղուկը կարող է բա-
նալ կեղծ տրիպէր և կամ հինը նորոգել:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
Յառաջաբան	2—4
I. Տղամարդի սեռական գործարանները	5—9
II. Տրիպեր (սուսունակ)	10—36
1. Տրիպերի վարակման նշանները և հետևանքները	12 — 18
III. Տրիպերի բարդութիւնները	
1. Տրիպերի առաջխաղացութիւնը	19 —
2. Շագանակաձև գեղձի բորբոքումը	19 — 20
3. Ամորձիքների (ձուան.) բորբոքումը	21 — 23
4. Միզապարկի բորբոքումը	23 — 24
5. Խոշոր թարախակ. միզանցքում	24 — 25
6. Արիւնահոսութիւն միզանցքից	25 —
7. Աչքերի բորբոքումն սուսունակից	25 — 26
8. Երիկամունքների բորբոքումն	27 —
9. Յօդերի սուսունակային բորբոքումն	27 — 29
10. Միզանցքի նեղութիւնը	29 — 30
11. Ծակոցներ, ալրոցներ և այլն միզան.	30 — 31
12. Անգամի գլխի և թլպատի բորբոք.	31 — 33
13. Բուբօն տրիպերից	33 — 34
14. Տրիպերի ընդհանուր ազդեցութիւն- նը մարմնի վրայ	34 — 35
IV. Կեղծ տրիպեր	36—37
V. Տրիպերի բժշկութիւնը	38—50

VI. Դեղեր և խորհուրդներ տրիպերի բարդութիւնների ժամանակ	51—53
VII. Կնոջ սեռական գործարանները	54—57
Կնոջ արտաքին սեռակ. մասերը	57—60
VIII. Կանաց տրիպերը (սուսունակը)	61—65
IX. Բունոցի սուսունակը	66—69
X. Փափուկ շանկր	70—75
XI. Սիֆիլիս	76—92
1. Կոշտ շանկր (առաջին շրջան)	78 — 80
2. Սիֆիլիսի երկրորդ շրջանը	80 — 82
3. Սիֆիլիսի երրորդ շրջանը	82 — 86
XII. Սիֆիլիսի բժշկութիւնը	87—92
XIII. Քամոտութիւն	93—94
XIV. Ոտքերի քրտինքը և հոտը	95—96
XV. Բերանի վատ հոտը	97—98
XVI. Ոչլոտութիւն	99—104
XVII. Մայասիլ	104—109
XVIII. Օնանականութիւն	110—134
XIX. Երազախաբ	135—139
XX. Սպերմատօրէա	140—149
XXI. Նախազգուշութեան կանոններ	150—153





Յարութիւն (Արտէմ) Նսայեանի լոյս տեսած
աշխատասիրութիւնները՝

	դիւր
1. Խորտակուած սէր (վէպիկ) սպառված .	30 կ.
2. Գրքացի ստրուկներ (պատկեր) սպառված .	5 »
3. Կեանքի ըմբռնից (վէպիկ) սպառված .	25 »
4. Էմիլ Զօլա (փոքրիկ տեսութիւն) սպառվ.	5 »
5. Լօխմանի հէքիմը (պատկեր) սպառված .	8 »
6. Բաֆֆի (համառօտ տեսութիւն) սպառված	10 »
7. Կեանքի խորշերից (պատկերներ) սպառված	20 »
8. Առաջին մուրացկանութիւնը (պատ.) սպառ.	8 »
9. Արքեպոպի զատիկը (պատկեր) սպառված .	3 »
10. Թշուառներ (պատկեր) սպառված .	8 »
11. Միկնոյն դազադում բ. տպ. (պատկերա- զարդ) հայ-թրք. կռիւներից .	8 »
12. Սիրոյ Յարութիւնը (պատկեր) .	10 »
13. Հայ կտրիճները (պատկեր հայ-թրք. կռիւ).	7 »
14. Տղամարդի սեռական կեանքը (բժշկական)	30 »
15. Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան .	50 »

Թարգմանութիւններ

1. Անիւտա (Չեխովից) .	3 կ.
2. Դիմակ (Չեխովի) .	5 »
3. Նինիի համար .	3 »
4. Ճապոնիա .	25 »
5. Արքեպոպիական դէմ .	15 »
6. Կին և նրա տնտեսական դրութիւնը Կլար Յետկինի .	15 »
7. Մշտական զօրք և միլիցիա .	12 »





807
20966
281
807 2

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊԵԿ

Իմ հեղինակած, կազմած և թարգմանած
գրքերիս համար դիմել Թիֆլիս՝ «Գուտառէնքէրգ»,
«Կենդրոնական», «Թառայեանցների», «Կովկա-
սեան», «Փարոս» և միւս հայ գրախանութներին.
կամ թէ ինձ՝ Թիֆլիս—Семеновская ул. № 9.
Գումարով ցանկացողները կունենան զեղջ ըստ
պահանջած քանակի, որի համար դիմել ինձ հա-
մակով:

«Ազգային գրադարան»



NL0267174

2616